

Կ. ԹԱՌՈՒՅԱՆ

Բողոքական  
շարժումները  
ՍԱՍՈՒՆՈՒՄ

«Հայաստան»

Կ. ԹԱՌՈՅԱՆ

*Handwritten signature*

*Handwritten in red ink:*  
Համալսարան  
Հայաստան  
Արմենիա  
1890-1894

605

“ԱՅԱՍՏԱՆ” ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 1966

Այս գրույկում արխիվային և հրատարակված նյութերի հիման վրա պատմրվում է սուրբանական կառավարության, շահագործող վերնախավերի արհեստական ու ազգային նեշման դեմ Սասունի 1890—1894 րվականների ժողովրդական շարժումների մասին:

Князь Зограбович Тароян  
Народные движения в Сасуне

(1890—1894 гг.)

(На армянском языке)

Издательство «Айастан», Ереван, 1966

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴՈՒՄ

1. ՍՈՒՎՔԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ  
ԱԶԳԱՅԻՆ ԴԱԺԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի վերջին բառորդում Թուրքիան շարունակում էր մնալ արևելյան տիպի ֆեոդալական բռնապետական երկիր՝ հետամնաց տնտեսությամբ, պետական և հասարակական հետամնաց կարգերով ու կուլտուրայով: Թուրքական սուլթանության ժանր լծի տակ հեծող բազմաթիվ ազգեր ու ժողովուրդներ, այդ թվում նաև թուրք աշխատավորությունը, դարձել էին պետության, երկրի շահագործող դասակարգերի հարստահարումների, կեղեքումների ու բռնությունների օբյեկտ: Այդ ճեշումն ու կողոպուտը առանձնապես դաժան ձևվեր էին ընդունել Արևմտյան Հայաստանում:

Արևմտյան Հայաստանում հիմնական բնակչություն հանդիսացող հայերից բացի ապրում էին նաև քրդեր, թուրքեր, ասորիներ, չերքեզներ, հույներ և այլ ժողովուրդներ: Կոստանդնուպոլիսի

Հայոց պատրիարքարանի 1882 թվականի տվյալներով թուրքական տիրապետության տակ ապրող հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2.660.000 մարդ, որից Վանի վիլայեթում՝ 400.000, Սվազի վիլայեթում՝ 280.000, Խարբերդի վիլայեթում՝ 270.000, Բիթլիսի վիլայեթում՝ 250.000, Դիարբեքիի վիլայեթում՝ 150.000, Էրզրումի վիլայեթում՝ 280.000, Կիլիկիայում՝ 380.000, Ասիական Թուրքիայի մնացած մասերում՝ 455.000, Եվրոպական Թուրքիայում՝ 195.000: Որոշ պատմական աղբյուրների վկայությամբ թուրքական կայսրության մեջ հայերը կազմում էին բնակչության ավելի քան  $\frac{1}{7}$  մասը, այսինքն՝ 3 միլիոնից ավելի (օսմանյան կայսրության բնակչության թիվը 1887 թվականին հասնում էր 21 միլիոն 533 հազարի)<sup>1</sup>:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ սուլթանական կառավարությունը հասկանալի պատճառներով ամեն կերպ աշխատում էր ծածկել, գաղտնի պահել կամ պակաս ցույց տալ Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայ բնակչության ճիշտ թիվը<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 5, 1895, մայիսի 20:

<sup>2</sup> Թուրքիայի ազգաբնակչության հարցով հետաքրքրվող եվրոպացի շատ հեղինակներ արևմտահայության թիվն զգալի շափով պակաս են ցույց տվել, որովհետև նրանք օգտվել են թուրքական կառավարության հետագա շրջանի պաշտոնական տվյալներից, իսկ այդ տվյալները կեղծված էին, անբավարար ու թերի:

Հայ բնակչության թիվն ավելի պակաս ցույց տալու ձգտումը սուլթանական կառավարությունը առանձնապես հանդես է բերում 1880—90-ական թվականներին: Դա որոշակիորեն արտահայտեց թուրքիայի արտաքին գործերի մինիստր Աբեդի փաշան՝ իր պատասխան-նոտաներից մեկում, որը նա 1880 թվականի հուլիսի 5-ին ուղարկել էր վեց մեծ տերությունների Կոստանդնուպոլսի դեսպաններին: Սուլթանի մինիստրը, կեղծելով իրականությունը, ճգնում էր հավաստիացնել, թե ամբողջ կայսրության մեջ հայերի ընդհանուր թիվը հասնում է միայն 700 հազար մարդու, իսկ հայկական վիլայեթներում նրանք կազմում են բնակչության միայն 17 տոկոսը՝ 79 տոկոս մահմեդականներին դիմաց<sup>1</sup>:

Թուրքական կառավարության այդպիսի քաղաքականության նպատակն էր՝ «հիմնավորել» այն գիծը, որ իբր թե հայկական վիլայեթներում հայերը, կազմելով բնակչության աննշան փոքրամասնություն, չեն կարող ինքնավարություն ունենալ, ինչպես և քողարկել հայերի նկատմամբ կիրառած իր ջարդարարական քաղաքականությունը:

Սուլթանական կառավարության հետագա ամբողջ քաղաքականությունը գնում էր այն ուղղու-

<sup>1</sup> «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», Москва, 1896, стр. 94. Տե՛ս նաև «Փորձ» № 6—7, 1880, էջ 216:

թյամբ, որ տնտեսական, քաղաքական և ազգային դաժան ճնշման միջոցով նախ կրճատի հայերի թիվը, ապա ֆիզիկական բնաջնջման միջոցով հայկական վիլայեթներն ամբողջովին մաքրի հայերից: Այդ քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում գնալով հայերի թիվը անընդհատ նվազում էր: Արևմտյան Հայաստանի աշխատավորությունը դաժան շահագործման ու կեղեքման էր ենթարկվում սուլթանական կառավարության, թուրք ու քուրդ ֆեոդալների, պետական պաշտոնյաների, հարկահանների, վաշխառուների, ինչպես նաև հոգևոր հաստատությունների կողմից:

Արևմտահայ գյուղացիության տնտեսական ծանր վիճակը ամենից առաջ նրա նկատմամբ թուրքական ռազմա-ֆեոդալական բռնապետության վարած հողային քաղաքականության հետեվանքն էր: Թուրքիայում հողը կենտրոնացած էր հիմնականում թուրք ու քուրդ ֆեոդալների և հոգևոր հաստատությունների ձեռքին: Վ. Ի. Լենինի նշանավոր միտքը այն մասին, որ «Մակեդոնիայում կալվածատերերը... թուրքեր և մահմեդականներ են, իսկ գյուղացիները — սլավոններ ու բրիտանոնիաներ: Դրա համար էլ դասակարգային հակասությունները սրվում են կրոնական ու ազգային հակասություններով»<sup>1</sup>, լիովին վերաբերում է նաև Արևմտյան Հայաստանին: Հայ գյու-

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 503:

ղացին այնտեղ փաստորեն զրկված էր սեփական հողակտոր՝ ապրուստի հաստատուն աղբյուր ունենալու իրավունքից:

Իրավականորեն Թուրքիայում հողի գերագույն սեփականատերը պետությունն էր, սուլթանը: Սակայն հողի նկատմամբ պետության ունեցած գերագույն իրավունքը փաստորեն խախտվեց 1858 թվականի ապրիլի 21-ի օրենքով, երբ «իրավականորեն ճանաչվեց կալվածատիրական ու գյուղացիների ծխական հողատիրությունը և թույլ տրվեց» մասնավոր մարդկանց «վաճառել ու գնել իրենց հողաբաժինները, որպես մասնավոր սեփականություն»: Դրանով իսկ հողի նկատմամբ պետության գերագույն սեփականատիրական իրավունքը փաստորեն ձեռնադրվեց, և հողերը շարունակ վաճառվում, գնվում կամ գրավ էին գրվում մասնավոր մարդկանց կողմից<sup>2</sup>: Այդ պայմաններում թուրք ու քուրդ ֆեոդալները դիմում էին ամեն տեսակի ապօրինի միջոցների և բռնության միջոցով էին գյուղացիների, առաջին հերթին՝ հայ գյուղացիների օգտագործած հողերը:

<sup>1</sup> Ա. Համբարյան, Ազրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Երևան, 1965, էջ 53—54:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 271—272:

Հայ, թուրք և քուրդ գյուղացիները տնտեսական ու քաղաքական ծանր ճնշման ենթարկվելով՝ ընկնում էին կալվածատերերի, վաշխառուների ու դրամատերերի լծի տակ:

Փավառական հարստահարությունների մասին կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի կազմած տեղեկագրերում բերված են բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես բեգերն ու աղաները, հենվելով կառավարության պաշտպանության վրա, խլում էին գյուղացիների հողերը, այգիները և սեփականացնում: Շատ փաստեր կան այն մասին, որ կառավարության թողտվությամբ աղաներն ու բեգերը զենքի ուժով գրավում էին ամբողջ գյուղեր, դուրս քշում բնակչությանը և սեփականացնում նրանց հողային հարստությունը: 1874 թվականին Վանի վիլայեթում հողային հափշտակություններ են կատարվել 160, իսկ Դիարբեքիրի վիլայեթում՝ 110 հայաբնակ գյուղերում<sup>1</sup>: Հողային հափշտակումները մեծ շահերի էին հասնում նաև հայկական մյուս վիլայեթներում: «Մասիս» թերթի 1879 թվականի մայիսի 20-ի համարում նշված է, որ թուրք և քուրդ ֆեոդալները միայն Բիթլիսի վիլայեթում, տարբեր ժամանակներում, բռնագրավել են 252.000 հեկտար հողամաս<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Տեղեկագիրք գավառական հարստահարությանց», Կ. Պոլիս, 1876, էջ 28, 36:

<sup>2</sup> Տե՛ս «Մասիս», 1879, մայիսի 20:

Հաճախ էր պատահում, որ դանադան առիթներով իշխանություն տեղական օրգաններն ու նրանց պաշտոնյաները բռնագրավում էին հայ գյուղացիների հողերը և դրանք վաճառքի հանում: Մուշի հոգևոր առաջնորդի փոխանորդ Գրիգորիոս Աղվանյանցը 1871 թվականի ապրիլի 14-ին գրում է՝ այժմյան վալի փաշայի (Բիթլիսի) հրամանով 24 տնտեսություն ունեցող Մուշի դաշտի Քարձոր հայաբնակ գյուղի 20 տնտեսությունների հողերը աճուրդի են հանվել: Սակայն այդ հողերը հայերը «առնելու անկարող են, զի հախիխարի (պետական) տուրք չլինելու համար հասարակ գնով չեն տա անոնց, կառավարությունըն ալ շթողուր, որ իրենց ապրուստի համար» այս տարի հայերը ցանեն գյուղի հողերը<sup>1</sup>:

Հայ գյուղացիների հողավրկումը մեծ շահերի հասած XIX դարի վերջերին, երբ սուլթանական կառավարությունն այդ նպատակի համար սկսեց օգտագործել քրդական վերնախավին: Շրջանցելով մինչ այդ եղած օրենքները, կառավարությունը հաճախ հայ գյուղացուն օգտագործման հանձնելով հողը միաժամանակ հանձնում էր նաև քուրդ վերնախավին՝ արհեստականորեն սրելով նրանց հարաբերությունները: Եվ որովհետև կա-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԻ Մինիստրների սովետին առընթեր Մ. Մաշոսցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարանի) արխիվ, ֆ. Կաթողիկոսական զիվան, ց. 19, թղթապ. 219, վավ. 138, էջ 21:

ոավարութիւնը կանգնած էր բուրդ վերնախավի թիկունքում, այդ հողերն ամբողջովին անցնում էին նրան:

Հայ գյուղացիների հողային իրավունքներին առանձնապես մեծ հարված էր թուրքական կառավարութեան ընդունած այն օրենքը, որով եթե մեկը տասը տարի և ավելի ժամանակով, թեկուզ և բռնի ուժով, օգտագործել է որեէ մեկին պատկանող հողը, ապա դա վերջնականապես հանձնւում էր նրա օգտագործմանը: Այդ օրենքի հիման վրա քրդական բեգերի ձեռքն են անցնում հայ գյուղացիներին պատկանող այն արոտավայրերը, որոնք օգտագործւում էին նրանց կողմից: Գրանից առանձնապես տուժում էին Սասունի հայ գյուղացիները, որոնց հողերի մեծագույն մասն արոտավայրեր էին: Զրկվելով հողից, գավառի հայ գյուղացիները գաղթում էին դեպի Ալաշկերտ, Մուշի դաշտ, Բուլանլիս (թեև այնտեղ էլ վիճակը լավ չէր), իսկ ոմանք էլ՝ մինչև Ռուսաստան և արտասահմանյաճն այլ երկրներ: Եվ դա է պատճառը, որ Մուշի դաշտի Մանք, Շեխբրիմ, Խարտոս, Խարս, Արտոնք, Երըշտեր, Մղակ, Բերդակ և այլ գյուղերի բնակչութեան մեծ մասը սասունցիներ էին<sup>1</sup>:

Հայերի հողազրկման միջոցով սուլթանական կառավարութիւնը նպատակ ուներ՝ 1) «հայկա-

<sup>1</sup> Տե՛ս Սարգիս և Միսաք Բեդլաններ, Հարազատ պատմութեան Տարոնո, Կահիրե, 1962, էջ 150:

կան վիլայեթներում հայերին փոխարինել» մահ-մեղականներով ու «վերջնականապես խեղդել հայերի ազգային աղատագրական շարժումները» և 2) իր ձեռով «լուծել հայկական հարցը»<sup>1</sup>:

Արևմտահայութեանը ճգնում էր հատկապես հարկային ծանր լուծը: XIX դարի վերջերին նա զետուեթանը վճարում էր բազմաթիւ հարկեր (երկրագործական հարկ, գլխահարկ, կալվածային հարկ, կրթական հարկ, զբաղմունքի հարկ, ոչխարի հարկ, ճանապարհների հարկ և այլն)<sup>2</sup>:

Հարկերի մեծագույն մասը ծանրացած էր աշխատավորութեան վրա. կալվածատերերը, դրամատերերը, վաշխառուները գրեթե ազատ էին հարկերից: Նրանցից ամենահարուստներն անգամ տարեկան հաղիւ վ 30—40 ուրլի էին վճարում պետութեանը, մինչդեռ կեղեքված գյուղացին միջին հաշիւով տալիս էր 100 ուրլուց ոչ պակաս<sup>3</sup>: Ամե-

<sup>1</sup> Տ. Սարգսյան, Յամանյան կառավարութեան ազրարային բազարականութիւնը Բուրջահայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին (տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» № 7, 1948, էջ 49):

<sup>2</sup> Տե՛ս Центральный государственный военно-исторический архив СССР (այսուհետև՝ ЦГВИА), ф. 450. л. 102, л. 46. Տե՛ս նաև «Արձագանք» № 80, 1892, հուլիսի 22 (10); Ա.Պո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 80:

<sup>3</sup> Տե՛ս «Մշակ» № 8, 1895, հուլիսի 21; Տե՛ս նաև «Արձագանք», № 80, 1892, հուլիսի 22 և այլն:

նածանրը երկրագործական հարկն էր, որը հավասարվում և հաճախ էլ գերազանցում էր գյուղատնտեսական արտադրանքի մեկ տասնորդին: Եթե նկատի ունենանք նաև այն, որ գյուղացու յուրաքանչյուր ոչխարի համար տրվում էր 3 ղուրուշ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր արական սեռի համար՝ 40 ղուրուշ իբրև գլխահարկ, այն ժամանակ բոլորովին ճիշտ պետք է համարել այն միտքը, թե «գյուղացին կառավարութեան ոսկու հանքն էր»<sup>1</sup>:

Գյուղացիների, այդ թվում նաև թուրք գյուղացիների, հարստահարումը և ճնշումը սաստկանում էին նաև պետական պաշտոնյաների ու հարկահանների շարաշահումներով: Ոտնահարելով ամեն մի օրենք, պետական պաշտոնյաներն ու հարկահաններն իրենց ցանկացած շահով հարկ էին վերցնում գյուղացիներից. նրանք հաշվի չէին առնում գյուղացիների անասունների գլխաքանակի կրճատումը, բարձր էին գնահատում գյուղացիների ունեցվածքը կամ ստացած եկամուտը, գյուղացիներին աշխատեցնում էին ավելի շատ, քան նախատեսվում էր օրենքով, հարկահանութեան ժամանակ ապրում էին գյուղացիների հաշվին և այլն: Սրանցից ետ չէին մնում, իսկ հաճախ նույնիսկ գերազանցում էին, պետական հարկերի հավաքման իրավունքը աճուրդով վերցնող կապալառուները, որոնք գյուղացիներին կողոպտելու

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 8, 1895, հուլիսի 21:

միջոցների մեջ խտրութեան չէին դնում՝ թալանում էին նրանց ունեցվածքը, շարամտորեն ձրգ-ձրգում էին մթերային հարկերի գանձումը, իսկ գյուղացին առանց հարկ վճարելու իրավունք չուներ տուն տանելու իր բերքը, որի հետևանքով օրերով ու շաբաթներով այն մնում էր բաց երկրնքի տակ և փշանում: Գյուղացիական փակ տնտեսութեան պայմաններում կապալառուները և հարկահանները հաճախ պահանջում են գյուղացիներից՝ ամբողջ հարկերը վճարել դրամով: Դա հասցնում էր նրան, որ հարկատուները դրամ ձեռք բերելու համար իրենց մթերքները վաճառում էին շնչին գներով:

Օտնը հարկերն ու նրանց հավաքման կեղեքիչ եղանակները XIX դարի 60-ական թվականներից սկսած ավելի որոշակիորեն արտահայտվում էին Սասունում: Այս շեռնային, կղզիացած գավառը, որը 1850-ական թվականին փաստորեն ղրկվել էր կիսանկախ վիճակից, հանդիսանում էր ամեն տեսակի կամայականութունների վայր: Գլխահարկը, որ 40 ղուրուշ էր, Սասունում հասնում էր 60 և ավելի ղուրուշի: Արոտավայրերում ոչխարի արածացման համար օրենքով սահմանված էր 3 ղուրուշ, իսկ Սասունում այն հասնում էր 5 ղուրուշի: Տասնորդական տուրքը դարձել էր յոթերորդական, իսկ անցնելով կապալառուների ձեռքը՝ է՛լ ավելի էր բարձրանում և համարյա հա-



վասարվում գյուղացու ստացած արդյունքների մեկ քառորդին<sup>1</sup>։

Սասունում գյուղացիների վրա ծանր բեռ էին նաև ֆեոդալներին տրվող հարկերը, որոնք տեղական բարբառով կոչվում էին «պեշ», «աղայություն»<sup>2</sup>, «ղֆրտի» (ղաֆիրություն) և այլն։ Այդ հարկերը գյուղացիները վճարում էին ֆեոդալներին։ «Պեշը» բեկի կամ աղայի հողատիրական իրավունքի համար տրվող տուրքն էր։ Սա նման էր պետութայնը վճարվող տասնորդին, իսկ «աղայությունը» մի տեսակ գլխահարկ էր, որ սասունցի գյուղացին պարտավոր էր վճարել իր տիրոջը<sup>3</sup>։

Քուրդ ֆեոդալները հաճախ թե՛ պեշը և թե՛ աղայությունը վաճառում էին միմյանց։ Երբեմն պատահում էր, որ պեշը պատկանում էր մի ֆեոդալի, իսկ աղայությունը՝ մի ուրիշի։ Դա արդեն մեծ շարիք էր, որովհետև նրանք առանձին-առանձին վերցնում էին համարյա նույնքան հարկ, ինչքան որ վերցնում էր այդ երկու իրավունքների տեր մի ֆեոդալ։ Մանր էր նաև զաֆիրություն կոչված տուրքը, որն անգամ ձևական նկարագրություն չունի։ Այն կազմված էր գլխավորապես գյուղատնտեսական մթերքներից ու հագուստեղե-

նից<sup>1</sup>։ Բացի դրանից, ամեն մի հայ աղջիկ ամուսնանալիս իր զալանի մի մասը տալիս էր աղային։ Այդ՝ արդեն տուրքի ձև ստացած մուծումը կոչվում էր ավնի<sup>2</sup>։ Եվ հենց Աբղուլ Համիդի անձնական քարտուղար Մուստաֆա Նեղիմը «Հայ եղեռն» հուշագրում խոստովանում է, որ թուրք և քուրդ ֆեոդալները հայ գյուղացիներից հավաքում էին անգամ կարպետի, թաղիքի, շերեփի, գզայի, կողովի և նույնիսկ շվանի նման հասարակ գույք<sup>3</sup>։

Արևմտահայ գյուղացիների ծանր կացութայն մասին բավականին որոշակի պատկերացում է տալիս 1872 թվականի ապրիլի 10-ին Մուշի հոգևվոր առաջնորդի փոխանորդ Գրիգորիոս վարդապետի ղեկավարած կոստանդուպոլսի հայոց պատրիարքին և «աղզային քաղաքական ժողովի ատենակալներին»։ Այնտեղ ասված է. «Մերազնյաց դաս մը ժողովուրդ, որ ի Բռնաշեն, ի Խուսթ, ի Սասունը և ի Շատախ գավառներ՝ Քյուրդերու հետ խառն կրնակին, նոցա գլխավորներուն, որ խաֆիր կըսվին, ճորտ լինելով ամենազառն կենաց վիճակված են։ Դաս-դաս նոցա բաժին եղած՝ յուրաքանչյուրին իբրև հպատակ և սեփականություն համարված։ Այդ մար-

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 8, 1895, հունվարի 21։

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ» № 9, հունվարի 24։

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը։

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 9, 1895, հունվարի 24։

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը։

<sup>3</sup> Տե՛ս Մուստաֆա Նեղիմ, Հայ եղեռնը, Գահիրե, 1925, էջ 39։ Տե՛ս նաև «Մասիս», 4, Պոլիս, 1872, էջ 1239։

ոսկերայ վայրենի գաղան խաֆիրներ՝ ինքնագլուխ և ապստամբ վիճակի մեջ լինելով՝ իրենց ճորտ հայերը՝ կանամբ և որդվովք, շարժական և անշարժ կալվածքներով իրարու ծախելու սովորություն ունեն։ Այնուհետև զեկուցագրում հիշատակված են հայ գյուղացիների բոլոր պարտավորությունները, պարտադիր սովորություն դարձած «նվիրատվություններն» ու անձնական ծառայությունները բուրդ կալվածատերերին, տրված է թուրք պաշտոնյաների ու հարկահանների մեծ շափերի հասնող շարաշահումների ու զեղծումների նկարագրությունը։ Նրանում թվարկված են գյուղացիների կողմից իրենց ֆեոդալ տերերին տրվող հետևյալ շափի բնամթերքները և առարկաները. «... 7 բեռ ցորեն... 1 պաճար, 5 ոչխար, 2 լիտր յուղ, 2 լ. ծխախոտ, 1 զուլգ զանգապան, 1 դ. գուլպա, 1 դ. խունճան, 1 դ. զոգնոցի ժապավեն, 2 ունկի վառոդ, 2 ուն. կապար, 2 ուն. կանափ, 5 ուն. ձեթ, 5 հատ պուտուկ, 2 շերեփ, 30 գդալ, 4 թի, 2 կողով, 6 ցախավել, 1 դահուկ, 4 հավ, 2 աքաղաղ, 10 սարակ, 6 հարոր, 12,5 ստակ և տարին երկու անգամ ունեցած ոչխարաց կաթ...»<sup>1</sup>։

Այս թվարկումը ոչ միայն վեր է հանում հայ

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան), արխիվ, ֆ. Կաթողիկոսական դիվան, ց. 19, թղթապ. 219, վավ. 152, էջ 30—33; Տե՛ս նաև վավ. 130, էջ 9—10։

գյուղացու նյութական պարտավորությունների շաֆը, այլև երևան է բերում տիրապետող տնտեսության բնույթը։

Արևմտահայ աշխատավորությունը հարստահարվում ու կողոպտվում էր նաև հայ մեծատունների, վաշխառուների և կրոնական հաստատությունների կողմից։ Իր տնտեսական կարիքները հոգալու, ծանր հարկեր վճարելու համար հայ գյուղացին դրամի կարիք էր զգում, որի համար ստիպված դիմում էր վաշխառուին և նրանից բարձր տոկոսներով պարտք վերցնում ու դրանով իսկ ստորագրում իր տնտեսական ինքնասպանության դատավճիռը. այլևս շկարողանալով վրձարել վերցրած պարտքը նա կախման մեջ էր ընկնում վաշխառուից։

Հայ աշխատավորությանը պակաս չէին կեղեքում նաև կրոնական հաստատությունները։ Հայկական վանքերն ու եկեղեցիները հայ բնակչությանից վերցնում էին բազմաթիվ հարկեր։ Յուրաբանչյուր հայ ընտանիք պարտավոր էր տարին մի քանի օր աշխատել վանքի կամ եկեղեցու հողի վրա, նրան տալ իր կովերի ու ոչխարների մեկ օրվա կաթը, կամ այդ բոլորի փոխարեն վճարել դրամ, տալ սահմանված քանակությամբ ցորեն, գարի, գառ, յուղ, պանիր, ձեթ, ձու և այլն<sup>1</sup>։ Հայ

<sup>1</sup> Տե՛ս Մ. Կ. Միրախուրյան, Նկարագրական ուղևորություն է հայրենակ դավառու Արևելյան Տաճկաստանի, Բ մաս, Կ. Պոլիս, 1885, էջ 214—217։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

աշխատավորներին կեղեքելու հետ միասին հայ նկեղեցին քարոզում էր «չդիմադրել տիրողին» և ստրկաբար տանել նրա բռնությունները:

Արևմտահայերի այս դժոխային կյանքի մասին գեռես 1860-ական թվականներին Մ. Նալբանդյանը գրել է. «Մենք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անշքացած, անապատացած աշխարհի վերա... ուր այժմ մեր խեղճ, անտեր և անօգնական ժողովուրդը միլիոնավոր բաղմությամբ թշվառության, հարստահարության և հուսահատության մինչև հնարավոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արյուն է քամում աչքերից, երբ լաց է լինում»<sup>1</sup>:

Ամեն տեսակի հարկեր և տուրքեր վճարելու, ընտանիքի կարիքները հոգալու համար գյուղացիները հոծ խմբերով դիմում էին պանդխտության: Սոցիալական այդ շարիքը, որը XIX դարի վերջին քառորդին հսկայական շափերի հասավ, արևմտահայ իրականության ամենացավոտ հարցերից մեկն էր: Ժամանակակիցներից մեկը գրում է, որ Մուշի դաշտում 25 տարեկանից բարձր մարդ չմնաց, դարիբությունը ավերում է մեր աշխարհը և, եթե այդպես շարունակվի, այդ բարեբեր և ընդարձակ դաշտը «անախորժ բուերու վայր

<sup>1</sup> Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, Երևան, 1940, էջ 103:

ձը դարձած տեսնելու դժբախտությունը պիտի անենանք»<sup>1</sup>:

Պանդխտության հարցը, որպես ամենածանր հարց, հուզել է ժամանակի հայ գրողներին ու հրատարակախոսներին: Նրանցից վիպասան Բաֆֆին սրտի կսկիծով գրում է, որ «Ամեն տարի հարյուրավոր երիտասարդներ վանից, Մուշից, Քաղեշից, Կարինից և այլ գավառներից դիմում են դեպի Կ. Պոլիս իրենց ընտանիքի համար ապրուստ շահելու: Այդ հոսանքը գնալով ավելի ընդարձակ քանակություն է ստանում... ցավալի՜ այն է, որ պանդխտներից շատ քչերին է հաջողվում վերադառնալ յուր հայրենիքը. մեծ մասամբ կորչում են մայրաքաղաքի մեջ, թողնելով հազարավոր անբախտ ընտանիքներ...»<sup>2</sup>:

Տնտեսական և քաղաքական ճնշման հետ միասին արևմտահայերը, ինչպես նաև օսմանյան կայսրության մեջ ապրող ուրիշ փոքր ազգերը՝ «երբերը, բուլղարները, արաբները, հույները, քրդերը և մյուսները, ենթարկվում էին ազգային ու կրոնական դաժան ճնշման, ոտնահարվում ու արհամարհվում էին նրանց ազգային սովորությունները, կուլտուրան, նրանք զրկված էին մարդկային ամեն տեսակի իրավունքներից: Հա-

<sup>1</sup> «Ճանդես գրականական պատմական», 1888, գիրք Ա, էջ 225:

<sup>2</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 91 («Թուրքահա» հոդվածում):

լածանքնէր՝ շարդերի, մասսայական տեղահանութեան բարբարոս գործողութիւնները բխում էին սուլթանական կառավարութեան վարած նացիոնալիստական բիրտ քաղաքականութեան էութիւնից: Անդրայնական կրքեր բորբոքելը, կոյսութեան մեջ բնակվող մահմեդականներին քրիստոնյաների դեմ լարելը այդ քաղաքականութեան արտահայտութիւններն էին: Սուլթանական դատան ռեժիմը խոր հակասութիւններ էր առաջացրել թուրքազգի շահագործող վերնախավերի և կեղեքված ու արյունաքամ եղած մյուս ժողովուրդներին միջև: Երկրի տիրապետող վերնախավերի կողմից հարստահարվող թուրք աշխատավորութիւնը, որի սոցիալական վիճակը ոչնչով չէր տարբերվում հայ, հույն կամ արաբ աշխատավորի վիճակից, խաղաղ կարող էր ապրել և բարեգրացիական հարաբերութիւններ հաստատել ոչ-թուրք ազգերի ու ժողովուրդների հետ: Սակայն դարերի ընթացքում երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերը մահմեդական մասսաներին ներշնչել էին, որ ոչ-մահմեդական ժողովուրդները, քրիստոնյաները անհավատներ են և նրանց պետք է ոչընչացնել<sup>1</sup>: Մարդատյաց այդ զաղափարները նրանք «հիմնավորում» էին Ղուրանի դոգմաներով: Սուլթանական կառավարութիւնը, շահագործող վերնախավը՝ գործելով Ղուրանի սկզբունքներով, թու-

<sup>1</sup> Տե՛ս Զ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայութիւնը, Երևան, 1965, էջ 13:

նախորում էին թուրք ժողովրդի միտքը, վարում էին ռեակցիոն, շովինիստական, մարդատյաց քաղաքականութիւն, ձգտելով թուրքիայում ապրող աքաղաղներին, առաջին հերթին հայերին վերացնել պատմութեան ասպարեզից: Այդ քաղաքականութիւնն ավելի վայրագ ձևեր ընդունեց XIX դարի վերջին քառորդում: Բնութեամբ չկարողանալով ձուլել կուլտուրական մակարդակով բարձր կեանքնաժ հայ ժողովրդին, սուլթանական կառավարութիւնը դիմեց ջարդերի, նպատակ ունենալով իսպառ բնաջնջել նրան:

Սուլթանական կառավարութեան հայաջինջ քաղաքականութիւնը պարզ կերպով արտահայտել է երկար տարիներ Արդու Համիդի կառավարութիւնը գլխավորող Քյամիլ փաշան: «Եթե, — ասում էր նա, — Եվրոպիո մասին մեջ մեր ծոցը ու անուցինք, պետք չէ, որ նույն հիմարութիւնն ընենք մեր Ասիական Տաճկաստանի մեջ... Ուրեմն այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անմտ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակասի մեզ. ամէն գործիք պատրաստ ունենք — քուրդ, շերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամեն ինչ. կրօնական պատերազմ մը կհրատարակենք, և դուրսին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ո՛չ ընք ունի, ո՛չ զինվորութիւն և ո՛չ պաշտոն. նոք, ընդհակառակն, մենք զենք էլ ունեինք, զինվորութիւն էլ և աշխարհիս ամենեն մեծ տերու-

թյանց մեկը՝ ամենեն հարուստը (խոսքը Անգլիայի մասին է— Կ. Թ.) մեզ նիպակակից է և մեր ասիական աշխարհին երաշխավոր»<sup>1</sup>:

Արևմտահայերին բնաջինջ անելու թուրքական կառավարության ղեկավար շրջանների հանցագործ դիրքը արտահայտված է նաև Արաբկիրի (Սվազի վիլայեթ) թուրք պաշտոնատար անձանց հետևյալ հայտարարության մեջ, որը մեծ հումանիստ Ֆ. Նանսենը բերում է իր «Հայաստանը և Մերձավոր արևելքը» աշխատությունում: Այնտեղ ասված է. «Բոլոր նրանք, ովքեր Մահմադի որդիներ են, այժմ պետք է կատարեն իրենց պարտականությունը և սպանեն բոլոր հայերին, կողոպտեն նրանց տները և այրեն, հողին հավասարեցնեն: Ոչ մի հայի չպետք է խնայել, այդպիսին է սուլթանի հրամանը»<sup>2</sup>:

Հենց այս ոգով գործելով, սուլթանական կառավարությունը դիմում էր գործնական միջոցներին: Ամենից առաջ նա ձգտում էր բրդերին թշնամացնել հայերի դեմ, բրդական վերնախավին իր կողմ գրավելու միջոցով քանդել նրանց վաղեմի բարեկամությունը և օգտագործել բրդերի ուժը հայերին բնաջնջելու համար:

Այդ բանը ավելի որոշակիորեն արտահայտվեց սուլթան Աբդուլ Համիդի գահակալության տարի-

<sup>1</sup> «Փորձ» № 7—8, 1879, էջ 204—205.

<sup>2</sup> F. Nansen, "Armenia and the Near East, London, 1928, էջ 288—289.

ներին: Գահ բարձրանալով Աբդուլ Համիդը թուրքտերեց նախկին բրդական դերերեյներին կամ նրանց ժառանգներին զնելու ընդարձակ հողատարածություններ, ինչպես նաև Արևմտյան Հայաստանի վերադառնալ այն դերերեյներին կամ նրանց ժառանգներին, որոնք առաջներում աքսորվել էին նախկին սուլթանների կողմից: Դեռ ավելին: 1890 թվականի սեպտեմբեր ամսին թուրքական 4-րդ բանակի հրամանատար Զեքի փաշան շրջագայելով Արևմտյան Հայաստանի շատ նահանգներ՝ Բիթլիսի, Վանի, էրզրումի վիլայեթները, ամենուրեք իր մոտ էր կանչում բուրդ բեզերին և համոզում նրանց լինել սուլթանի ու նրա կառավարության հավատարիմ հպատակներ, անառարկելիորեն կատարել զինապարտություն, կազմակերպել հեծյալ սկադրոններ, որոնց կառավարությունը կտրամադրի մանդեբձանք ու զենք»:

Գրանից հետո, 1891 թվականին, Շաքիր փաշայի (թուրքական նախկին դեսպան Պետերբուրգում) մշակած պլանով գործնականորեն խնդիր էր դրվում՝ ա) կազմակերպել համիդի անունով բըրդական հեծյալ զնդեր և նրանցով պաշտպանել կայսրության արևելյան սահմանները, բ) այդ

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Գյուղացիության կիսաճորտացումն ու ճորտացումը Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին (տե՛ս Հայկ. ՍՍԻ ԳԱ «Տեղեկագիր» № 7, 1964, էջ 29):

<sup>2</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 450, л. 109, л. 29.

սահմաններից հեռացնել բոլոր քրիստոնյաներին, առաջին հերթին՝ հայերին: Եվ ահա այդ նպատակով, Շաքիր փաշայի նախագահությամբ և Վելի Ռիզա Մուստաֆա և Մուշաֆատ փաշաների անդամակցությամբ ստեղծվում է հատուկ հանձնաժողով, որը որոշում է Անատոլիայի քրդական ցեղերից կազմակերպել քսան հեծյալ գունդ<sup>1</sup>: Ստեղծվում են գնդեր, գումարտակներ, վաշտեր, ցեղապետ-հրամանատարների մոտ նշանակվում են մարզիչ սպաներ, բաշխվում են նոր զենքեր և հատուկ համազգեստ:

Խորամուխ լինելով գործի էություն մեջ, պետք է նկատել, որ համիդիե գնդերի ստեղծման նպատակը ոչ այնքան զինվորական ուժը ավելացնելն էր, որքան նրանց միջոցով հայ տարրի ոչնչացումը: Մ. Օրմանյանը նշում է, որ համիդիե զենդերում ընդգրկված քրդերը առանց գործի խորքը թափանցելու, ենթարկվելով սուլթանական պաշտոնյաների ազիտացիային, իրենց հարգված, պատվված տեսան և սաստկացրին ջարդարարական գործողությունները հայերի դեմ<sup>2</sup>: Եվ իրոք, քրդական այդ գնդերը Բարձրագույն դռան ցուցումով տանջում ու հարստահարում էին հայ բնակչությունը:

<sup>1</sup> Տե՛ս ЦГВИА, ф. 450, л. 109, л. 26.

<sup>2</sup> Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Երրորդ մաս, Երուսաղեմ, 1927, էջ 5020—5021:

Հալածանքները, ինչպես տեսանք, սկսվում էին հայ գյուղացիների հողերի գրավումով, ունեցվածքի հափշտակումով ու կողոպուտով: Հայերի քողոքները մնում էին անհետևանք, որը ինքնըստինքյան խրախուսիչ դեր էր խաղում վայրագություններ կատարողների համար: Բողոք բարձրացնողները ենթարկվում էին հալածանքների ու նույնիսկ զոհ դառնում վրեժխնդրության: Այս հանգամանքներում հայերին մնում էր համախռմվել և զենքով դիմադրել թշնամուն: Դա առանձնապես վառ կերպով արտահայտվեց Սաունի լեռնականների մոտ:

XIX դարի վերջերին արևմտահայության նըկատմամբ սուլթանական Թուրքիայի վարած դաժան քաղաքականության մասին տեղեկություններ շատ կան հայկական մամուլում և օտարերկրյա հյուպատոսների հաղորդագրություններում: Բեքանք միայն մի օրինակ. «Նոր դար» թերթի թղթակցը հաղորդում է, որ Մամեդ-Ալի ավազակապետը, իր ազգականներով 1893 թվականին գալով Մուշի Խեբան հայկական գյուղը, այնտեղ մնում է հինգ ամիս, ավերում է շատ տներ, իր և իր մերձավորների անասունները ձրի պահել տալիս գյուղացիներին: Գյուղին տված նրա վնասը հասնում էր ավելի քան 3000 դուրուշի: Իսկ Հայդոսանում մի այլ ավազակ, 1894 թվականի ամռանը հարձակում գործելով Պաղլու հայաբնակ գյուղի վրա, բշում-տանում է 160 ոչխար, 5 ձի, 9 եղ,

խլում կալեբրում կուտակված ցորենը, գարին և այլ ապրանքներ<sup>1</sup>։

Ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ օրինակներն ու փաստերը խոսում են այն մասին, որ սուլթանական կառավարությունը ոչ մի բանի առաջ կանգ չէր առնում՝ հալածելու, ոչնչացնելու ու իր մայր երկրից արտաքսելու հայ աշխատավորական զանգվածներին, այդ նպատակի համար կաշառքի, սիրաշահելու և այլ խոստումների միջոցով օգտագործելով նաև քրդական վերնախավին, համիդիե գնդերին։ Հալածանքներն ու մասնակի ջարդերը Սասունում, Մուշում, Վանում, Կարինում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում 1894—1896 թվականներին վերածվեցին զանգվածային կոտորածների։

Տնտեսական, քաղաքական և ազգային ճնշման ու հալածանքի նման պայմաններում երբեք հնարավոր չէր զարգացնել երկիրը, նրա արտադրողական ուժերը, նպաստել կապիտալիստական հարբերությունների զարգացմանը, բարելավել գյուղատնտեսությունը, ոացիոնալ կերպով օգտագործել հողը, կատարելագործել արտադրական գործիքները և այլն։ «Իսկպես,— գրել է Ֆ. էնգելսը 1890 թվականին,— թուրքական տիրապետությունը, ինչպես և արևելյան ամեն մի տիրապետություն, անկարելի է համատեղել կապիտա-

լիստական հասարակարգի հետ. ձեռք բերած հավելյալ արժեքը ոչնչով չի երաշխավորված սատրապների և փաշաների գիշատիչ ձեռքերից. բացակայում է բուրժուական ձեռնարկուական գործունեության առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության անվտանգությունը<sup>1</sup>։

Ուսումնասիրելով Թուրքիայի սոցիալ-քաղաքական վիճակը, Կ. Մարքսը և Ֆ. էնգելսն իրենց մի շարք աշխատություններում ցույց են տվել Թուրքիայի տնտեսական հետամնացության պատճառները, բացահայտել նրա քաղաքական կազմալուծման նախապայմանները և որոշակիորեն ընդունել են այդ երկրում քրիստոնյա ժողովուրդների ազգային շարժումների սոցիալական բովանդակությունը, դրանց առաջադիմական բնույթը։

Այստեղ անհրաժեշտ է նշել նաև այն, որ եվրոպական մեծ տերությունները, օգտագործելով Թուրքիայի հետամնացությունը, ձգտում էին իշխել նրա վրա, նրան ենթարկել իրենց տնտեսական ու քաղաքական ազդեցությանը։ Մեծ տերությունների այս մրցակցության ընթացքում առաջ բաշվեց Թուրքիայի «ստատուս քվոյի» սկզբունքը։ Այդ սկզբունքի պահպանման պատրվակով կրակներից ամեն մեկը շտապում էր «օգնություն» ցույց տալ թուրքական ղեկավար շրջաններին՝

<sup>1</sup> Տե՛ս «Նոր դար» № 222, 1894, դեկտեմբերի 27։

<sup>1</sup> К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 22, стр. 33 («Внешняя политика русского царизма» հոդվածում)։

հասարակական նոր, առաջադեմ ուժերի դեմ վերջիններին կռվի մեջ: Հենց դրանով էլ թուրքիայում ավելի էր սաստկանում ֆեոդալական-բռնապետական ուժերը, ծանրանում էր այնտեղ ապրող բոլոր ժողովուրդների, առանձնապես հայ ժողովրդի, վիճակը, որը նրանց մղում էր ազատագրական պայքարի:

Միանգամայն իրավացի է ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, երբ նշում է, որ «Արևմտյան Հայաստանում, ինչպես և ամբողջ թուրքիայում, գյուղացիական մասսաների առաջ օրջեկտիվորեն զբրված էր սոցիալ-տնտեսական մի հիմնական խրնդիր՝ պայքարել սուլթանական բռնակալության դեմ, վերացնել ֆեոդալիզմը, ազատվել ճորտական և կիսաճորտական վիճակից... Սակայն սոցիալ-դասակարգային այդ պայքարն արևմտահայ իրականության մեջ անխուսափելիորեն ստանում էր նաև ազգային-ազատագրական բնույթ»<sup>1</sup>: Սուլթանության, նրա ծանր ուժերի դեմ ուղղված այդ պայքարի վառ արտահայտություններից էին Մասունի 1890—1894 թվականների ելույթները, առանձնապես 1894 թվականի Մասունի ապստամբությունը, որը իր ուրույն տեղն ունի հայ ժողովրդի բազմադարյան ազատագրական հերոսական պայքարի տարեգրության մեջ:

<sup>1</sup> Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., Երևան, 1955, էջ 65:

## 1890—1894 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍԱՍՈՒՆՈՒՄ ԾԱՎԱԿՎԱՄ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

### 1. ՍԱՍՈՒՆԻ ՎԱՐՉԱ-ՏԵՐԵՏՈՐԻԱԿ ԲԱԿԱՆՈՒՄԸ

Մասունը գտնվում է Արևմտյան Հայաստանի հարավում, Տավրոսյան լեռնաշղթայի վրա, հիմնականում գրավելով Բաթման գետի վերին հոսանքը: Նրա սահմանները ձգվում են՝ արևելքից Գեղի Սղերդ, արևմուտքից՝ դեպի Գենջ, հարավից՝ Գեղի Տիգրանակերտի դաշտը և հյուսիսից՝ Մուշի դաշտը: Մասունի հյուսիսային մասով ձրգվում է Կորդուքի լեռնաշղթան, կենտրոնում բարձրանում են Տավրոսիկի լեռները, հարավում՝ Խարզանի լեռները: Հյուսիս-արևելքում տարածված են Խուրի լեռները, արևելքում բաղմած է Մովսասաբը՝ իր լայնանիստ լանջերով, հարավ-արևելքում երկնքի կապույտի մեջ է մխրճվում Մարաթուկը: Արևմտյան Հայաստանը թուրքիայի տիրապետության տակ ընկնելուց հետո բազմաթիվ անգամ ենթարկվել է վարչա-տերիտորիալ փոփոխությունների: Այդպիսի փոփոխության են ենթարկվել նաև նրա առանձին շրջանները, այդ թվում և Մասունը:



ՃԻՃ դարի վերջին քառորդում Սասունը մտնում էր Բիթլիսի վիլայեթի Բիթլիսի, Մուշի, Սղերդի և Գենջի սանջակների վարչա-տերիտորիալ կազմի մեջ և բաժանված էր 10 շրջանների: Այդ շրջաններն էին՝ Բուն-Սասունը (ուներ 16 գյուղ), Շատախը (7 գյուղ), Խույ-Բունաշենը (42 գյուղ), Փսանքը (42 գյուղ), Հազո-Խարլուղը (108 գյուղ), Մոտկանը (61 գյուղ), Խարզանը (128 գյուղ), Խիանքը (56 գյուղ), Խուլքը (67 գյուղ) և Տավորիկը (12 գյուղ)<sup>1</sup>: Բոլոր շրջանները միասին ունեին 539 գյուղ, որոնցում ապրում էին 35 հազար հայ և մոտ 15 հազար քուրդ<sup>2</sup>:

**Բուն-Սասուն:** Այս շրջանը գտնվում է լեռնաշխարհի հյուսիսային մասում: Այստեղ հայտնի էին Շենիկ, Սեմալ, Ալիանք, Գելիեզուզան, Մերկեր, Աղբիկ, Հեթինք գյուղերը, որոնք 1894 թվականի ապստամբության ժամանակ հանդիսանում էին մի կողմից հայերի, իսկ մյուս կողմից՝ թուրքական կանոնավոր բանակի ու քրդական համիդիների ընդհարման կենտրոնը:

Բուն-Սասունի հայերի հիմնական զբաղմունքը անասնաբուծությունն էր ու ապա հողագործությունը:

**Շատախ:** Բուն-Սասունից դեպի արևելք ընկած

<sup>1</sup> Տե՛ս Վ. Պետոյան, Սասունի բարբառը, Երևան, 1954, էջ 7: Տե՛ս նաև Ս. Քալանթար, Սասուն, Թիֆլիս, 1895 և «Մշակ» № 118, 1894, հոկտեմբերի 12:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

Շատախի շրջանը: Անառիկ լեռներով շրջանված այս սարահարթում գտնվում էին Քոփ, Նորմալ, Գեղաշեն, Շուշանամերկ, Տափքք, Իրիքանք և այլ գյուղեր, որոնց բնակիչները զբաղվում էին հողագործությամբ, անասնաբուծությամբ և անտրով:

**Տավորիկ:** Բարձրաբերձ լեռների ու անդրնգետի ձորերի մի աշխարհ է սա, որ ընկած է Բուն-Սասունից դեպի հարավ-արևմուտք: Տավորիկի գյուղերից հայտնի էին Փուրխը, Դվալենքը, Հոսնուտը, Հարթքը, Եղկարդը, Հլոզինքը, Տավորիկը, Սպաղանքը, Խլհովխուր: Այս գյուղերի բնակիչները զբաղվում էին գյուղատնտեսությամբ, արհեստներով, ինչպես նաև հանքագործությամբ: Տախնագործական եղանակով նրանք ձուլում էին երկաթ, պատրաստում գյուղատնտեսական գործիքներ ու զենք և վաճառում:

Բուն-Սասունը, Շատախը և Տավորիկը զուտ հայաբնակ շրջաններ էին: Իրենց ազատությունը պաշտպանելու համար այս շրջանների բնակիչները անընդհատ ընդհարումների մեջ էին գտնվում բուրգ բեգերի և ցեղապետների հետ:

**Խիանք:** Տավորիկից դեպի արևմուտք և հարավ արևմուտք ձգվում էր Խիանքի շրջանը, որի ազգաբնակչության զգալի մասը քրդեր էին: Հայաբնակ գյուղերից հայտնի էին Իշխանաձորը, Հեղինը, Սևիթը, Փարգան, Բերմը, Բացին և այլն: Այստեղի կլիման նպաստավոր է այգեգործության

համար: Աղգարնակչութիւնը հիմնականում ըզբաղվում էր շերամապահութիւնով ու պղտագործութիւնով, խաղողից պատրաստում էին շամիչ, գինի, օղի: Ստացած արդիւնքի մի մասն իրենք էին սպառում, իսկ մյուս մասը վաճառում էին քաղաքների շուկաներում:

**Խուլք:** Խուլքի շրջանը տարածվում էր Խիանքից դեպի հյուսիս-արեւմուտք: Այս շրջանի կլիման համարյա նույնն է, ինչ Խիանքինը: Բնակչութիւնը հիմնականում զբաղվում էր այգեգործութիւնով: Այգեգործութիւն արտադրանքի զգալի մասը դուրս էր բերվում շուկա: Խուլքի բնակչութիւն մի զգալի մասը քրդեր էին: Զուտ հայաբնակ գյուղերից հայտնի էին Գեյիեգենմանը, Գեյիեգեմսուրը, Ընձաքարը, Մեղրաձորը, Գեղավանքը, Ընկուզնակը, Ահարոնքը, Շենը, որոնք հայտնի էին ազատագրական պայքարի հերոսական գրվագներով:

**Փաակէ:** Տալվորիկից դեպի հարավ-արեւելք տարածվում էր Փսանքի շրջանը: Այստեղ բնակչութիւն ասպրուտի միջոցներն ստացվում էին պտղագործութիւնից: Վարելահողերը շատ սակավ էին: Գյուղացիներն իրենց ասպրուտի պետքերը հոգալու համար միշտ աշխատանքի էին մեկնում ուրիշ վայրեր, առանձնապես՝ Հալեպ, և վարձվում որպես մշակ: Փսանքում, բացի հայերից, ասպրում էին նաև քրդեր: Հայաբնակ գյուղերից նշանավոր էին Քիսթաղը, Մջգեղը, Քաջառինքը, Գոմքը, Խնձորենքը, Դալհորը, Զրնթիկը, Մկթինքը:

**Խուլք-Բոնաշեն:** Սա գտնվում է Սասունի լեռնաշղթայի հյուսիս-արեւելյան անկյունում: Խուլք-Բոնաշենը գեղեցիկ ու արգավանգ շրջան է: Նա սահմանակից է Մուշի դաշտին և շորս կողմից ընդհատված է անտառապատ լեռներով, ունի միայն կլիմա: Այստեղ հայերի հետ միասին ասպրում էին նաև քրդեր: Ինչպես հայ, այնպես էլ քուրդ գյուղացիները շատ աղքատ էին և իրենց ասպրուտի միջոցները հողում էին ձորատալին ծանր աշխատանքով: Խուլք-Բոնաշենի շրջանում հայաբնակ գյուղերից էին Գաշտաղեմը, Գաշտամիրը, Զորոճան, Կծանքը, Եղիանքը, Ագրակը, Օշուտը, Ներքին և Վերին Շինիստները, Թաղվանքը, Թաղվուն, Կազմերդին և այլն:

**Հազգո-Խարլոզ:** Խարլոզի շրջանը արեւելքից սահմանակից էր Մոտկանին, հյուսիսից՝ Խուլք-Բոնաշենին, արեւմուտքից՝ Փսանքին և Խուլքին, հարավից՝ Խարղանին: Այստեղ նշանավոր էին Փյոշենք, Կուստեր, Կող, Նորգեղ, Գոմեք, Տնդետ, Արեվիկ և այլ գյուղերը: Հազգո-Խարլոզում ասպրուտ քրդերը բարեկամական կապերի մեջ էին հարկի հետ և միասին հանդես էին գալիս թուրքական կառավարութիւն քրոնութիւնների ու ճնշումների դեմ:

**Մոտկան:** Մոտկանը գտնվում է Սասունի արեւելյան մասում: Հյուսիսից սահմանակից է Խուլք-Բոնաշենին, իսկ հարավից՝ Խարղանին: Սա իր բնակչի մայական պայմաններով և աշխարհագրա-

կան դիրքով մոտավորապես նման է Խուժին: Այստեղ հայաբնակ գյուղերից հայտնի էին Գատվան, Կիսուն, Արփի, Շեն, Քաշախ, Մցին, Աղբներ, և այլ գյուղեր: Մոտականում հայերի հետ միասին ապրում էին նաև բրդեր: Նրանք զբաղվում էին անասնաբուծությամբ, հողագործությամբ և այգեգործությամբ: Քրդերի մեջ մեծ ազդեցություն ունեւ Շեկոյի տունը: Հայերի մի զգալի մասը բուրդ աղաների ճորտեր էին:

Խարզան: Լեռնաշխարհի հարավում տարածվում է Խարզանի շրջանը, ուր հայտնի էին Զոխ Բեխիկ, Հոպե, Մրլաֆան, Վերին Բարզան, Սղունդ, Հրորբ, Ռդվան և այլ գյուղեր<sup>1</sup>:

## 2. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ ՍԱՍՈՒՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՅԱԿԻ ՄԱՍԻՆ

Սասունի մասին հայկական աղբյուրներում հիշատակություններն սկսվում են մեր թվագրության VI դարից, սկզբնական շրջանում Սանասուն անվամբ, ապա՝ Սասուն: Ավանդության համաձայն, Սասունն իր անունն ստացել է Ասորեստանի Սենեքերիմ թագավորի որդու՝ Սանասարի անունից, որը իր եղբոր հետ փախչելով այստեղ, կառուցել է բերդ և զանազան կողմերից հավաքելով մարդկանց՝ դարձրել բնակելի: Ժողովրդական այս ա-

վանդության մեջ իրականն այն է, որ մարդիկ Սասունում բնակություն են հաստատել հնագույն ժամանակներից և կառուցել գյուղեր ու բերդեր, կենդանություն ավել ողջ լեռնաշխարհին:

Հնագույն ժամանակներից սկսած Սասունի հիմնական բնակիչները եղել են հայերը: Նրանք աշխատասեր, համարձակ մարդիկ էին՝ նվիրված իրենց երկրի ու ազատության գործին: Սասունի անառիկ լեռներն ու անդնդախոր ձորերն օգնում էին սասունցիների ինքնապաշտպանությանը: Սասունցիները հարկ եղած դեպքում կարողանում էին երկար ժամանակ՝ պատսպարվել քարայրներում, լեռների ծերպերում և թշնամուն դիմադրում էին քարերի տարափով:

Պատմագիր Թովմա Արծրունին, որը մոտիկից ժանթացել էր սասունցիներին և նույնիսկ ակառատես եղել շատ դեպքերի, թողել է հետաքրքիր մանրամասնություններ Սասունի և սասունցիների կյանքի մասին: Նա հետջալ կերպ է նկարագրում լեռնային այդ երկիրը, նրա ժողովրդի սովորությունները. «Այստեղ քիչ խոսքով կրացահայտեմ լեռան բնակիչների որպիսությունը. թե որտեղից և ինչպիսիք են և որպիսի աշխատություններ ու Եսասիկ տառապանքներով են նրանք հայթայթում իրենց ապրուստի կարևոր պետքերը: Նրանց բնակությունը հաստատված է ձորերի խորքերում, լեռների ճեղքերում, մայրիների պուրակներում և քարերի դազաթներին: Եվ բնակվում են գերդաս-

<sup>1</sup> Տե՛ս Վ. Պետոյան, Սասունի բարբառ, էջ 168—190:

տանով առանձին և այնչափ հեռու միմյանցից, որ և թե զորավոր մարդու մեկը բարձրաբերձ տեղերից ուժգին կանչի, հազիվ թե մեկը կարողանա լսել նրա ձայնը, այն էլ իբրև մի արձագանք ժայռերի միջից: Նրանց կեսը շեղվել է բուն հայրենի լեզվից հեռու ապրելու պատճառով և միմյանց հանդիպելիս անհարգալից են և իրար հետ խոսում են մուրացիկ, կարկատուն խոսքերով: Եվ պատահում է որ այնքան խրթին անձանոթ (բառեր) են հանդիպում միմյանց, որ նույնիսկ թարգմանների կարոտությունն են զգում: Իրենց կերակուրը նրանք պատրաստում են զանազան սերմերից, առանձնապես կորեկ կոչված սերմից, որին սով ժամանակներում ոմանք հաց են անվանում, որն աճեցնում են անտառների բացատներում, խնամքով ջրելով և երկմատնյա փայտատներով փորելով հողը: Մերկությունը ծածկելու համար՝ նրանք գործ են ածում բրդյա զգեստ, իսկ ոտներին հագնելու համար այծի մորթից շինում են կոշիկների նման մի բան: Ամառ-ձմեռ նրանք բավականանում են միատեսակ կերակուրով և հագուստով: Նրանք իրենց վրա միշտ կրում են զենք, պատրաստ լինելով իրենց լեռների գազաններից պաշտպանվելու համար: Բայց, երբ թշնամին մտնում է նրանց երկիրը, լեռնականները միաբան գալիս են իրենց իշխաններին օգնություն... Փոխար Ժյան մակերևույթի վրա ման գալու հնարավորություն ունենալու համար՝ նրանք իրենց ոտքերին շվան-

ներով կապում են առանձին տեսակի փայտյա բռշեր և դյուրությամբ ընթանում են ձյան վրայով, քնչպես գետնի վրա:

Իրենց խրթին ու անհետազոտելի լեզվի և բառերի պատճառով կոչում են խուժ, որի անունով է լեռը կոչվում է Խոյթ: Եվ դիտեն նրանք հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները, որը միշտ գործ են ածում: Սրանք այն մարդիկն են, որ, և՛ նրք Ասորեստանի և Նինվեի Սենեքերիմ թագավորի որդի Սանասարից և Ագրամելից հետո շվեցին եկան, որոնք իրենց անվանում էին տերերի անունով՝ սանասյաններ: Նրանք հյուրասեր են, ստարներին ընդունող, պատիվ տվող՝:



Հինգերորդ դարից սկսած ամբողջ Տարոնը և Մասունքը գառնում են Մամիկոնյան նախարարական տան կալվածքը: Մինչև VIII դարը Մամիկոնյանները շարունակել են իշխել այնտեղ: 772—775 թվականներին արաբական տիրապետության դեմ ուղղված ժողովրդական ապստամբության ճրնջումից հետո, արաբական խալիֆայությունը գառն գատաստան տեսավ ապստամբների հատկապես զեպրեսիաներից Մամիկոնյաններն այնպիսի հարված ստացան, որ VIII դարի երկրորդ կես-

Քաղմա Արժունի, Պատմություն տանն Արժունյաց, Երևան, 1917, դպ. երկրորդ, գլ. է, էջ 202—204:

սից սկսած դադարեցին Հայաստանի քաղաքական կյանքում լուրջ դեր խաղալուց: Դրանից հետո Տարոնը աստիճանաբար անցնում է Բագրատունիների ձեռքը:

Բագրատունիների ժամանակ Տարոնի իշխանությունը գրավում էր ընդարձակ տերիտորիա: Նրա կազմում, Տարոնից բացի, մտնում էին նաև Սասունը, Խուժը և այլ շրջաններ: Այդ իշխանությունը, որ սահմանակից էր խալիֆայության բուն տիրապետություններին, իր վրա էր կրում խալիֆայության կողմից կաղմակերպված ավերիչ արշավանքների առաջին հարվածները: 851 թվականին արաբների դեմ բռնկում է ժողովրդական հուժկու ապստամբություն: Ապստամբների դեմ ուղարկվում է մի մեծ բանակ՝ Յուսուֆ Աբուսեթ գորավարի գլխավորությամբ, որը մեծ ավերածություններ է կատարում Տարոնում: Սակայն, դեռ աննվաճ լեռնային մասի՝ Սասունի հայերը, խուժեցի Հովնանի գլխավորությամբ, վաղ գարնանը հանկարծակի հարձակվում են արաբական բանակի վրա ու գլխովին ջախջախում նրան: Յուսուֆին, որը թաքնվել էր Մուշի եկեղեցու գմբեթում, բռնում և սպանում են, իսկ նրա բանակի մնացորդներին դուրս են շարտում Հայաստանի սահմաններից:

Այդ դեպքերից շատ շանցած հայ ժողովուրդը հերոսական պայքարով վերականգնում է իր քաղաքական անկախությունը, Հայաստանում հիմ-

նագրվում է Բագրատունիների թագավորությունը: Բագրատունիների շրջանում Հայաստանն ապրում է խաղաղ ժամանակաշրջան, որի շնորհիվ զարգանում են նրա տնտեսության բոլոր ճյուղերը: Մեծ զարգացում է ապրում Տարոնը: Մուշը դառնում է քավականին բարեկարգ մի քաղաք, առաջանում են մի շարք գյուղաքաղաքներ ու ավաններ, Սասունում և Խուժում զարգանում է անասնաբուծությունը: Դաշտային Մուշի և լեռնային Սասունի ու Խուժի միջև աշխուժանում է առևտուրը:

Սակայն Տարոնի իշխանությունը երկար չի տևում: 966 թվականին Բյուզանդիան գրավում է այն և դարձնում կայսրության սոսկ վարչական միավորներից մեկը: Սակայն վարչական այդ միավորի մեջ Սասունը և Խուժը միայն ձևականորեն էին մտնում, որովհետև նրանք փաստորեն չէին գրավվել և շարունակում էին պահպանել իրենց ներքին անկախությունը:

Սասունը (Խուժի հետ միասին) անկախ մնաց նաև սելջուկների տիրապետության շրջանում: Սասունցիները՝ հերոսական պայքար մղելով սելջուկական ավարառությունների դեմ, պաշտպանում էին ոչ միայն իրենց գավառը, այլև հաճախ օգնության էին հասնում սելջուկյան անվերջ հարձակումներին ենթակա հարևան շրջանների բնակիչներին: Փաստորեն, ինչպես վկայում են X—XI դարերի հիշատակարանները, Սասունը եղել է ուղմական մի ուժեղ իշխանություն: Մաթևոս Ուռհայեցու մի հա-

դորդագրութիւնից երևում է, որ XI դարում Թոռնիկ Մամիկոնյանը օտար նվաճողների դեմ Սասունից դուրս է բերել մի ստվար բանակ<sup>1</sup>: Նրա օրոք Սասունում կուտակվում է բավականին հոծ բնակչութիւն:

Սասունի իշխանութիւնը XII դարի վերջերին հարձակումների է ենթարկվում հարևան էմիրութիւնների կողմից: Նրա դաշտային գավառները զրավվում են թշնամիների կողմից: Այդ պայմաններում, սասունցիները համառ պայքար մղելով կարողանում են իրենց գավառի ինքնուրույնութիւնը պաշտպանել մինչև XIV դարի վերջերը, մինչև Լենկ-Քեմուրի ավերիչ արշավանքները: Լենկ-Քեմուրի տիրապետութեան շրջանում Սասունը կարճ ժամանակով կորցնում է իր ինքնուրույնութիւնը և XV դարի վերջերին երկարատև անվճար պայքարից հետո կրկին նվաճում է այն:

Հայ ժողովուրդը ողբալի վիճակ ապրեց XVI դարում: 1514 թվականին օսմանյան բանակը պարսկական պետութեան դեմ կատարած արշավանքի ժամանակ մտավ Հայաստան և մինչև 1516 թվականը դավթեց նրա հարավ-արևմտյան մի շարք գավառներ, որոնց թվում նաև Մուշի դաշտը: Դրանով օսմանյան դավթիչները պատմութեան մեջ առաջին անգամ տիրացան հայկական հողերին: Հայաստանի ասպատակումը թուրքական և պարս-

<sup>1</sup> Տե՛ս Մ. Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 207:

կական նվաճողների կողմից շարունակվեց մինչև 1555 թվականը: Այդ թվականի մայիսի 29-ին կրնքած հաշտութեամբ տեղի ունեցավ Հայաստանի առաջին բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Թուրքիայի ձեռքն անցավ ամբողջ Արևմտյան Հայաստանը: Դրանից հետո օսմանյան պետութիւնը փորձեր է անում լիովին վերացնելու Սասունի և Արևմտյան Հայաստանի այլ մասերում գոյութիւն ունեցող կիսանկախ «ձորապետութիւնները», բայց նրան այդ բանը չի հաջողվում: Սասունցիները հերոսական պայքարով պաշտպանում են իրենց կիսանկախ վիճակը: Դեռ Հայաստանի նվաճումից առաջ նրանք ակտիվ մասնակցութիւն էին ցույց տվել այն ժողովուրդների կռաւիցիաներին, որոնք ուղղված էին թուրքական բռնապետութեան դեմ: Մատենագրական նյութերից հայտնի է, որ «Խուլթի և Սասունի հանրապետութիւնները» XV դարի կեսերին մասնակցում էին Թուրքիայի կողմից վտանգված Առաջավոր Ասիայի բրիտանյա ու մահմեդական պետութիւնների կազմակերպած հակաթուրքական կռաւիցիային և, որպէս այդ կռաւիցիայի բանադնացներ, Եվրոպա էին մեկնել Սասունի ու Խուլթի երկու հայ ներկայացուցիչներ՝ Հեթումը և Ռուբենը<sup>1</sup>:

Պարսկաստանի դեմ մղվող պատերազմում քրդերին սիրաշահելու և իր կողմը զրավելու հա-

<sup>1</sup> Տե՛ս Աջ. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմութեան, գիրք 2, 1959, էջ 9, 15:

մար թուրքական սուլթան Սելիմը (1512—1520 թթ.) Արևմտյան Հայաստանում և նրան հարակից շրջաններում ճանաչում է մի քանի ինքնավար իշխանություններ՝ քուրդ իշխանավորների գլխավորությամբ: Այդ իշխանությունները թեև վարչական տեսակետից ձևականորեն մտնում էին այս կամ այն վիլայեթի կազմի մեջ, սակայն իրականում անկախ էին: Գրանք բաժանված էին մի քանի հյուքյումեթությունների: Սասունի հյուքյումեթությունը, որը մտնում էր Բիթլիսի իշխանության կազմի մեջ, իր ինքնուրույնությունը պաշտպանելու համար անընդհատ պայքարի մեջ էր գտնվում Բիթլիսի քուրդ ամիրաների դեմ: 1604 թվականին Ավդալ ամիրան Սասունի ներքին ինքնուրույնությունը վերացնելու և այն ամբողջովին իրեն ենթարկելու նպատակով մեծ զորքով արշավում է նրա վրա, սակայն պարտություն կրելով քաջ լեռնականներից, ետ է նահանջում և հատուկ հրովարտակով ճանաչում է Սասունի ներքին ինքնուրույնությունն ու հրաժարվում նրանից հարկեր վերցնելու: Ահա այդ հրովարտակի պատճենը (թարգմանված արաբերենից), որ մեզ է հաղորդում Սեյլանին:

«Մահմեդական և ոչ-մահմեդական բեգերին, ամիրաներին, միրերին... Ավտալ-բեգ ամիրան Տիգրանակերտի, Ճղիր-Բոթանի, Բշերթի, Սասուն և այլ գավառների, մեծագույն իշխան Քյուրդիսանի (Հայաստանի), տեր Շուղեթի հրաշագեղ

ներքին, հանուն մեծ մարգարեի, աստվածառաք Մուհամեդի, հրամայում եմ և նզովքով պատվրում ներկա և ապագա լինելի իշխաններին, աղաներին, թոռուններին, քաջ քրդերին և մանավանդ իմ սերնդին, որ այսուհետև իբրև արև անմերձեակ նկատելով, յուրաքանչյուր անհատ, որ կրու՞ է իջում անունը կամ ճանաչում աստծո ահավորությունը, Գարով-Արայի հայ իշխան քաջազուն Հոսրթի որդի, հին իշխանազուն Գորգե ամիրայից, որդիներից և թե յուր բոլոր հպատակներից այժմ և հավիտյան հարկ չպահանջեն, ամեն տուրքերից ազատագրելով, ես, որ հաղթող եմ աշխարհի, ողջ մնատուր, ես որ իշխում եմ իբրև մեծ և քաջ, ես որ իմ սրով ահաբեկած եմ պարսիկին, զարագոտնելուն, ջախջախած ազգոյունը շնորհիվ աստծո և նորա մեծ մարգարեին, ի պատիվ Հոլոյան առհմի իշխանական ընտիր արյան, Գորգե ամիրայի անպարտելի քաջության և անվախ ցեղին, կնքում եմ իմ իշխանական կնիքով հանուն մեծ մարգարեին:

1013թ. հիսան 5»<sup>1</sup>:

Այս հրովարտակն իր ուժը պահպանում է մինչև 1856 թվականը, մինչև սուլթան Մեհմետի տված երաթը Հյուսիսային, որով վերացվում են քրդական ինքնուրույն ֆեոդալական իշխանությունները<sup>2</sup>, այդ թվում նաև սասունցիների ներքին ինք-

<sup>1</sup> «Մուրե» № 11—12, 1894, էջ 1652:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

նավարությունը, և նրանք դրվում են ծանր հարկերի տակ:

Սասունի կիսանկախ վիճակի վերացումը, հարկային կեղեքումը և ազգային ճնշումը ոչ միայն չթուլացրին, այլ ավելի համառ դարձրին հերոս լեռնականների պայքարը ընդդեմ սուլթանական պետության:

3. 1890—1893 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍԱՍՈՒՆԻՄ ԵՎ ԼՐԱ ՄԵՐՉԱԿԱ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՌԻՆԵՑԱՍ ՇԱՐՃՈՒՄՆԵՐԸ

XIX դարի երկրորդ կեսին, առանձնապես 1870—90-ական թվականներին, օսմանյան կայսրության մեջ բնակվող փոքր ժողովուրդների վիճակն անտանելի էր դարձել: Սուլթանական պետության հարստահարությունների, թալանի, հալածանքի ու դաժանությունների առօրյան լիակատար սանձարձակության էր հասել առանձնապես Արևմտյան Հայաստանում: Այդ պայմաններում թուրքական բռնապետության դեմ կազմակերպվում էին ընդդիմադիր ուժեր, նոր թափ էին ստանում ազգային-ազատագրական շարժումները:

XIX դարի երկրորդ կեսին թուրքական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի կարևորագույն նշանաձողերն էին Զեյթունի (1862, 1878, 1884 թվականների), Վանի (1862, 1886 թվականների), Մուշի (1863 թվականի), Չարսանջակի (1865 թվականի), 1880—

90-ական թվականներին Սասունում և Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում ծավալված ապստամբություններն ու շարժումները, որոնց նշանակությունը մեծ է եղել ոչ միայն արևմտահայերի, այլև արևելահայերի ազգային (գիտակցության բարձրացման, նրանց ազատագրական պայքարի հետագա զարգացման համար: 1870—90-ական թվականներին թուրքական բռնապետական ռեժիմի դեմ ծավալված հայ ազատագրական շարժումները հաստորեն ֆեոդալական-միապետական կարգերի դեմ ուղղված շարժումներ էին և իրենց սոցիալ-դեմոկրատիկ բովանդակությամբ հակաֆեոդալական-բուրժուական էին: Այս հանգամանքներում XIX դարի 70—90-ական թվականների հայ ազատագրական շարժումների հիմնական ուժը հանդիսանում էին դյուղացիական-դեմոկրատական շարժերը, որոնք ապրում էին տնտեսական, քաղաքական և ազգային բիրտ ճնշման պայմաններում և այդ պայմաններից դուրս գալու համար ազատագրական կռիվ էին ևլի սուլթանական դաժան կարգերի դեմ: Հենց դա էլ ապահովվում էր, Լեռնի խոսքերով ասած «դյուղացիության՝ որպես բռնակալության ամենից ավելի թվաշատ և ամենից ավելի «ժանրաշարժ» խավի ներգրավումն այդ շարժումների մեջ, երբ պայքարը մղվում է թե՛ ընդհանրապես քաղաքական ազատության և թե՛ մասնավորապես ազգության իրավունքների



համար<sup>1</sup>: XIX դարի 70—90-ական թվականները հայ ազատագրական շարժումների հետապնդած հիմնական նպատակը հայ ժողովրդի ազատագրումն էր թուրքական սուլթանիզմի լծից, ազրաբային հարցի լուծումը, ֆեոդալական կապանքների վերացումը, որոնք էլ կանխորոշեցին դրանց ազատագրական, բուրժուա-դեմոկրատական բընույթը: Այս մտքերը հաստատվում են Վ. Ի. Լենինի հայտնի ցուցումներով: 1915 թվականի փետրվարին գրած «Ուրիշի դրոշակի տակ» իր հայտնի հոդվածում Լենինը նշում է. «Ոչ միայն 1855, 1859, 1864, 1866, 1870 թվականների, այլև 1877 թվականի (ոռա-թուրքական) և 1896—1897 թվականների պատերազմների (Հունաստանի դեմ Թուրքիայի պատերազմի և հայկական հուզումների) ժամանակ պատմական երևույթների հիմնական օբյեկտիվ բովանդակությունն են եղել ազգային-բուրժուական շարժումները կամ ֆեոդալիզմի տարբեր ձևերից ազատագրվող բուրժուական հասարակության «ջղաձգումները»<sup>2</sup>:

XIX դարի երկրորդ կեսին հայերն արդեն կազմակերպվել էին որպես ազգ: Դա խոշոր ազդեցություն թողնեց նրանց հասարակական-քաղաքական ու կուլտուրական կյանքի զարգացման վրա: Լայն տարածում է ստանում ազգի տնտեսական և քաղաքական միավորման գաղափարը, ընդ որում

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 499:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 175:

առաջին հերթին դրվում է թուրքական լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը: Ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ մտավորականությանը հուզող հիմնական հարցերից մեկը, հիմն ոչ ամենահիմնական հարցը, դառնում է Արևմտյան Հայաստանի և արևմտահայերի ազատագրումը թուրքական բռնապետության լծից: Այս տեսակետից շատ ուշագրավ են անույնուցիտն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի քաղաքացիական պայքարները, որոնք որդեգրվեցին հետագա շրջանի ռևոլյուցիոն սերնդի կողմից: Հենանելով Նալբանդյանին, 1860-ական թվականներին Մ. Շահազիզը արևմտահայերին կոչ էր անում ազատամբել և արյան դնով ձեռք բերել ազատություն: Նույն ազատագրական ոգով են շնչում նաև վաղամեծիկ բանաստեղծ Պետրոս Դուրյանի ստեղծագործությունները:

Արևմտահայերի ազատագրման հարցը մեծ ազդեցություն էր ունենում տաղանդավոր բանաստեղծ Մկրտիչ Պեշիկթաշլյանին: Նա իր գրվածքներում քաղաքում էր, որ պետք է ձեռք բերել «վառոդ ու վեղակ» և մարտի ելնել թշնամու դեմ՝ հայրենիքը առարի լծից ազատելու համար:

Արևմտահայերի ազատագրության ուղղությամբ XIX դարի երկրորդ կեսին առաջադեմ հայ մտավորականության, առանձնապես Ռ. Պատկանյանի ու Բաֆֆու, ծավալած գաղափարական աշխատանքը մեծ ազդեցություն գործեց ժամանակի

հայ երիտասարդության վրա և հայ երիտասարդ-  
ների ազդեցիկ բաղադրական գործունեություն ծավա-  
լեցին Արևմտյան Հայաստանում:

Գրա հետ միասին, 1870—1880-ական թվա-  
կաններին Կոստանդնուպոլսում և Արևմտյան Հա-  
յաստանի մի շարք կենտրոններում (Վանում,  
Կարինում և այլն) հիմնվում են գաղտնի  
միություններ<sup>1</sup>, որոնցում ընդգրկվում են մտավոր-  
ականներ, արհեստավորներ, մանր առևտրա-  
կաններ, գյուղացիներ, կազմակերպվում են ինք-  
նապաշտպանության ղինված խմբեր, հիմնվում են  
կրթական ընկերություններ: Կոստանդնուպոլսում  
եղած Արարատյան, Արևելյան դպրոցական, Կի-  
լիկյան և նման այլ ընկերություններ՝ միանալով

<sup>1</sup> 1872 թվականին Վանում կազմակերպվում է «Միություն  
ի փրկության», 1881 թվականին Կարինում՝ «Պաշտպան հայ-  
բնեյաց» գաղտնի կազմակերպությունները, որոնք կապեր ու-  
նեին Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների հետ: Այդ  
կազմակերպությունների պատմությունը հանգամանորեն շա-  
րադրված է ակադեմիկոս Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի  
ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ  
1850—1870 թթ.» գրքում (Երևան, 1955, էջ 168—171, 182—  
199) և պատմ. գիտ. թեկնածու Ռ. Հովհաննիսյանի «Կարինի  
«Պաշտպան հայրենյաց» կազմակերպության պատմությունից»  
(տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես» № 2, 1964, էջ 292  
—298) ու «Նոր նյութեր 19-րդ դարի 80-ական թվականների  
աբնմա՜հայ ազգային-ազատագրական շարժումների և Կա-  
րինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին»  
(տե՛ս Հայօ. ՄՄԲ ԳԱ «Տեղեկագիր» № 12, 1962, էջ 61—72)  
հոդվածներում:

ընթաց, կազմում են Միացյալ ընկերությունը, որի  
նպատակն էր Արևմտյան Հայաստանում բացել  
դպրոցներ և կրթել հայ մանուկներին:

1880-ական թվականների սկզբին Մուշ բաղա-  
դրում բացվում է դպրոց՝ Կենտրոնական վարժա-  
րան անունով, որի հիմնադիրներից էր Միացյալ  
ընկերության տեսուչ Մկրտիչ Սարյանը:

Մ. Սարյանի հիմնած այդ դպրոցում, ուր ընդ-  
գրված էր 150 աշակերտ, դասավանդվում էին  
ընդհանուր պատմություն, Հայաստանի աշխար-  
հագրություն, հայ ժողովրդի պատմություն և այլ  
առարկաներ: Եկեղեցական տաղերի փոխարեն  
դպրոցում երգվում էին ազգային երգեր, աշա-  
կերտները սովորում էին մարմնամարզություն,  
գինավարժություն: Դպրոցներ են բացվում նաև  
Սասունի շատ գյուղերում, որոնց վրա մեծ էր  
Մուշի Կենտրոնական վարժարանի ազդեցությունը:

Մ. Սարյանի ջանքերով 1882 թվականին Մու-  
շում բացվում է նաև օրիորդաց վարժարան<sup>1</sup>: Նման  
կրթական հաստատություններ են բացվում նաև  
Արևմտյան Հայաստանի այլ վայրերում:

Բայց այս բոլորը հեշտությամբ չէր կատար-  
վում: Սուլթանական կառավարությունն անողոր  
համառությամբ հետապնդում, հայտնաբերում ու  
ոչնչացնում էր Արևմտյան Հայաստանում կազմա-  
կերպվող գաղտնի միությունները, մեծագույն խո-  
ղժանդոտներ հարուցում կրթական հաստատույթյուն-

<sup>1</sup> Տե՛ս «Անահիտ» ամսագիր, 1895, հունվար, էջ 267:

ների առջև, արգելում թերթերի ու զրթերի հրատարակությունը, հալածում ու բանտարկում հայ գործիչներին: Արգելքներ ու ամբաստանություններ էին հարուցվում նաև Մուշի Կենտրոնական վարժարանի ու նրա ուսուցիչների նկատմամբ: Հետապնդվում էր Սարյանը: Գյրոցցական քննությունների առիթով Սասունում շրջագայելիս խուրքական իշխանությունների կարգադրությամբ ուստիկանների կողմից նա ձերբակալվում և արսրվում է<sup>1</sup>: Սարյանին փոխարինում է Համբարձում Բերբերյանը, որը 1886 թվականին ստիպված թողնում է Կենտրոնական վարժարանը: Գրանից հետո Կոստանդնուպոլսի Միացյալ ընկերությունը Մուշի վարժարանի կառավարիչ է նշանակում Միհրան Տամատյանին:

Չնայած խուրքական կառավարության հետապնդումներին ու հալածանքներին, ժողովրդի ակտիվ աջակցությամբ հայկական կրթական հաստատությունները գնալով աշխուժանում ու զարգանում էին: Ինչպես Մուշի դաշտի գյուղերում, այնպես էլ Սասունում ավելանում էր դպրոցների թիվը, բարելավվում էին եղածները: Կրթական հաստատությունների ավելացման հետ միասին, 1880-ական թվականներին մեծ տարածում են ստանում Մ. Պեշիկթաշյանի, Բաֆֆու, Ռ. Պատկանյանի և ուրիշ հայ գրողների ու բանաստեղծների բարոզած գաղափարները, որոնք մեծ շահով

նպաստում են հայերի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, նրանց ազատագրական պայքարի ծավալմանը: Այդ պայքարի մեջ են ընդգրկվում նաև Մուշի Կենտրոնական վարժարանի ուսուցիչներից ու աշակերտներից շատերը, ինչպես նաև Տարոնում գործող մի քանի հոգևորական գործիչներ Գ. Ալեաթճյան եպիսկոպոսը, Գ. եպ. Արվանձտյանը, Ն. վ. Խարախանյանը, Վարդան վարդապետ Հակոբյանը և ուրիշներ:

Սուլթանական կառավարության վարած տրնտնական և ազգային դաժան, հայհալած քաղաքականությունը բողոքելու նպատակով օսմանյան իշխանություններն ու բարձրաստիճան պաշտոնյաները հայերի պայքարի ուժեղացման կամ, ինչպես իրենք էին ասում, «հանդգնություն» պատճառը համարում էին զրսից եկած ուսուցիչներին ու գործիչներին: Այդ առիթով էլ սուլթանական կառավարությունն սկսում է խստացնել հալածանքները հայ գործիչների դեմ: Մուշից հեռացվում են Գրիգոր Ալեաթճյանը, Գարեգին Սրվանձաթյանը, Ներսես Խարախանյանը և ուրիշներ:

1890-ական թվականների սկզբներին, երբ ավելի կատաղի բնույթ էր ստացել սուլթանիզմի հակահայկական գործունեությունը, հայ ժողովրդի զգին ավելի էր ծանրացել հարկային լուծը, երբ ավելի սանձաղերձ էին դարձել աղաներն ու բեգերը, և վտանգի տակ էր դրվել արևմտահայերի ֆիզիկական գոյությունը, Սասունը կրկին դառ-

<sup>1</sup> Տե՛ս «Պայքար», Բոստոն, 1964, հունիսի 25:

նում է ազատագրական շարժումների կենտրոն, իսկ այնտեղի հայ գործիչները, դրանց թվում և Մ. Տամատյանը, աշխատում են այդ շարժումներին տալ կազմակերպված ու համազգային բնույթ: Ուստի սուլթանական կառավարությունը խիստ բռնությունների է դիմում արևմտահայ ինտելիգենցիայի նկատմամբ, նրանցից շատերին ձերբակալում և նետում է բանտերը: Միայն Բիթլիսի վիլայեթի բանտերում փակված հայերի թիվը հասնում էր հարյուրների: 1893 թվականին ձերբակալվում է նաև Տամատյանը, տարվում Մուշ, ապա՝ Բիթլիս, իսկ հետո Կոստանդնուպոլիս<sup>1</sup>: Մուշում և Սասունում եղած ժամանակ Տամատյանը միջաբեր հեղվածներ և նամակներ է գրում, որոնք տպագրվում են հայկական թերթերում և ապա արտատպվում արտասահմանյան լրագրերում: Նրա գրած նամակները Կոստանդնուպոլսի վրայով հասնում են Աթենք՝ հնչակյան գործիչներ Անտոն Ռշտունուն և Նշան Կարապետյանին (Ռուբեն Խանազատ)<sup>2</sup>: Տամատյանը գրում էր նաև հայրենասիրական բանաստեղծություններ ու պոեմներ, որոնք կարդացվում ու երգվում էին Արևմտյան Հայաստանի շատ վայրերում: Ուշագրավ է նրա «Տալվորիկի կտրիճը» պոեմը, որի մեջ արտացոլված է սասունցիների հերոսական պայքարը իրենց ազատության համար:

<sup>1</sup> Տն՝ս «Պայքար», Բոստոն, 1964, հուլիսի 7:

<sup>2</sup> Տն՝ս «Մուրճ» № 8, էջ 996—1000:

Տամատյանի ձերբակալությունից հետո Սասունում հանդես են գալիս նոր գործիչներ: Նրանցից էին Արմենակ Ղազարյանը, որը հետագայում հայրենի դարձավ Հրայր անվամբ, Համբարձում Գոյաջյանը (Մուրադ) և ուրիշներ:

Շահագործող վերնախավի հարձակումներից հայ աշխատավորներին պաշտպանելու համար այդ տարիներին Մուշի դաշտի մի քանի շրջաններում, Սասունի Բունաշեն գավառում և այլուր կազմակերպվում են ինքնապաշտպանական խմբեր: Գրանցից ամենանշանավորները Արաբոյի և Մխոթ գլխավորած խմբերն էին: Առանձնապես Արաբոն հետագայում մեծ անուն է հանում և իր ազդեցությունը տարածում Առաքելոց վանքի մերձակա շրջաններում:

Իշխանություն օրգանները վճռական միջոցների են դիմում այդ խմբերի նկատմամբ: Բերդակ գյուղում Արաբոն ու Մխոն ձերբակալվում և նետվում են Մուշի բանտը: Արաբոյին հաջողվում է փախչել բանտից և անցնել Կովկաս: 1893 թվականին 16 հոգուց բաղկացած խմբով նա վերադառնում է Հարոն: Ճանապարհին, սկզբում՝ Ղոզլուի սարերում, իսկ ապա՝ Գյալեռաշի ձորում, հանդիպելով Թուրքական մի զինված ջոկատի, կռվի է բռնվում նրա հետ և իր ընկերների հետ միասին զոհվում:

1880—1890-ական թվականներին Անդրկովկասում ևս մեծ հետաքրքրություն է առաջանում դեպի Արևմտյան Հայաստանը, դեպի արևմտահայ-

յերի ծանր վիճակը: Արևմտյան Հայաստանին ծանոթանալու, նրա ազատագրմանն օգնելու մղումով Անդրկովկասից բազմաթիվ հայ երիտասարդներ անցնում էին Քուրքիա: Սակայն, շոշափեկ գործ կատարել չկարողանալով՝ ետ էին վերադառնում:

Սուլթանական կառավարության թողտուլությամբ թուրք աղաներն ու բուրգ բեգերը Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում՝ Վասպուրականում, Ալաշկերտում, Մուշում և այլուր, կոտորում են հազարավոր անմեղ հայերի, բռնաբարում հայ կանանց, թալանում ու ավերում հայկական գյուղերը:

Քուրք ու բուրգ ֆեոդալների կատարած բարբարոսությունների դեմ դեռ 1877 թվականին օսմանյան խորհրդարանում առաջինը ձայն է բարձրացնում հույն պատգամավոր Սալիդես էֆենդին, որը խորհրդարանի ամբիոնից հայտարարում է.

«Ինչ զեղծումներ որ գործվեցան Ռումելիի և Պուլկարիայի մեջ, նույնը կգործվի երկար ատենն ի վեր քրդերի ձեռքով Հայաստանին մեջ: Սակայն հույներն ու պուլկարները Եվրոպայի մեջ տեսրակներ հրատարակելով և բողոքի ձայներ բարձրացնելով Եվրոպիո ուշադրությունը իրենց տառապանաց վրա հրավիրեցին, մինչդեռ հայերը զուրկ ըլլալով այդ միջոցին, լուսթյամբ տարին ու հանդուրժեցին իրենց կրած դառն տառապանաց: Բայց մի՞թե արդարություն է, որ հայր... այսպես շարշարվի ու կեղեքվի...»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Մասիս», 1887, էջ 1885:

Այս խոսքերից բաջալերված, էրզրումի հայ պատգամավոր Պ. Պալլարյանը պատմում է Վանի, Մուշի և Բիթլիսի շրջաններում քուրգ բեգերի ավարտությունների, թուրք աղաների ու փաշաների, կաշառակեր կառավարիչների գործած շարիքների մասին: Սակայն այդ բոլորը մնում են ձայն բարբառո հանապատի: Հայերի վիճակը գնալով ավելի է ծանրանում: Սուլթանական կառավարությունը ոչ միայն չի լսում նրանց ձայնը, այլ ավելի է սաստկացնում իր հայաջինջ բաղաբուխությունը:

Սուլթանական կառավարության ջարդարարական այդ բաղաբականությունը նպաստում էր եվրոպական մեծ տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, ինչպես նաև ցարական Ռուսաստանի, երկդիմի, շահամուլ վարքագիծը: Արևմտահայությունն իր դրությունը պաշտպանելու համար դիմում է ղենքի: Ինքնապաշտպանական մարտերը մեծ ծավալ են ստանում հատկապես Սասունում: Սասունի դիմադրությունն ընկճելու նպատակով թուրքական իշխանությունները ոչ միայն զենք են օգտագործում, այլև դիմում են խարդախ միջոցների, նպատակ ունենալով «ավելի հանգիստ» ճանապարհով մեջտեղից վերացնել ժողովրդին կազմակերպող սեփերին և հեշտացնել սասունցիների պարտությունը: Դրա օրինակ կարող են ծառայել հուլյի շրջանի կառավարիչ Միրզա աղայի դավերը՝ տեղի

տանուտերերի նկատմամբ: Արխիվային փաստաթղթերից մեկում նշված է, որ 1880 թվականի ամռանը Միրզա աղան Սասունում հայտնի Ահարոնք գյուղի տանուտեր Գրիգորին մեջտեղից վերացնելու համար նրան իր մոտ է կանչում, իբր խուլքի շրջանին վերաբերող խնդիրների շուրջ խորհրդակցելու համար: Գրիգորը, առանց որևէ կասկածի, Միրզա աղային է ներկայանում Շողեր գյուղում և այնտեղ դավադրաբար սպանվում:

Գրիգորի սպանությունը ոտքի է հանում Ահարոնքի գյուղացիներին: Նրանք զինված հարձակվում են նեջքի վրա և հիմնահատակ անում Միրզա աղայի տունը: Նույն ժամանակ լուրջ ընդհարումներ են տեղի ունենում նաև Խիանքի շրջանի Բերմ հայաբնակ գյուղում: Այդ գյուղը 1880-ական թվականներին մի քանի անգամ ենթարկվել էր աղաներու ու բեգերի հարձակմանը, բայց բնակիչները համառ դիմադրությամբ նրանց ետ էին մղել<sup>1</sup>: Այդ թվականներին ծանր էր նաև Փսանքի վիճակը: Գավառի հայկական գյուղերը միշտ գտնվում էին թուրք աղաների հարձակումների սպառնալիքի տակ: Մինչև 80-ական թվականները կառավարության թիվադրանքով հարձակում գործելով այդ գյուղերի վրա, թուրք ֆեոդալները նպատակ ունեին տիրանալ դրանց և բնակություն հաստատել

այնտեղ: Հայերը հերոսաբար դիմադրում են և թույլ չեն տալիս նրանց իրականացնելու իրենց մտադրությունը: Ավելի լուրջ դեպքեր էին տեղի ունենում Տալվորիկի շրջանում: Սուլթանական կառավարության ու շահագործող խավերի հարկային ծանր ճնշման ու անմարդկային վերաբերմանը դեմ 1884 թվականին հանդես են գալիս Տալվորիկի, Սպաղանքի և Հարթքի գյուղացիները: Նրանք՝ ջոկատներ կազմած, շարժվում են դեպի Ահարոնք, գայմազամի ղեկավարության տակ նշած ոստիկանական ջոկատի վրա և նրան դուրս բերում գավառից<sup>1</sup>:

Արխիվային մի փաստաթղթում նշված է, որ 1885 թվականին շենիկցի Գրիգորը, Գելիեգուզան գյուղի բնակիչ Պետոն, Տալվորիկի բնակիչներ Գասպարը և Թաթոսը, Խիանքի Վարդանը, Խուլքի բոլոր գյուղերի տանուտերերը խորհրդակցության են հավաքվում Ահարոնք գյուղում: Այդ խորհրդակցությունում որոշվում է թույլ չտալ, որ քրդական ցեղապետներն ընդարձակեն իրենց ազգեցության սահմանները և տարածվեն դեպի Սասուն: Սասունցիներն աշխատում են առաջին հերթին Շատախն ու Տալվորիկն ապահովել պաշտպանական միջոցներով, զինքով ու զինամթերքով: Նրանք ավելացնում են երկաթի արտա-

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ», 1895, № 3—4, էջ 462—472. № 5, էջ 634—641:

<sup>1</sup> Տե՛ս Գլակ Տարոնցի, Ապստամբ Սասունը, Ժնև, 1903:

դրությունը (Տարվորիկում) և զենք պատրաստում<sup>1</sup>:

Հայ աշխատավորութան նկատմամբ կիրառվող բռնությունների և այդ բռնություններին ընդդիմադիր ուժերի ակտիվության մասին են վկայում Կարինի անգլիական հյուպատոսի 1890 թվականի հոկտեմբերի 2-ի զեկուցագրի հետևյալ տողերը. «Հայ բնակչությունը ներկայումս չի կարողանում վճարել իր պարտքերը...»: Վերջին դադանությունները հայերին ստիպեցին ոտքի կանգնել պաշտպանելու իրենց անձը և ունեցվածքը<sup>2</sup>: Տնտեսական կեղեքման և ազգային դաժան ճընշման ենթակա հայ գյուղացիները համարձակորեն հանդես էին գալիս տիրող սեփմի դեմ: Նրանց պայքարը շատ հաճախ զինված ելույթի ձև էր ընդունում: Այդպիսի ելույթներ տեղի են ունենում Բուլանըխի գավառի Խարապալար, Կոզակ, Շիրվանշիս և այլ գյուղերում: Հայ և քուրդ գյուղացիները միասին զենքով դիմադրում են թուրք ու քուրդ ֆեոդալներին ու հարստահարիչներին և պաշտպանում իրենց պատիվն ու ունեցվածքը: Նույն կարգի ելույթներ են տեղի ունենում նաև այլ շրջաններում: 1892 թվականին Թահճին բեգի գլխավորությամբ համիրդիներին կազմված մի-

ջակատ հարձակվում է Խնուսի գավառի Ղազարագատ գյուղի վրա, նպատակ ունենալով խլել գյուղացիների ունեցվածքը և նրանց դնել ճորտային վիճակի մեջ: Գյուղացիները կազմակերպված կերպով դուրս են գալիս ջոկատի դեմ և նրան թշուժ գյուղի սահմաններից հեռու: Հետաքրքրականն այն է, որ Խնուսի գավառում 1892 թվականից սկսած հայ երիտասարդներից կազմակերպվում է մի մարտական խումբ, որը հայկական գյուղերը պաշտպանում էր համիրդիների հարձակումներից<sup>1</sup>:

Հայ և քուրդ գյուղացիներին կեղեքում և հարբատահարում էին նաև բազմաթիվ ավազակային խմբեր, որոնց դեմ կառավարությունը ոչ մի միջոց չէր ձեռնարկում, դեռ ավելին, խրախուսում էր նրանց ավազակային գործողությունները: Այդ ավազակախմբերը հարձակվում էին հայկական ու քրդական գյուղերի վրա, սպանում ու թալանում էին գյուղացիներին<sup>2</sup>: Նրանց դեմ միասին հանդես էին գալիս հայ և քուրդ աշխատավորները: Հերկերտ և Տոմ գյուղերի հայ և քուրդ բնակիչները հաջողությամբ ետ էին մղում ավարառու Մեհմեդ Ալիի ավազակային խումբը: Այդ գյուղերի օրինա-

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ» № 3—4, 1895, էջ 461—462:

<sup>2</sup> М. Макколь. Ответственность Англии перед Арменией («Положение армян в Турции...» գրքում, 1896, Москва, стр. 133):

<sup>1</sup> Տե՛ս Архив внешней политики России (այսուհետև՝ АВПР), ф. Канцелярия, оп. 420, д. 23, т. II, л. 391.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

կին հետեւելով, ոտքի են կանգնում նաև Մեղրի, Բաղու, Զիարեթ, Սորդար և այլ գյուղերը<sup>1</sup>:

Առանձնապես ուշագրավ էին Մուշի դաշտի և Սասունի սահմանագլխում գտնվող Տատրագոմ գյուղի դեպքերը: Մշտական հարձակումների ենթակա այս գյուղում բնակվում էին Սասունից եկած հայերը: Տատրագոմցի Օվանի և Կարոյի ղեկավարութեամբ գյուղացիները հաջողութեամբ ետ էին մղում համիդիեաների և թուրք աղանների հարձակումները: Տատրագոմի պաշտպանությունը լուրջ նշանակություն ուներ հայերի համար, որովհետև Սասունի և Մուշի դաշտի միջև եղած կապը իրականացվում էր նրա միջոցով:

1890-ական թվականներին սուլթանական բռնությունները՝ դեմ իրենց պայքարով աչքի ընկան Բուն-Սասունի, Տավորիկի, Խուֆ-Բոնաշենի, Շատախի շրջանների մի շարք գյուղեր, որոնք տոն էին տալիս ոչ միայն ողջ Սասունի, այլև ամբողջ Տարոնի ու անգամ Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների ազատագրման կոիվներին: Սասունում գյուղացիական հուզումները նոր թափ են ստանում առանձնապես 1891 թվականից հետո, որի համար կառավարությունն իր ռազմական ուժերի ուշագրությունը կենտրոնացնում է այդ շրջանի վրա: Նա աշխատում էր, ինչ գնով էլ լինի, վերջնականապես պառակտել հայ և քուրդ աշխատա-

<sup>1</sup> Ст. 5 АВПР, ф. Канцелярия, оп. 420, д. 23, т. 11, л. 391.

վորների միասնությունը, թուլացնել նրանց և նշտորեն ճնշել Սասունի ազատարար ռզին: Թանը նրանումն էր, որ Սասունում բնակվող բերքական վերնախավը աջակցում էր կառավարութեանը, որովհետև նա ձգտում էր հայերին ենթարկել իրեն: Եվ, բրբան էլ սուլթանական տիրապետությունն ատելի լիներ քրդական վերնախավին, այնուամենայնիվ կառավարության ձգտումը՝ ավերել Սասունը, առանձնապես Տավորիկը, համապատասխանում էր նրա ջահերին: Հայերի նկատմամբ քրդական վերնախավի հակադիր շահերը և թալանի տենչը նպաստավոր հող էին հանդիսանում նորանոր կոիվների համար:

1891 թվականին սուլթանական կառավարությունը վերնորական ջոկատներ է շարժում Սասունի վրա, որոնք, սակայն, սասունցիների ուժեղ դիմադրությունը հանդիպելով, Սեմալից այն կողմ էն կարողանում անցնել: Դրանից հետո Սասունը հայտարարվում է ապստամբ շրջան: Կառավարությունը զգալի ուժեր է կուտակում Սասունի սահմանի մոտ և անընդհատ հարձակումներ գործում հայկական գյուղերի վրա:

1891 թվականի վերջերին, ինչպես արձանագրված է արխիվային բազմաթիվ փաստաթղթերում և ժամանակի թերթերում, թուրքական իշխանություններին հաջողվում է Խիանքում բնակվող քրդերի մի մասին դուրս բերել Տավորիկի դեմ:



Բացի այդ, Բիթլիսի վալի Հասան Քահանին փաշան իր մոտ է հրավիրում Զիլանի շեյխ Մեհմեդին, Գուսերի շեյխ Ամարին և ուրիշներին, հանձնարարելով նրանց անցնել Սասուն, հակահայկական պրոպագանդա մղել այնտեղ ու նրա մերձակա շրջաններում ապրող մահմեդականների մեջ՝ նրանց հայերի դեմ կրոնական պատերազմի հանելու համար: Մինչ այդ, քրդական ցեղապետները տեղական կոիվներ էին մղում հիմնականում կողոպուտի համար, իսկ երբեմն էլ համաձայնության գալով հայերի հետ, դուրս էին գալիս կառավարական ուժերի դեմ: Այժմ, երբ սուլթանական կառավարությունը հիմնական հարվածն ուղղել էր հայերի դեմ, նա ամեն միջոց գործի էր դնում քրդերին, հատկապես նրանց վերնախավին, օգտագործելու իր քաղաքական նպատակներն իրագործելու համար: Բայց քրդական ղեկավարներից բոլորը չէ, որ ընդառաջում էին կառավարության պահանջներին, նրանցից շատերը տատանվում էին և չէին մասնակցում այդ ձեռնարկումներին, մտածելով, որ սուլթանական կառավարությունը որոգայթների է լարում նաև իրենց դեմ: Այս տեսակետից բնորոշ են բուրդ շեյխ Ուրեյդ-Ուլլայի հետևյալ խոսքերը. «...եթե Բարձրագույն դուռը ամեն բանի մեջ քրդերի կողմն է պահում, այդ միայն այն պատճառով, որ նրանց հակազրի բրիստոնեական տարրին Անատոլիայում և, եթե հայերն այստեղ ոչնչանան, այն ժամա-

նակ քրդերը կկորցնեն իրենց նշանակությունը քուրբական կառավարության աչքում»<sup>1</sup>:

Սուլթանական կառավարության դրդմամբ բեգերն ու աղաները՝ իրենց հրոսակախմբերով, քուրբական զորքերի հետ միասին, կոիվներ են մղում սասունցիների դեմ: 1891 թվականի հունիսին նրանք հարձակվում են Տալվորիկի, Անտրի և Մովսսարի վրա, թալանում են հայկական գյուղերը, սպանում շատերին և տիրանում մի քանի ամուր դիրքերի: Սասունցիները երեք ճակատով հակահարձակման են անցնում: Տալվորիկի ճակատը ղեկավարում էին տալվորիկցիներ Գասպալը և Արեն, Շատախի ճակատը՝ շենիկցի Գրիգորը, Մովսսարի ճակատը՝ Մակարը: Տեղի են ունենում համառ կոիվներ, որոնք վերջանում են հայերի հաջթանակով: 1891 թվականի օգոստոսի վերջերին պարտված թշնամին ետ է նահանջում Սասունի բոլոր շրջաններից:

1892 թվականի վաղ գարնանը կառավարությունը նոր ուժեր է կենտրոնացնում Սասուն: Նա աստիճանական մի վաշտ է ուղարկում Շենիկ գյուղի մոտ Մերկեմուզան վայրը և երեք վաշտ՝ Մուշի հազարապետ Հալի Յահյանի, Իսկենդեր և Ռաշիդ բեգերի առաջնորդությամբ՝ Շատախի գյուղերը: Սասունի վրա են շարժվում նաև կառավարական

<sup>1</sup> Տե՛ս Ս. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, стр. 119.

զորքեր և համիրդիս զինվորներ, որոնք հյուսիսի կողմից Սասունը մեկուսացնում են մյուս շրջաններից: Իսկ Հազգոյի գայմագամը իր ոստիկաններով լեռնաշխարհի վրա է շարժվում արևելքից<sup>1</sup>:

Սասունում կուտակված զորամասերը և ոստիկանական ջոկատները գործում էին զգույշ, նրանք սիրտ չէին անում միանգամից վճռական գործույթներ ծավալել: Միայն Շենիկի մոտ կանգնած ոստիկանական ջոկատը՝ հաշվի առնելով Խուլբի շրջանի Գելիեզկենման և Գերիեզկենմուր գյուղերի փոքրությունը, հարձակվում է նրանց վրա և ձերբակալում հինգ մարդ: Գյուղացիները հարձակվում են ոստիկանների վրա, ծեծում նրանց և ազատում ձերբակալվածներին, որից հետո վերցնում են իրենց ունեցվածքը և փոխազդրվում Ալիանք գյուղը: Գրանից հետո Ալիանք է ուղարկվում մոտ 100 ոստիկան: Ալիանքցիները օտքի են կանգնում և ոստիկաններին առաջարկում են հեռանալ գյուղից: Վերջիններս տեսնելով իրենց համար ստեղծված անբարենպաստ պայմանները՝ ստիպված հեռանում են այնտեղից:

Վերոհիշյալ դեպքերը ցույց են տալիս, որ թուրքական կառավարությունն ու նրա տեղական օրգանները համառորեն ձգտում էին ընկճել անվեհեր լեռնականների ազատատենչ ոգին, կազմալուծել նրանց ուժերը: Սակայն, սասունցիները,

գայթարելով իրենց գոյության համար, բոլոր նպատակներով միջոցներով աշխատում էին խուսափել արյունահեղությունից և համեմատաբար խաղաղ միջոցներով էին ընդդիմանում կառավարության պաշտոնյաներին ու ոստիկանական ջոկատներին, ջանալով զինված բախումների տեղիք չտալ: Այդ բազաբականությունն անցկացնողը գլխիեզուղանցի Պետոն էր, որի հետ համաձայն չէին շենիկցի Գրիգորը և նրա ընկերները: Վերջինները ձգտում էին դիմել վճռական միջոցների, քանկանում օր առաջ հարձակվել ոստիկանական ջոկատների վրա և զինաթափ անել նրանց, քանի գնա նրանք չէին համալրվել նոր ուժերով: Սակայն, Գրիգորի հետևից այն ժամանակ դեռևս չէին էին գնում:

Ինչպես արդեն նշել ենք, Սասունը արևելյան կողմից պաշարելու և այդտեղի բրդերին հայերի գնմ ոտքի հանելու խնդիրը հանձնված էր Հազգոյի գայմագամին: Սակայն նրա համար այստեղ պայմանները նպաստավոր չէին, որովհետև բրդերը և հայերը գործում էին համատեղ: Ավելին, բրդական ցեղերը, բարեկամական կապերով կապված լինելով հայերի հետ, չէին արձագանքում գայմագամի կոչերին:

1892 թվականի մայիսի վերջերին Հազգոյի գայմագամը՝ իր ոստիկանների մի մասի հետ, անցնում է Սասունի կամուրջը և մտնում Տալվո-

<sup>1</sup> Տե՛ս «Պայքար», 1964, հուլիսի 3:

րիկի սահմանը<sup>1</sup>: նրանք հասնում են Հարթք գյուղը: Հաշվի առնելով իր ուժերի փոքրաթիվ լինելը՝ գաղմագամը ռազմական գործողությունների չի դիմում: Նա հայտարարում է, որ ինքը եկել է հարկեր հավաքելու (յուրաքանչյուր անձից տասը փարա): Գյուղացիները վճռականորեն մերժում են այդ պահանջը: Գրանից հետո ոստիկանական ջոկատը ետ է քաշվում դեպի Սպաղանք և Խոժոժվանք գյուղերը:

Այս երկու գյուղերը փոքր էին: Գայմագամը, կարծելով, որ իր ուժերը բավական են նրանց ընկճելու համար, դիմում է բռնի միջոցների: Բայց նրա հաշիվները սխալ են դուրս գալիս: Սպաղանքի տանուտեր Մակարի գլխավորությամբ թուրքական ոստիկանական ջոկատի դեմ ոտքի է ելնում ողջ գյուղը: Ապստամբները հարձակվում են ոստիկանների վրա և նրանց բշում գյուղի սահմաններից հեռու<sup>2</sup>: Ոստիկանները նահանջելով անցնում են Սասունի կամուրջը: Որպեսզի այլևս նման անախորժ «հյուրեր» չունենան, սպաղանցիները քանդում են հիմնավորց այդ կամուրջը:

Սպաղանցիների այդ ելույթը ոգևորում է հարևան Խոժոժվանքի քրդերին ու հայերին: Խոժոժվանքում կային 100-ի շուրջ ոստիկաններ, որոնք կեղեքում ու տանջում էին գյուղացիներին, նրան-

ցից պահանջում ծանր հարկեր ու զենք: Գյուղի հայ և քուրդ բնակիչները զենքը ձեռքներին հարձակվում են ոստիկանների վրա և նրանց դուրս վանդում գյուղից:

Խոժոժվանքի ղեկավար որոշակիորեն ցույց է տալիս, որ քուրդ աշխատավորների համակրանքը հայերի կողմն էր, որ նրանք միշտ չէ, որ կարող էին գործիք դառնալ թուրքական իշխանությունների ձեռքին՝ ընդդեմ հայերի:

Չնայած նրան, որ Հաղզոյի գայմագամի ոստիկանական ջոկատը մեկուսացված վիճակումն էր, այնուամենայնիվ հանգիստ չէր մնում, նա զբաղվում էր ավարառությամբ և ձերբակալություններով: Ուստի, հայ գյուղացիներն իրենց պաշտպանելու համար դիմում են զինքի: Տեղի են ունենում զինված ընդհարումներ, սպանվում է մի քանի ոստիկան, իսկ մնացածները քաշվում են Աղբերի սահմաններից հեռու:

Նույն վիճակումն էր նաև Մուշի հազարապետ Հաջի Ցահիմը, որը գտնվելով Սասունի ծայրագավառի գյուղերում, ոչինչ չէր կարող ձեռնարկել: Նա չէր կարող ո՛չ զենք պահանջել և ո՛չ էլ տուրք հավաքել, որովհետև իր հույսը դրել էր քոչվոր քրդերի վրա, իսկ սրանք չէին հետևում նրան և շարունակում էին իրենց բարի-գրացիական հարաբերությունները հայերի հետ: Բացի գրանից, հայերը ձեռք էին առել որոշ նախապատրաստական միջոցներ: Շենիկցի Գրիգորը կազմել էր մի քանի

<sup>1</sup> Տե՛ս АВІР, ф. Канцелярия, оп. 470, д. 24, лл. 5656—566 Տե՛ս նաև Գրակ Տառնցի, Ապստամբ Սասունը:  
<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

մարտական խմբեր, որոնք շրջում էին Սասունի լեռներում՝ հնարավոր հարձակումներից հայ գյուղացիներին պաշտպանելու համար։ Այս բոլորից հետո Հաջի Ֆահիմը ստիպված էր ետ բաշվել՝ թողնելով Սասունի գյուղերը։

Շուտով Հազզոյի գայմագամը՝ օգնական զորքեր ստանալով՝ նորից առաջ է շարժվում դեպի Խոժոժվանք և Խնձորեկ գյուղերը, նրա առաջապահ ջոկատները հասնում են մինչև Եղկարտ։ Այս գյուղերի հայերը, որոնք մի քանի ամիս առաջ կալել էին ռստիկանների դեմ, գիտեին, որ կառավարութունն իրենց հանդիստ չի տալու և նոր զորքով պիտի հարձակվի իրենց վրա, ուստի աշխատավոր քրդերի հետ միասին կազմ ու պատրաստ սպասում էին նոր հարձակման։ Հայ-քրդական միացյալ ուժերը լեռնային անառիկ դիրքերից հարձակվում են կառավարական զորքերի վրա, գերի վերցնում գայմագամին, բայց հետագա բարդութունների տեղիք չտալու համար նրան բաց են թողնում։ Գայմագամը՝ հավաքելով իր ցիրուցան եղած ուժերը, նահանջում է դեպի Փսանք և բանակ դնում այնտեղի բարձունքների վրա։

Այսպիսով, Սասունի լեռնաշխարհում, Մարաթուկից սկսած մինչև Փսանք, այդ վճռական պահին հայ և քուրդ աշխատավորները միասին հանդես էին գալիս կառավարական ուժերի դեմ։ Կառավարական զորքերն ստիպված նահանջում են դեպի Հազզո։ Այդ նահանջը դարձել էր անխու-

սափելի, որովհետև նրանք չունեին անհրաժեշտ ուժեր, և չէր կատարվել հայերի դեմ քրդերին ստիճ հանելու խնդիրը։

Օգոստոսի վերջերից սկսած Սասունն ու նրա մերձակա շրջաններն անցնում են խաղաղ կյանքի։ Մակայն, դա երկար չի տևում։ Սուլթանական կառավարութունը, պաշարված պահելով Սասունը, գավաղրությամբ, ինչպես նաև քրդական վերնախավին կաշառելու, պաշտոններ խոստանալու և այլ խորամանկ միջոցներով կարողանում է թշնամական սեպ խրել հայ-քրդական բարեկամական հարաբերութունների մեջ և հայերի դեմ դուրս բերել քրդական ամենից ավելի ազդեցիկ ցեղերին, այդ թվում բալաբցիների ցեղին՝ Շաքիր աղայի գլխավորությամբ։

Քրդական վերնախավին հայերի դեմ գրգռելու ակնառու օրինակ կարող է ծառայել Շատախի շրջանի Շուշնամերկ գյուղի իրադարձութունները։ Այդ գյուղը համառ պայքարով ազատվել էր քրդական բեղերի հարկային ծանր լծից։ Օգտագործելով այդ մոմենտը, թուրքական կառավարութունը հրահրում էր քրդական վերնախավին և օգնում նրան՝ վերականգնելու իր «կորցրած իրավունքները» այդ գյուղի նկատմամբ։ Ի վերջո քուրդ բեգերն իրենց ղինված ջոկատներով հարձակվում են Շուշնամերկի վրա։ Նրանց դեմ՝ ոտքի է կանգնում ողջ գյուղը և հաջող կոխվ մղելով՝ պարտության է մատնում բեգերի ղինված ուժերին ու

դուրս բշում գյուղի սահմաններից: Շուշնամերկը որոշ ժամանակ զերծ է մնում հարձակումներից ու ավարառություններից:

Սուլթանական կառավարության բռնություններն ու ճնշումը Սասունի դեմ ավելի են սաստկանում 1893 թվականին: 1893 թվականի մայիսի 31-ին<sup>1</sup> Սեմալ գյուղում թուրքական ոստիկանութունը ձերբակալում է Տամատյանին և նետում բանտ: Մ. Տամատյանի ձերբակալությունից հետո Մուշի ոստիկանության հարյուրապետ Իսկենդեր աղան ոստիկանական ջոկատով հարձակվում է Շենիկի վրա՝ գյուղի նշանավոր մարդկանց ձերբակալելու համար: Շենիկցիները՝ Գրիգորի գլխավորությամբ, դուրս են գալիս նրա դեմ և թույլ չեն տալիս ոստիկաններին մտնելու գյուղ: Դրանից հետո կառավարութունը բացարձակորեն անցնում է հարձակման, Մուշի դաշտում եղած իր զորքերն ուղղում է Սասունի վրա:

Արշավանքը Սասունի վրա սկսվում է կառավարության համար նպաստավոր պայմաններում: 1893 թվականի հունիս ամսին հարավի բուրդ բռնավորները բռնել էին Սասունի լեռները: Մրանք սեպտեմբերի շիջանակի երկար տարիների համառ ջանքերով թշնամացել էին հայերի հետ և այժմ կարող էին ծառայություններ մատուցել թուրքական իշխանություններին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Պայթար», 1894, հուլիսի 7:

<sup>2</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 24, лл. 565б—566.

Հունիսի սկզբներին հայկական Սասունն ամեն կողմից պաշարվում է: Հյուսիսից Կորտուքի վրա-րով 150 հեծյալ և 300 հետևակ զորքով Սասուն է գալիս Բիթլիսի կուսակալ Հասան Քահսին փա-րան: Շուտով նրան է միանում Գինճի մյուսթեսա-տե՛ք՝ իր ոստիկանական վաշտով: Մուշի ոստի-կանության հարյուրապետ Իսկենդեր աղան՝ ոս-տիկանական վաշտերի հետ, Ղլլաղաճի վրայով անցնում է Սասունի արևմտյան կողմը, դեպի Շե-նիկ՝ այդ կողմերում բնակվող բրդական ցեղերին առթի հանելու համար: Սասունի հյուսիս-արև-մուտյան կողմից 400 մարդուց բաղկացած մի զորաջոկատ ամրանում է Քուփի բարձունքներում՝ Կատախի շրջանի վրա հարձակվելու համար: Իսկ հարավ-արևմուտքից, հարավից ու արևելքից ոտ-քի էին կանգնել բուրդ բեգերը և միացել Հազզոյի ոստիկաններին: Անտոք հասած համիդիե գնդերը և թուրք ոստիկանները հունիսի սկզբին առաջին անգամ են ունենում շենիկցիների հետ: Շենիկի բանուտեր Գրիգորը թշնամու ամեն մի հարվա-ծին պատասխանում է կրկնակի ուժով: Այդ նույն ժամանակ իր հեծյալներով ու հետևակ ուժով Մեմալին է մոտենում Քահսին փաշան և բանակ դնում նրա մերձակա դաշտում: Փաշան իր մոտ է կանչում Սասունի գյուղերի ղեկավարներին ու նրանց առաջարկում հետևյալ պայմանները. 1) հանձնել զրսից եկած զործիչներին, 2) հանձնել գնդերը, 3) վճարել բոլոր տուրքերը և 4) տալ

ստորագրութիւն, որ իրենք ապստամբել են Տամատյանի թելադրանքով և գոհ են օսմանչան պետութիւնից:

Փաշան, ներկայացնելով այս պայմանները, ազդարարում է, որ եթե դրանք շքնորեն վեն, ապա կառավարութիւնը սասունցիների հետ կվարվի որպէս ապստամբների: Բանակցութիւնների ժամանակ թշնամու մի ջոկատ Իսկենդեր աղայի կարգադրութեամբ հարձակվում է Շենիկ գյուղի վրա: Շենիկցիները դիմում են զենքի: Տեղի են ունենում բուռն կռիւլներ: Թշնամին, ստանալով նոր ուժեր, ամեն կերպ ձգտում էր հասնել հաղթանակի: Սակայն Ալիանքի կողմերից շենիկցիներին օգնութեան է հասնում Մանե Պողոսի ջոկատը, որը հարձակվելով թշնամու աջ թևի վրա՝ ջախջախում է նրան և փորձում անցնել թշնամու թիկունքը: Թշնամին, վախենալով, որ կարող է ընկնել ծուղակի մեջ, նահանջում է:

Այդ հաղթանակից հետո հայերը Թահսին փաշային ուղարկում են հետևյալ պատասխանը. իրենց երկրի մեջ ոչ մի օտարական չկա, միայն Տամատյանն էր, այն էլ ձերբարկւոված և տարված է հեռու. զենքերը չեն կարող հանձնել, որովհետև հնուց ի վեր իրենք ունեցել են այն և դրանցից բաժանվել: չեն կարող: Այնուհետև ավելացնում են, որ եթե բոլոր աշիրեթները զինաթափվեն, իրենք էլ իրենց զենքերը կհանձնեն. իրենք չեն կարող ստորագրութիւն տալ, թե իրենց մո-

ղորդեցրել է Տամատյանը, բանի որ դրանով հաստատած կլինեն, որ իրենք ապստամբներ են, մի բան, որը իրականութեան չի համապատասխանում, որովհետև իրենք ո՛չ հետևել են Տամատյանին և ոչ էլ նրա միջոցով մոլորված ու ապրստամբած են: Իսկ ինչ վերաբերում է տուրքերին, թեև իրենք ճիշտ չգիտեն ո՛չ այս տարվա և ոչ էլ մինչև այժմ եղած տուրքերի չափը, բայց պատրաստ են վճարել՝ ապստամբ չհամարվելու համար, միայն թե կառավարութիւնը պետք է հաշվի առնի իրենց տնտեսական դառն ու աղքատ վիճակը և ների տուրքերն ու նույնիսկ օգնի իրենց: Իսկ եթե կառավարութիւնն ու կուսակալ փաշան անպայման և անմիջապես ուզում են տուրքերը գանձել, այն ժամանակ իրենք կհեռանան երկրից և կայրեն ամեն ինչ<sup>1</sup>:

Ինչպես հաղորդում են արխիվային նյութերը և ժամանակի հայկական թերթերը, սասունցիների այս պատասխանը դժվարին կացութեան մեջ է գնում Թահսին փաշային: Առանց որևէ առիթ տալու փաշայի գործողութիւններին և առանց ուղղակի կառավարութեան դեմ ըմբոստանալու, հաջորդում իրականում որևէ դիջում չեն անում: Դրանից հետո փաշան մարտական գործողութիւններ չի ձեռնարկում և հունիսի 8-ին հեռանում է Սեմա-

1 Տե՛ս Գլակ Տարոնցի, Ապստամբ Սասունը:

լից՝ իր տեղը թողնելով Գենճի մյուսթեսարը՝ Մուստաֆա փաշային:

Ժամանակակիցների հուշերում պատմվում է, որ այդ նույն ժամանակ Տալվորիկի կողմերում, Խիանքի սահմաններին, կենտրոնանում էին մեծ քանակությամբ թուրքական զինվորներ և համիրիներ, թվով 4000—5000 մարդ, նպատակ ունենալով գրավել Մերկերի բարձունքը և այնտեղից գրոհել Տալվորիկի գյուղերի վրա:

Սասունցիները պարզ գիտակցում էին, որ Տալվորիկին հարված հասցնելուց և այն ընկճելուց հետո, այլևս անհնար կլիներ լուրջ դիմադրություն ցույց տալ թշնամուն ու պաշտպանել իրենց գյուղությունը: Ուստի, այլ ելք չտեսնելով, տալվորիկցիները և Սասունի մյուս շրջանների հայ գյուղացիները դիմում են գեներալ Այդ օրհասական պահին Տալվորիկին չէին կարող օգնության հասնել նրա մերձակա շրջանները, քանի որ նրանց վրա նույնպես կախված էր թշնամու հարձակման վտանգը: Շատախի գյուղերը օգնության չէին կարող հասնել՝ Բիթլիսից եկած թուրքական 400 զինվորի ներկայության պատճառով, իսկ Սեմալում նստած էր Մուստաֆա փաշան՝ Մուշից բերած իր 500 զինվորով: Այնպես որ Տալվորիկին կարող էին օգնել միայն Գելիեզուզան, Ալիանք և Շենիկ գյուղերը, այն էլ փոքրամթիվ ուժերով:

Տալվորիկցիները հույսը դնելով միայն իրենց վրա, կատարում են ուժերի ու միջոցների մորի-

լիզցիա, կազմակերպում են մարտական ջոկատներ և կովի դաշտ են դուրս բերում ավելի քան 400 մարդ<sup>1</sup>, մշակում են թշնամուն դիմադրելու պլան, ստեղծում են հատուկ խորհուրդ, որին անձնվում է ամբողջ շրջանի ղեկավարությունը և պաշտպանությունը կազմակերպումը<sup>2</sup>:

Հունիսի 14—16-ը տեղի են ունենում փոքրիկ ճակատամենք, որոնք ավելի շուտ հետախուզական բնույթ ունեին: Հունիսի 17-ի վաղ առավոտյան Սպիտակ սարից թուրքական զորքերը՝ երեք մասի բաժանված, գրոհում են Տալվորիկի Գալբո գյուղի վրա: Հայ գյուղացիները կազմակերպում են ուժեղ դիմադրություն: Բայց օրվա երկրորդ կեսին թշնամուն օգնության է հասնում 2000 մարդուց բաղկացած մի ջոկատ<sup>3</sup>: Դա հայ պաշտպաններին ստիպում է նահանջել: Գալբոյը անցնում է թշնամու ձեռքը: Բայց հենց նույն ժամանակ Տալվորիկի գյուղերին օգնության են հասնում շենիկցիները՝ Գրիգորի ղեկավարությամբ, և գելիեզուզանցիները, որոնք հանկարծակի ու շեշտակի հարվածով գրավում են թշնամու դիր-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԻ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, ֆ. 29, մ. ք. 891, ք. 1, ք. 23, ք. 1:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս «Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատական հրեշտակյան կուսակցության բառասնամյակին» (ժողովածու), Պարիզ, 1930, էջ 286:

բերը, հնարավորութիւն տալով տալ՝որիկցիներին՝ ճակատը պահելու և ասրա անցնելու հակահարձակման: Այստեղ տղամարդկանց հետ հերոսաբար մարտնչում էին նաև կանայք ու աղջիկներ: Զոհմանալով հայերի շեշտակի գրոհներին, թուրքական զորքը խուճապահար դիմում է փախուստի: Հայերը ոչ միայն ետ են վերցնում Գալբորը, այլև թշնամուն հետապնդում են մինչև Սպիտակ սարի ստորոտը և այդտեղից նրանց քշում դեպի հարավ: Այս արշունալի ճակատամարտում հայերն ունենում են 200, իսկ թշնամին՝ 1000-ից ավելի մարդու կորուստ<sup>1</sup>:

Հունիսյան մարտերից հետո կառավարութիւնըն և սկսում է նոր զորքեր կենտրոնացնել Սասունի սահմանների վրա: Տարվորիկի գյուղերը, ինչպես նաև Շենիկը, Սեմալը, Ալիանքը, Գելիեգուզանը, Աղբիկը պաշարվում են:

Գրութիւնը ծանր էր: Բնակչութիւնը բավականաչափ պաշար չունէր, թուրքական զորքի առկայութեան պատճառով նա ստիպված էր երեսօ վրա թողնել երկրագործական աշխատանքները և բարձրանալ լեռները: Մակայն, թշնամին մարտական գործողութիւնների շի դիմում, որովհետև, մի կողմից՝ բրդերը չէին գործակցում նրա հետ և հրաժարվում էին հայերի դեմ կովելուց, իսկ

<sup>1</sup> Տե՛ս «Հուշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցութեան քառասնամյակին», էջ 286:

էրա կողմից՝ սասունցիները, լքելով իրենց գյուղերը, բարձրացել էին լեռները (գլխավորապես Անտոք, Քեփի և Մովասար): Իսկ լեռներում նըրանց պարտութեան մատնելը շատ դժվար էր: Հաշվի առնելով այդ, թուրքական զորքի հրամանատարութիւնը, բավարարվելով մի քանի սասունցի հայերի ձեռքակալումով, զորքերը ետ է քաշում Մուշի դաշտը: Սասունցիները լեռներից իջնում են իրենց գյուղերը և ամբողջ աշունն ու ձմեռը մնում նազալ:

4. 1894 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՍՈՒՆԻ ԱԳՍԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1880-ական թվականներից, երբ ավելի սասուցան սուլթանական կառավարութեան հակառակները, իրենց կյանքի ու գույքի համար պայքարող հայերը աշխատում էին հարթել իրենց և բուրդ աշխատավորների միջև եղած առանձին թշուրթիմացութիւնները, ամրապնդել նրանց հետ ունեցած վաղեմի բարեկամութիւնը և միասնական ուժերով հանդես գալ ընդդեմ սուլթանական բռնապետութեան: Բայց նրանց շահողվից գլուխ բերել այդ կարևոր խնդիրը: Ընդհակառակը, կառավարութիւնը կարողացավ վերջնականապես որ կողմը գրավել բրդական վերնախավին՝ նրան մղելով հայ գյուղացիների դեմ, որը պայմանաւորված էր ինչպես կառավարութեան վարած քաղաքականութեամբ, այնպես էլ հայերի և բուրդ



վերնախավի տնտեսական շահերի հակամարտությամբ:

Տիրող կացության մեջ հայերին մնում էր միայն համախմբվել և միասնական ուժով ընդդիմանալ սուլթանական կառավարության ջարդարական քաղաքականությանը: Եվ իրոք, 1892—1893 թվականներին կառավարական զորքերի և քուրդ բեգերի դեմ մղած կռիվներում ձեռք բերած որոշ հաջողությունները սասունցիներին հույս էին ներշնչում, որ զենքով կարելի է ստանալ ազատություն, ապահովել իրենց կյանքի ու գույքի անվտանգությունը, վերջ տալ ծանր հարկահանությունը:

Այդ գիտակցությամբ սասունցիներն սկսում են նախապատրաստվել թշնամու հնարավոր հարձակումների դեմ: 1893 թվականին նրանք ջանքեր են գործադրում զենք ու զինամթերք ձեռք բերելու: Նույն թվականին Գրիգոր Մովսիսյանը յոթ մարդով մեկնում է Ահարոնք, անցնում զանազան վայրեր, աշխատելով ուղղամթերք փոխադրել Տալվորիկ ու Շենիկ: Ըստ էության Սասունը միավորվում է ահեղ վտանգի դեմ:

Սակայն, սասունցիներն զգում էին, որ միայն իրենց ուժերով չեն կարող հաջողության հասնել: Նրանք իրենց հույսերը կապում էին այլ շրջանների հայերի և, մասնավորապես, կովկասահայության օգնության հետ: 1893—1894 թվականների ձմռանը սասունցիներն իրենց ներկայացու-

ցիչներն են ուղարկում Թուրքիայի մյուս հայաբնակ նահանգները և Կովկաս՝ իմանալու համար, թե աղգային այդ շրջաններն ինչպիսի աջակցություն կարող են ցույց տալ իրենց: 1894 թվականի գարնանը հնչակյան գործիչներից մեկը՝ Արմենակը, զենք ձեռք բերելու և այլ կարգի օգնություն ստանալու նպատակով ուղարկվում է Խնուս, Պարին, ապա Կարս: Խնուսում նա հանդիպում է հնչակյան մի ուրիշ գործչի՝ Համբարձում Բոյաջյանին, որը նույն նպատակով դեռ 1893 թվականի սկզբին անցել էր Կովկաս, սակայն առանց որևէ արդյունքի այժմ այնտեղից վերադառնում էր Սասուն<sup>1</sup>:

Սասունը հիմնահատակ անելու նպատակով սուլթանական կառավարությունը դիմում է կրտսերով միջոցների: 1894 թվականի վաղ գարնանը նա արհեստավորներ է ուղարկում Տալվորիկի «Սատանայի» կոչված կամուրջը վերանորոգելու համար: Սա արդեն որոշակի կերպով ցույց էր տալիս, որ կառավարությունն անողոք միջոցների է դիմելու սասունցիների դեմ: Տալվորիկի Հարթք գյուղի բնակիչ Գասպար Խաչոյանի տանը հրավիրվում է Տալվորիկի շրջանի գյուղերի ներկայացուցիչների ժողով<sup>2</sup>: Ժողովը հանգում է այն եզ-

<sup>1</sup> Տե՛ս «Պայքար», 1964, հուլիսի 9:

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ» № 107, 1894, սեպտեմբերի 17: Տե՛ս նաև «Շաշարձան նվիրված սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության քառասնամյակին», էջ 286—287:

րակացութեան, որ հարկավոր է զենքով դիմադրել կառավարութեան բռնություններին և պաշտպանել հայ գյուղացիների կյանքն ու պատիվը: Ժողովում որոշվում է թույլ շտալ, որ վերակառուցվի կամուրջը: Այդ որոշման մասին տեղյակ են պահվում Գելիեզուզյան, Շենիկ և Սեմալ գյուղերը, որոնց ներկայացուցիչների Գելիեզուզյանի ժողովը՝ բննութեան առնելով տալիորիկ-ցիներով առաջարկությունը, անվերապահորեն միանում է դրան: Սասունցիները զենքով ստիպում են կամուրջը վերակառուցողներին դադարեցնել աշխատանքը և հեռանալ այնտեղից: Գրանից հետո իշխանությունը նպատակահարմար շի համարում անմիջապես զորք ուղարկել սասունցիների դեմ: Նա դիմում է այլ միջոցի. օգտագործելով առիթը՝ կաշառքի միջոցով, ինչպես նաև պաշտոններ տալու խոստումով ոտքի է հանում քրդական բեգերին և կոչ անում նրանց՝ հարձակվել Տալիորիկի ու նրա շրջակա հայկական գյուղերի վրա: Բեգերը՝ սնսալով կառավարության այդ հորդորներին, հարձակման են անցնում: Տալիորիկի լեռներում տեղի են ունենում կատաղի մարտեր: Թշնամին մեծ կորուստներ տալով (600 մարդ) նահանջում է: Այդ դեպքերի մասին հարգովում է Կարինի և Բիթլիսի կուսակալներին:

Սասունի վրա հարձակվելու հարցը լուծելու նպատակով Բիթլիսում հրավիրվում է հատուկ խորհրդակցություն, որին, բացի կառավարական

և զինվորական բարձրաստիճան պաշտոնյանեց, մասնակցում էին նաև քուրդ նշանավոր ցեղացիները՝ թվով 17 մարդ, ինչպես նաև քրդական համիդիե հեծելազորի պետ Բեհանդդին փայազան և ուրիշներ: Այդ խորհրդակցությունը որոշում է անհապաղ հարձակման անցնել Սասունի վրա և հիմնահատակ կործանել այն:

Սուլթան Արզուլ Համիդի հրամանով Սասունի վրա է հարձակվում Զեքի փաշայի հրամանատարության տակ գտնվող Բիթլիսի 4-րդ զորաբանակը: Այդ բանակի 12 հազար զինվորներ Սասունում գործում էին նրա գլխավորությամբ: Դիարբեքից Սասուն է ուղարկվում Օսման փաշայի հրամանատարության տակ գործող 3-հազարանոց զորախումբ<sup>2</sup>, Մուշից՝ 250-ից ավելի զինվոր, երկու թաղանթ, Բաղեշից՝ մի քանի հարյուր զինվոր ու երեք թնդանոթ, Կարինից՝ 2500 զինվոր ու երեք թաղանթ և այլն: Բացի թուրքական այս զորքեցից և 8 լեռնային թնդանոթից, հետագայում արտեղ են զալիս և նրանց միանում նաև քրդական կերտից, Հալեպից և անգամ Բաղդատից արած զորամասեր՝ 10 հրանոթով, ինչպես նաև

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, թ. 19—20; նաև «Մուրճ» № 10, 1894, հոկտեմբեր, էջ 1596:

<sup>2</sup> Տե՛ս Սուլթ. Վ. Դ. Լազարև, Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна. Т. 1896, стр. 29—30.

3000 համիրդիս գինվոր՝ Մահմադ-էլ-Աղասիի  
> 2200 գլխավորութեամբ<sup>1</sup>:

27 հրա-  
ւոր

Այսչափ զորք կենտրոնացնելով Սասունում, օսմանյան կառավարութիւնը, ամենից առաջ, ձեռնարկ արեց ոչնչացնել հայ ազատագրական շարժման այդ կենտրոնի հայ բնակչութեանը, որից հետո հաշիվի նստել մյուս հայաբնակ շրջանների հետ հայերի գանգվածային ոչնչացմամբ «լուծել» հայկական հարցը: Դա արդեն օսմանյան կառավարութեան հետապնդած քաղաքականութիւնն էր, որի իրականացման համար սուլթանական իշխանութիւնները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում:

Սասունցիները լավ էին հասկանում, թե ինչ է պատրաստվում իրենց դեմ: Նրանք այլ ելք չունեին, բացի զինված ինքնապաշտպանութիւնից:

Սասունի վիճակն անհանգստացնում էր Արեւմտյան Հայաստանի մյուս շրջաններին: Այդ հարցով առանձնապէս մտահոգված էր Մուշի գաշտի բնակչութիւնը, որի ներկայացուցիչները Մուշ քաղաքից հեռագրում են Կոստանդնուպոլսի կառավարութեանը՝ խնդրելով նրան դադարեցնել Սասունի պաշարումն ու սկսած սոսկալի հալածանքը: Բայց այդ հեռագիրը, ինչպես և պետք է սպասել, կառավարութեան կողմից գնահատվեց

<sup>1</sup> Տե՛ս «Новости» № 245, 7-го сентября 1894 г. Տե՛ս նաև «Новое обозрение» № 3739, 14-го ноября 1894 г.

պէս ցույց, որպէս բացարձակ ըմբոստութիւն: Այդքի նկատմամբ սկսվեցին նոր հալածանքներ, որոնք մարդիկ բանտարկվեցին: Միայն 11 գյուղից միայն փաշայի կարգադրութեամբ ձերբակալվեցին հայ և բանտ նետվեց: Սասունցիները բոլորովին զրկվեցին դրսի հետ հաղորդակցութիւն անհատական հնարավորութիւնից: Օղակելով Սասունի թուրքական կառավարութիւնը հայերից պահանջում էր միանգամից վճարել 157.000 ղուրուշ արծաթ և թուրքական իշխանութիւններին հանձնել Սասունի երեւելի մարդկանց՝ թվով 67 հոգի<sup>1</sup>: Դրանք այնպիսի պահանջներ էին, որ երբեք հնարավոր չէր կատարել:

1894 թվականի հուլիսի 15-ին Շենիկ գյուղում, որտեղ Մուշիսյանի տանը, հրավիրվում է Սասունի գյուղապետների և ակտիվ գործիչների հարգակցութիւն: Այդ խորհրդակցութիւնը՝ որտեղ գնահատելով ստեղծված իրավիճակը, նշում էր սուլթանական կառավարութիւնը ուժից վերջ տալու անիրագործելի պահանջներ առաջադրելով՝ որտեղ է առիթ ստեղծել Սասունի հայ բնակչութեանը ոչնչացնելու: Խորհրդակցութիւնը միաժամանակ քննարկում և հաստատում է պաշտպանութեան նոր ծրագիր, որի համաձայն, դիմապատրաստ կենտրոնը պետք է լինէր Գեղիկ գուզան—Սալմաղիկ—Սպաղանք գիծը, թիկունք ունենալով

<sup>1</sup> Տե՛ս Գլակ Տարնցի, Ապստամբ Սասունը, Ժնև, 1903.

Անտոք և Քեփի լեռները, իսկ առջև՝ Սասուն գետը և Գելիեգուզանի հյուսիսային բարձունքները: Այդ գծի կենտրոնը Տալվորիկն էր: Եթե անհար լիներ պաշտպանել այդ գիծը, ապա տամբուկ վերջին կետը պետք է լիներ Անտոք լեռնաշղթան՝ իր գագաթներով: Սննդի պաշար ապահովելու համար որոշվում է անասուններ, գյուղատրնտեսական մթերքներ կուտակել Անտոքում:

Հայերի զինված ուժերի ընդհանուր թիվն անհայտ է: Աղբյուրներում նշվում է, որ Տալվորիկից դուրս էր եկել 309 հրացանավոր, Գելիեգուզանից՝ 741, Շենիկից՝ 208, Սեմալից՝ 160, Իխանաձորից՝ 180, Հեթինքից՝ 34, Աղբիկից՝ 120, Ալիանքից՝ 208, ընդամենը՝ 1960, և այլն<sup>1</sup>:

Թուրքական հրոսակախմբերի հարձակողական գործողություններն սկսվում են Շենիկ գյուղի վրա հուլիսի 27-ին, բազկցի բռնվոր քրդերի հարձակումով: Այդ հարձակմանը Շենիկի հայերը պատասխանում են հակահարձակմամբ: Շենիկցիները՝ Փրկզոր Մովսիսյանի գլխավորությամբ, պարտության են մատնում նրանց և հետո բռնաբերենց գյուղի սահմաններից: Անտոքի կողմերում թշնամու մի մեծ զորաջոկատի դեմ մարտեր է մղում Համբարձում Բոյաջյանի ղեկավարությամբ գործող հայկական ջոկատը:

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, ք. 84:

Հայերի հաջողությունն ավելի է զայրացնում թշնամուն: Համիրդիները ղեկավար Բեհհադդին աշան շարժման մեջ է դնում իր տրամադրության տակ եղած բոլոր ուժերը և հուլիսի 27-ի 28-ի գիշերը հարձակվում է Շենիկ գյուղի վրա: Սեմալցիները օգնության են գալիս շենիկցիներին: Հուլիսի 28-ին տեղի են ունենում լուրջ մղվածքներ, որոնք ավարտվում են հայերի հաղթանակով: Հետևյալ օրը վերսկսվում են կռիվները, որոնք փոփոխակի հաջողություններով շարունակվում են մինչև հուլիսի վերջը:

Օգոստոսի սկզբներին համիրդի ուժերին օգնության են գալիս մեծ թվով թուրքական զորքեր: Օգոստոսի 2-ի լուսադեմին կռիվները բորբոքվում են նոր ուժով, մինչև կեսօր հաջողությունը հասնի կողմն էր. շենիկցիներն ու սեմալցիները հարստաբար պաշտպանում են իրենց հայրենի տները, բայց կեսօրից հետո թշնամին ստանալով նոր ուժեր՝ նեղում է հայերին, որոնք նահանջելով անցնում են Սասունի դեղք և ամրանում Ալիանքի բարձունքներում: Թշնամին գրոհելով Տալվորիկը և հրդեհում է արդեն դատարկված Շենիկ ու Սեմալ գյուղերը: Շենիկի և Սեմալի պաշտպաններին օգնության է հասնում Գելիեգուզանի կոմսասարդական ջոկատը (400 մարդ), որը բարձրվելով դեպի Շենիկ, ուղղակի գրոհում է Մերձուղանի թուրքական բանակի վրա<sup>1</sup>: Լեռնա-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, ք. 84:

կանների այդ հանդուգն ու շեշտակի հարվածից խուճապի մատնված թշնամին դիմում է փխուստի:

Այդ մարտերում թշնամին տալիս է 359 սպանված, իսկ հայերը՝ մոտ 45 սպանված և հարյուր վիրավոր<sup>1</sup>:

Համառ կռիվներ են տեղի ունենում օգոստոսի 3-ին: Սասունը պաշարող թուրքական զորքերը համիդիե զնդերը, գործի դնելով հրետանին, բաւր կողմերից գրոհ են սկսում հայերի դեմ: Նրանք միաժամանակ հարձակվում են Տաւլորիկի իշխանաձորի, Աղբիկի, Անտոքի վրա: Հարձակման պատակը Գելիեզուզանի գրավումն էր: Մովսսսւրի գագաթից ռումբեր էին տեղում հայկական գյուղերի վրա:

Կառավարական զորքերը հարձակում են ըկրսում նաև Շատախի գյուղերի վրա: Շատախի գյուղերի բնակիչները, իշպես նաև Քոփի, Կերմավի, Գեղաշենի գյուղացիները, շկարողանալով դիմանալ թշնամու գերազանց ուժերի ճնշմանը, մանավանդ թնդանոթի կրակին ու հեծելազորի գրոհին, ստիպված թողնում են իրենց բնակավայրերն ու նահանջում<sup>2</sup>: Նրանցից ոմանք հեռանում են դեպի Մուշի դաշտը, ոմանք՝ բարձրանում լեռները, իսկ մարտնշողները հասնում է

Գելիեզուզանի սահմանները և ամրանում կրնկեռւից մինչև Հարսնաքար գծի վրա<sup>3</sup>:

Այն ժամանակ, երբ Շատախի գյուղերը ծխում էին թնդանոթների արկերից, Փսանքի և Հազդոյի կողմերից եկած թշնամու ուժերը հարձակվում են Հեթինք և Աղբիկ գյուղերի վրա: Հայերի համառ դիմադրությունը ճնշվում է: Հայ պաշտպանները՝ աղբիկցի հաշոյի գլխավորությամբ, նահանջում են և դիրքեր են բռնում Սասունի գետի աջ ափին, գետի հոսանքով մինչև Սպաղանքի բարձունքները: Թըշնամին փորձ է անում անցնել գետը և մտնել Սասունի խորքը: Բայց հայերը, օգտվելով իրենց դիրքային առավելությունից, թույլ չեն տալիս թըշնամուն իրականացնել իր մտադրությունը<sup>2</sup>:

Սպիտակ սարի բարձունքներից թշնամու մյուս ուժերը գրոհում են տաւլորիկցիների և Քեփի սարի վրա ամրացած իշխանաձորցիների ու խիանքցիների վրա՝ Տաւլորիկը գրավելու համար: Բայց տաւլորիկցիներն ու խիանքցիները հերոսաբար պաշտպանում են ճակատը և կասեցնում թշնամու առաջխաղացումը: Գլխավոր ռազմաճակատը Ալիանքի ռազմաճակատն էր<sup>3</sup>, որն ընդգրկում էր Անտոքից մինչև Կրնկեռլ՝ կիսաշրջան կազմելով Գելիեզուզանի շուրջը, որտեղ և հավաքվել էր Սա-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, Բ. 84—86:  
Տե՛ս նաև «Մուրճ» № 10, 1894, էջ 1501. «Մշակ» № 131, 1894, նոյեմբերի 12:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, Բ. 84:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը: Տե՛ս նաև «Մուրճ» № 10, 1894, էջ 1500—1501. «Մշակ» № 131, 1894:

սունի մարտիկների ամենաընտիր մասը: Այս նա-  
կատում էին կենտրոնացել նաև թշնամու հիմնա-  
կան ուժերը՝ թուրքական գրեթե ամբողջ բանակը  
և բրդական անկանոն ուժերի մի զգալի մասը:  
Թշնամին հարձակվում էր երկու ուղղությամբ՝  
Սեմալի ուղղությամբ դեպի Չայ գետը, Կրնկեոյ,  
Մերկեր և Ալիանք: Գրիգորը շենիկցիների և սե-  
մայցիների ուժերով բռնել էր թշնամու աջ թևը,  
գելիեգուզանցիները և ալիանքցիներն անցել էին  
ձախ թևը, իսկ տալլորիկցիները՝ դիրքեր էին  
գրավել կենտրոնում<sup>1</sup>:

Հայ մարտիկներին ուղղամթերք և սնունդ  
էին մատակարարում կանայք և աղջիկները, ո-  
րոնք միաժամանակ հերոսաբար մասնակցում էին  
մարտերին: Նրանց մեջ աչքի էին ընկնում ալի-  
անքցի 67-ամյա Հավսեն, շենիկցի Շաքեն, սե-  
մալցի Մարգոն և շատ ուրիշներ<sup>2</sup>: Ճակատամար-  
տը համառ էր ու երկարատև: Չնայած սասունցի-  
ների անվեհերությունն ու քաջագործություններին,  
թշնամին իր անհամար դիակների վրայով առաջ  
էր սողում, նրա առաջապահ ուժերը հասնում են  
Գելիեգուզան ու գրավում այն: Այդ կովում արիա-  
բար զոհվում է գելիեգուզանցի Պետոն: Ամեն ինչ  
կարծես կորած էր, սակայն Գրիգորը, որը ամ-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 56, դ. 145, թ. 84—85:  
Տե՛ս նաև «Մուրճ» № 10, 1894, էջ 1501. «Մշակ» № 131,  
1894:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

բացել էր գյուղի բարձունքների վրա, վերջին ճի-  
գերը գործադրելով և համախմբելով սասունցինե-  
րին՝ անցնում է հարձակման: Գելիեգուզանի ուղ-  
ղությամբ թշնամու զորքերը բռնել էին ամբողջ  
նորը և գյուղի մատույցները: Անտոքի բարձուն-  
քից հայերը ժայռեր էին գլորում նրանց վրա:  
Սասունցիներն ընդհանուր թափով հարձակման են  
անցնում, իսկ թշնամին զանգվածորեն նահան-  
ջում է՝ տալով մոտ 800 զոհ: Հայերը ետ են գրա-  
վում իրենց թողած դիրքերը. Անտոք—Ալիանք—  
Կրնկեոյ գիծը նորից անցնում է հայերի ձեռքը:  
Այս կովում հայերից զոհվում է 100 մարդ (23  
գելիեգուզանցի, 15 ալիանքցի, 14 շենիկցի, 9  
սեմալցի, 7 իշխանաձորցի, 6 աղբիկցի և այլն):  
Չոհվածներից 17-ը կին էր<sup>1</sup>:

Այսպիսով, օգոստոսի 3-ին թուրքերի սկսած  
ընդհանուր հարձակումն իր նպատակին չի հաս-  
նում: Սակայն Աղբիկի գրավումով թշնամուն հա-  
ջողվում է նպատակովոր դիրքեր ձեռք բերել իր նոր  
հարձակումների համար: Սասունցիներն էլ որոշ  
առավելություններ են ստանում, ամրապնդելով  
իրենց պաշտպանության երկրորդ գիծը:

Օգոստոսի 4—6-ը նոր սաստկությամբ շարու-  
նակվում են կռիվները այդ գծի ուղղությամբ:  
Թշնամու վիթխարի ուժի ճնշման տակ, ընդհա-  
նուր հոգնածությամբ, ուղղամթերքի պակասու-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 56, դ. 145, թ. 84—85:  
Տե՛ս նաև «Մշակ» № 131, 1894, նոյեմբերի 12:

թյան պատճառով և պաշտպանական նկատա-  
ռումներով սասունցիները թողնում են երկրորդ  
գիծը և ամբանում երրորդ պաշտպանական գծի  
վրա: Թշնամին գրավում է նաև այդ գիծը՝ նեղաց-  
նելով պաշտպանության օղակը: Թուրքերը հըր-  
կիզում են հայկական գյուղերը: Հայերը քաշվում  
են անառիկ Անտոք լեռը: Գելիեգուզանցիները,  
իշխանաձորցիները, շենիկցիները և սեմալցիներ-  
ը ամբանում են Անտոքի վրա, իսկ տալվարիկ-  
ցիները՝ իրենց հարևան գյուղերով՝ Ֆոֆոքար լե-  
ռան վրա: Անտոքի բարձունքներում հավաքվել  
էր 21.745 մարդուց բաղկացած մի բազմություն,  
սկսած մանուկներից, վերջացրած ծերերով: Թըշ-  
նամին ավելի է ուժեղացնում իր ճնշումը օգոս-  
տոսի 8-ի հարձակմամբ: Շատախի բոլոր գյուղե-  
րը, հասունացած արտերն ու դեղերը այրվում ու  
մոխրի են վերածվում թուրք հեծյալների ձեռքով:  
Ինչպես նշվում է աղբյուրներում, աննկարագրելի  
էր օսմանյան զորքերի ու քուրդ բեգերի կատա-  
րած բարբարոսությունները: Գետաշենն այրվում  
էր ոռամբերի հարվածների տակ, Սպաղանքը ծը-  
խում էր մոխիրների միջից: Նույնը նաև մյուս  
բնակավայրերը: Թշնամին թնդանոթային կրակով  
և մարդկային մեծ բազմությամբ ամեն կողմից  
սկսում է գրոհել Անտոքի և Սպաղանքի վրա: Սա-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, Թ. 85: Տե՛ս  
նաև «Մուրճ» № 10, 1894, էջ 1501. «Մշակ» № 131, 1894,  
նոյեմբերի 12:

սունցիների փրկության բոլոր ճանապարհները  
փակված էին, նրանց մնում էր մարտնչել մինչև  
մահ: Տղամարդկանց հետ հերոսաբար կռվում էին  
նաև կանայք, պատանիներ ու ծերունիներ: Թըշ-  
նամին այդ համառ դիմադրության առաջ տեղի է  
տալիս և ետ քաշվում: Սասունցիները գրավում  
են նրանց թողած դիրքերը<sup>1</sup>:

Օգոստոսի 9—12-ը կռիվները մեղմանում են:  
Թշնամին ձգտում էր պաշարումով սպառել հայե-  
րի ռազմամթերքն ու սննդեղենի պաշարը, որին  
և նա հասնում է<sup>2</sup>: Օգոստոսի 13-ին թշնամին  
վերսկսում է իր հարձակումը Անտոքի վրա, որն  
անընդմեջ տևում է 17 ժամ<sup>3</sup>: Սասունցիների վրա  
հարձակումը կատարվում էր բոլոր կողմերից.  
կենտրոնը նորից Գելիեգուզան գյուղն էր: Մար-  
տաղաշտը ներկվում է արյունով և ծածկվում  
մարդկային դիակներով: Ականատեսների թողած  
հիշողություններում պատմվում է, որ թե՛ մար-  
տից հետո, երբ թշնամին սկսում է փախուստ  
տալ, 18-ամյա Աղամը՝ կանգնած մի քարաժայռի  
վրա, ճոճելով բերդանկան, աղաղակում է.  
«Շեն՛բ, վատե՛ր, փախե՛ք, ասե՛ք ձեր մեծին, որ  
գա այստեղ յուր սև զինվորներով, սասունցիք բո-  
լորի համար ունեն տաք գնդակներ, անմիտնե՛ր,

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, Թ. 85: Տե՛ս  
նաև «Մուրճ» № 10, 1894, էջ 1501. «Մշակ» № 131, 1894:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

ինչո՞ւ պարապ տեղը կթափեք ձեր արյունը, օրը տաքացեր է և հունձի ժամանակը հասեր. թողեք այս երկիրը...»<sup>1</sup>:

Թշնամու հրանոթների կրակի տակ ավերվում է Գեղիեգուզանը, զգալի շափերի են հասնում մարդկային զոհերը: Թշնամու բանակից զոհվում է 275 մարդ, իսկ հայերից՝ 236<sup>2</sup>: Կովի դաշտը նորից մնում է հայերին, բայց իսպառ վերջանում է նրանց ուղմամթերքը: Թշնամին ստանալով նորանոր ուժեր, կրկին անցնում է հարձակման:

Հայերի հերոսական դիմադրության ազդեցության տակ թուրքական բանակում ծայր է առնում երկպառակություն: Քրդերը՝ տեսնելով իրենց մեծ կորուստները, հանդես են գալիս հրամանատարության դեմ: Նրանք սկսում են կասկածել, թե արդյո՞ք կառավարությունը դիտավորյալ չի կոտորել տալիս իրենց: Քրդերի մեջ ուժեղանում է դժգոհությունը, և շատերն ուզում են տուն վերադառնալ: Հաշվի առնելով այդ և սասունցիների համառ դիմադրությունը, օսմանյան զորքի հրամանատարությունը դադարեցնում է հարձակումը և ջանքեր գործադրում բանակցությունների անվան տակ խաբեություն մեկի բերել և ապա ոչընչացնել հայերին: Թուրքական բանակի հրամանատար փաշան պատվիրակություն է ուղարկում Անսոթ և առաջարկում հայերին անձնատուր լի-

նել<sup>1</sup>: Նա սուլթանի անունից խոստանում է, որ անձնատուր լինելու դեպքում ներում է շնորհվելու բոլորին, եղած վնասները փոխհատուցվելու են պետական գանձարանից, և Սասունը հայտարարվելու է հարկերից ազատ:

Ստեղծված հանգամանքներում այդպիսի առաջարկությունը հայերի համար գայթակեցնող էր: Փաշային պատասխան տալու համար հրավիրվում է հայ պաշտպանական զորախմբերի ղեկավարների խորհրդակցություն, որտեղ լինում է երկու՝ իրար հակադիր առաջարկություն: Խորհրդակցության մասնակիցները մի մասը՝ Գրիգոր Մովսիսյանի գլխավորությամբ, պահանջում է կովել մինչև վերջ և անձնատուր չլինել, հայտարարելով, որ «օսմանցին չի կարող մոռանալ յուր կորուստները, վաղ թե ուշ՝ պիտի աշխատի պատժել մեզ այն բոպեին, երբ մենք անպաշտպան կլինենք, լավ է, որ այսօր խառնենք մեր արյունը մեր եղբայրներու արյան հետ և զլուխ չծռենք անգութ օտարին: Շնորհակալ ենք այն բարեսրտութենեն, որ սուլթանը ցույց կուտա մեզ, փոխարինել ուղելով անձնական դանձեն մեր կորուստները: Հեռացեք մեր երկրեն ու խաղաղությունն ինքնրստինքյան տեղի կունենա»<sup>2</sup>:

Հայ մարտիկների մյուս մասն ուզում էր ըն-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍԹ ՊԿՊԱ, ֆ. 56, դ. 145, թ. 82:

<sup>2</sup> Նույն տեղը: Տե՛ս նաև «Մուրճ» № 1, 1894, հոկտեմբեր, էջ 1501:

<sup>1</sup> Հայկ. ՍՍԹ ՊԿՊԱ, ֆ. 56, դ. 145, թ. 82:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:



դունել թուրքական բանակի հրամանատարության առաջարկությունը: Այս վերջին տեսակետը պաշտպանում էր նաև Համբարձում Բոյաջյանը: Այդ օրը որոշում չի կայացվում և որոշակի պատասխան չի տրվում:

Օգոստոսի 15-ին փաշան 500 զինվորներով անձամբ գալիս է Անտոքի ստորոտը և համոզում է հավատալ տված խոստումներին ու գալ բանակցության: Ռազմամթերքի և սննդի բացակայությունն ստիպում է սասունցիներին մի մասին՝ ընդունել բանակցությունների առաջարկը: Ընտրվում է 148 մարդ<sup>1</sup>, սեմալցի Տեր-Հովհաննեսի գլխավորությամբ, և ուղարկվում Սեմալ՝ փաշայի զորակայանը: Սակայն այստեղ ոչ թե բանակցություններ են տեղի ունենում, այլ՝ օրհասական մարտեր: Թուրքական մեծաթիվ զինված ուժերը, աբցանի մեջ վերցնելով հաջ բանագնացներին, սկսում են կոտորել նրանց: Հայերը կուլում են անօրինակ հերոսությամբ: Աղբյուրներում բերված է մի ծերունու օրինակ, որը ահեղ խենչալը ձեռքին, իրար ետևից դիակներ փռելով, անվհատ առաջ էր ընթանում: Նրա ետևից գալիս էր որդին՝ աղաղակելով. «Հա՛յր, հա՛յր, քաջազունք ւայսպես

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, Թ. 83: (Որոշ աղբյուրներում այդ թիվը հասցվում է 300 մարդու:) Տե՛ս նաև Полк. Я. Д. Лазарев, Причины бедствий армян в Турции..., стр. 33.

կոստնուն դիակաց վրայեն»<sup>1</sup>: Նրանք բոլորն էլ նահատակվում են:

Այդ կոտորածից հետո թուրքական զորքերը վերսկսում են իրենց հարձակումը Անտոքի վրա: Կռիվը շարունակվում է մինչև ուշ գիշեր, մինչև որ հայերի կողմից որևէ դիմադրություն այլևս անկարելի է գտնում՝ ուղղամթերքը լիովին սպառվելու պատճառով: Անտոքը պաշարվում է, գելիեզուզանցիները, իշխանաձորցիները և սեմալցիների կեսը անցնում են Ֆոֆոքար լեռ: Գրիգորը շենիկցիների, ալիանքցիների ու մնացած սեմալցիների հետ ամրանում է իր տեղում, կատաղորեն կռվելով 6 օր, առանց հրադենի, քաբերով ու սրերով: Սովից, հոգնածությունից ու ժասպա՞ ընկնում են շատ կռվողներ, որոնց փոխարինում են կանայք: Օգոստոսի 22-ին, անհնարին լինելով այլևս մնալ սոված, Գրիգորը, Անտոքի պաշտպանությունը հանձնելով կանանց, մի խումբ քաջերի գլուխ անցած՝ իջնում է Խուլբ ու Խիանք գավառները, այնտեղից պարեն և, ըստ հնարավորության, նաև ուղղամթերք ձեռք բերու համար<sup>2</sup>:

Օգոստոսի 23-ին 24 ժամ շարունակ թշնամին հարձակվում է Անտոքի կին պաշտպանների վրա: Սասունցի կանայք, որոնք հերոսաբար դիմա-

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, Թ. 83:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը: Տե՛ս նաև «Մշակ» № 131, 1894, եռյամբերի 12. «Մուրճ» № 10, 1894, էջ 1502:

գրում էին, անկարող էին երկար շարունակել այն նրանք քաշվում են դեպի Քեփի լեռը: Թշնամի է գրավում է Անտոքը: Կանայք՝ գրկած իրենց մանուկներին, մարտնչում են ցաքուցրիվ, քարերով ու սրերով, ընկնում են վերքերով ծածկված: Կենդանի մնացածները անինսա թրատվում են: Թշնամին հասնում է Քեփի, հայուհիների համար փրկության բոլոր դռները փակվում են, թշնամին հանձնվելու առաջարկություն է անում: Սակայն հայ կանայք մերժում են այդ առաջարկությունը: Գրիգորի հարս Շաքեն կոչ է անում բոլորին՝ «Սասունցի կանայք, ձեզ կմնա այն որոշել, թե լավ կհամարեք զերի գնալ... անպատվել ձեր սրբունքի պարսավանս ամբողջ հայության, թե՛ կհետևեք իմ օրինակին»<sup>1</sup>, և իրեն նետում է ժայռից ցած՝ Անտոքի վիթխարի անդունդի մեջ: Նրա հերոսական օրինակին են հետևում նաև մյուսները: Միայն 50 կին ու մի քանի հարյուր մանուկ գերվում ու տարվում են փաշայի մոտ: Փաշան նրանց հրամայում է ընդունել մահմեդականությունը, բայց բոլորն էլ մերժում են: Դրանից հետո, առանց հաշվի առնելու նրանց սեռն ու տարիքը, անգթորեն սրախողխող են արվում:

Տալվորիկը ուժասպառ էր եղել, նոր դիմադրության համար այլևս ուժեր չկային: Գրիգորի կարգադրությամբ 23 մարդ (այդ թվում Գևորգ

Չավուշը, Ադամը և ուրիշներ) մնացել էին Մուրադի հետ<sup>1</sup>, որոնք թաքնվել էին Ֆուֆոքարի Ձկնգյուղ կոչված քարանձավում: Թշնամիները շրջապատում են քարայրը, դիմադրությունն անօգուտ էր: Հայերի այս խումբն անձնատուր է լինում և տարվում է Մուշ<sup>2</sup>: Գրիգորը, որը գնացել էր բազմամթերք և անդամթերք հայթայթելու, Հեգինի ճանապարհին, Սպիտակ աղբյուրի մոտերքում շրջապատվում է թշնամու կողմից: Այստեղ աեղի է ունենում մի ահեղ մարտ: Ալիանքցի Վարդան Ալեյանցը, ինչպես հաղորդվում է արխիվային մի փաստաթղթում, սուրը ձեռքին, կռվի մեջ թրատվում է մաս առ մաս և հերոսաբար ընկնում մարտադաշտում: Մարտում հերոսաբար զոհվում են նաև շատ ուրիշներ: Գրիգոր Մովսիսյանը վիրավոր, գիտակցությունը կորցրած, զերի է վերցվում ու բերվում թուրքական փաշայի զորակայանը, որտեղ և դաժանորեն սպանվում է: Նրա վերջին խոսքը լինում է՝ «Կեցցե՛ Հայաստանը»<sup>3</sup>:

Ինչպես տեսանք, շնայած նյութական ծանր պայմաններին և անլուր զրկանքներին, նահապետական զենքերով կռվող սասունցի գյուղացիները կատարեցին բազմամթիվ սխրագործություններ և

<sup>1</sup> «Մշակ» № 129, 1894, նոյեմբերի 8:

<sup>2</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. 1, л. 91.

<sup>3</sup> Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, թ. 83:

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, թ. 83:

ցույց տվեցին խիզախութեան ու անձնագոհութեան զարմանալի օրինակներ: Բայց ուժերն անհավասար էին: Սուլթանական վիթխարի բանակը ջարդելով հայերի դիմադրությունը, մտավ Սասուն և անասելի կոտորածներ ու ավերածություններ սարքեց այնտեղ: Իսպառ ավերվեց 48 հայկական գյուղ, բնագորավեցին հայերին պատկանող ամբողջ հացահատիկը և անասունները, ոչնչացվեցին ողջ այգիները, քարուքանդ արվեցին ջրաղացները, հիմնահատակ կործանվեցին եկեղեցիներն ու վանքերը, սրի քաշվեց 10—16 հազար մարդ<sup>1</sup>:

ՍՍՌՄ արտաքին գործերի մինիստրության և Հայկական ՍՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվներում, ինչպես նաև ժամանակի մամուլում բազմաթիվ նյութեր կան Սասունում կատարված ջարդերի ու ավարառությունների մասին: Փաստաթղթերից մեկում նշվում է, որ թուրքական զորքերը Գեղիեզուզան գյուղում այրել են 360 տուն, Շենիկում՝ 106, Սեմալում՝ 85, Ալիանդում՝ 165, Իշխանաձորում՝ 78, Աղբիկում՝ 66 տուն և այլն, որոնց անապաստան մնացած բնակիչները ամբողջությամբ սրի են քաշվել:

<sup>1</sup> Տե՛ս Մ. Նեուխյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ. նրկան, 1955: Տե՛ս նաև *Эм. Диллон и Фр. Грин*, Положение дел в Турецкой Армении и Турецкая зверства в Сасуне, М., 1896, стр. 57. Տե՛ս նաև *Я. Д. Лазарев*, Причины бедствий армян в Турции..., стр. 32—33.

Շատախի, Խուլբի, Խիանքի, Փսանքի և այլ գավառների բնակիչների մի զգալի մասը ոչնչացվում է<sup>2</sup>: Պաշտոնական հաշվետվություններով, 14.600 մարդ մնում է սոսկալի ծանր նյութական ու բարոյական կացութեան մեջ: Թշնամին՝ կոտորվելով հայերի ամբողջ ունեցվածքը, ստիպում է կենդանի մնացածներին՝ ցրվել լեռները, մնալ անօթևան, դառնալ թափառական<sup>3</sup>:

Սասունի կոտորածից հետո թուրքական 8000 զինվորներ<sup>4</sup> իջնում են Մուշի դաշտ, մտնում հայկական գյուղերը, կերակրվում հայ գյուղացիների հաշվին և նրանցից պահանջում՝ թողնել իրենց տները, հողերը, ունեցվածքը ու դուրս գալ երկրից: Այստեղ ավերվում է ավելի քան 20 հայկական գյուղ (Խզաղաճ, Տատրագոմ, Ս. Հովհաննեսի վանք, Մառնիկ, Խորոնք և այլն): Սուլթանական կառավարությանը բազմաթիվ բողոքներ են ուղարկվում, բայց բոլորն էլ մնում են անհետևանք: Մուշում և բազմաթիվ գյուղերում տեղի են ունենում հայերի ձերբակալություններ և բռնի թրջացում<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. I, 213—214.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, յ. 173:

<sup>3</sup> Տե՛ս «Новое обозрение», № 3696, 1894, հոկտեմբեր:

<sup>4</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, թ. 78—82:

<sup>5</sup> Տե՛ս նաև «Մշակ» № 131, 1894, նոյեմբեր 12. «Մուրճ» № 10, 1894, հոկտեմբեր, էջ 1504:

1894 թվականի Սասունի ապստամբությունը հաջողություն չունեցավ, որովհետև ուժերը խիստ անհավասար էին: Օսմանյան հսկայական կայսրությունից սիստեմոս ապրող լեռնային Սասունի մի բուռ բնակչությունը չէր կարող դիմանալ այն վիթխարի ուժին, որը զուրս էր բերել սուլթանական կառավարությունը նրա դեմ:

Ապստամբությունը հաջող ելք կարող էր ունենալ, եթե համառ և տևական աշխատանքով ամուր կապեր հաստատվեին Արևմտյան Հայաստանի բոլոր շրջանների, ինչպես նաև Թուրքիայում բռնակվող մյուս ճնշված ու հալածված ժողովուրդների միջև, միավորվեին նրանք ընդհանուր թըշնամու դեմ: Կտրված մնալով արտաքին աշխարհից, դրսից շատանալով ո՛չ նյութական և ո՛չ էլ ռազմական օգնություն, Սասունը մենակ մնաց թուրքական բանակի և քրդական համիդիե հեծյալ զնդերի դեմ:

Ապստամբությանը նախորդած տարիներին թուրքական կայսրության մեջ բնակվող ազգերին ու ժողովուրդներին իրար հակադրելու սուլթանական կառավարության վարած քաղաքականությունը, տվել էր իր արդյունքը. կառավարությանը հաջողվել էր կաշառքի ու այլ խարդախ միջոցներով իր կողմը գրավել քրդական վերնախավին, օգտագործել քրդական ռեակցիոն տարրերին ու նրանց միջոցով խարխուլել ու քանդել հայ-քրդական բարեկամական կապերը, քրդերի մի որոշ մասին

զուրս բերել հայերի դեմ, մի բան, որ խիստ բացասաբար անդրադարձավ ապստամբության ընթացքի վրա:

Այդ անհաջողության պատճառներից մեկն էլ արևմտյան մեծ տերությունների երկդիմի քաղաքականությունն էր, մի քաղաքականություն, որի նպատակն էր փոքր ժողովուրդների արյան գնով նորանոր դիշումներ կորզել Թուրքիայից: Եվ իրոք, այդ շրջանում ձևավորվող իմպերիալիստական խմբավորումները Մերձավոր և Միջին արևելքի երկրներին տեր դառնալու և Թուրքիայում գերիշխող դիրք գրավելու նպատակով անդրկուլիսյան համաձայնություններով զոհաբերում էին փոքր ժողովուրդներին և, մասնավորապես, խրախուսում էին Թուրքիայի հայաջինջ քաղաքականությունը:

Սասունի ապստամբության պարտությունը չընկճեց արևմտահայությունը: Գրանից հետո Արևմտյան Հայաստանի տարբեր մասերում սուլթանական կառավարության բռնությունների ու տիրապետող վերնախավերի կամայականությունների դեմ սկսվեցին նոր ելույթներ և պաշտպանական մարտեր: Սասունցիների 1894 թվականի ապստամբությունը արևմտահայության կյանքում Նշանավոր իրադարձություն էր, այն արևմտահայ աշխատավորության ազատատենչ ոգու մի նոր արտահայտություն էր, իր գոյությունը զենքով պաշտպանելու հերոսական մի օրինակ: Այդ ապստամբությունը բարձր ոգևորություն առաջացրեց

նաև սուլթանական չժի տակ հեծող մյուս ժողովուրդների մեջ և ուժեղացրեց նրանց աղատագրական շարժումները: Այդ ազդեցություն տակ ազատագրական շարժումը նոր թափ ստացավ Մակեդոնիայում: 1895 թվականին իր գեկուցագրերից մեկում (ուղղված Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին) Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Նելիդովը գրում է. «Դուռը դեռ չհասցրած հաղթահարել հայկական հարցը (խոսքը Սասունի ապստամբությունը ճնշելու մասին է— Կ. Թ.), նրա առջև կանգնեցին նոր, ավելի վտանգավոր դժվարություններ Մակեդոնիայում»<sup>1</sup>:



Սուլթանական բռնակալության դեմ ուղղված 1894 թվականի սասունցիների ելույթը ինքնապաշտպանական բնույթի ժողովրդական ապստամբություն էր, որը հետևանք էր այն դժոխային պայմաններին, որոնցում ապրում էին Սասունի հայ գյուղացիները: Այդ ապստամբության և ընդհանրապես Սասունի շարժումների մեջ հընչակյան գործիչների մասնակցությունը անհերքելի է: Նրանք ակտիվ մասնակցություն են ունեցել դրանցում և զոհեր տվել: Հնչակյաններից Մ. Տամատյանը, Հ. Բոյաջյանը, Ա. Ղազարյանը և ուրիշներ ձգտում էին համազգային բնույթ տալ ներքևից ծավալվող Սասունի շարժումներին, հա-

մախմբել հայերի ուժերը ընդդեմ թուրք ու քուրդ կռիվների: Բայց ոչ բոլոր հնչակյաններն էին ազդեցիկ մտածում ու գործում: Ավելին, նրանց մի զգալի մասը պաշտպանում էր սխալ, արևմտահայերի ազատագրության գործին շօգնող տակափկա ու իր սխալ քաղաքականությամբ ուղղակի վնասում էր ընդհանուր գործին: Այսպես, օրինակ, 1892 թվականին Մ. Տամատյանը Սասունում տիրող վիճակի մասին նամակով տեղյակ է պահում Աթենքում լույս տեսնող «Հնչակ» թերթի խմբագրությանը և խնդրում, որ նամակի բովանդակությունը պահվի գաղտնի: Հաշվի առնելով այդ նախազգուշացումը, խմբագրությունը, չափազանցելով իրական դրությունը, մայիսի 23-ին լույս է ընծայում թերթի հատուկ հավելված, որի մեջ ասվում էր. «... Հնչակյան հեղափոխական կուսակցությունը նախընթաց մայիսի 23-ին Սասունի գավառի և Մուշի դաշտի մի քանի գյուղերում ապստամբություն է կազմակերպել կառավարության դեմ: Մի քանի անգամ Մուշից և Թաղեշից զորքեր են ուղարկվել ապստամբների դեմ, բայց ջարդվել են... կառավարությունը դրախտը կորցրել է... Ապստամբական շարժումն ազնիվ ու ավելի ընդարձակ ծավալ է ստանում շարունակ»<sup>1</sup>: Ինչ խոսք, որ «Հնչակ»-ի այս հաղորդումը սուլթանական կառավարության ձեռքին գնեք դարձավ Սասունի դեմ:

<sup>1</sup> АВПР, ф. Канцелярия, Оп. 470, д. 26, т. I, л. 215.

<sup>1</sup> «Գայթար», Բոստոն, 1964, հուլիսի 1:

Ինչպես նշեցինք 1894 թվականին Սասունյ ապստամբությունը սուլթանական բռնակալության դեմ ուղղված ժողովրդական ելույթ էր, որը հետեւանք էր Սասունի հայ բնակչության սոցիալ-քաղաքական և ազգային դաժան ճնշման, հարբատահարման ու իրավադրվման: Այդ ապստամբության, ինչպես նաև հայերի ծանր վիճակի ու ջարդերի մասին խոսել են ինչպես հայ, այնպես էլ օտարերկրյա հետազոտողներն ու ճանապարհորդները: Նրանցից մեկը՝ ամերիկացի միսիոներ Ֆրիդր. Գրինը, որն ապրել, ճանապարհորդել էր Թուրքիայում ու անձամբ ծանոթացել Թուրքիայի ներքին կյանքին, նշում է, որ 1894 թվականի սեպտեմբերի 1-ին Սասունում ու նրա մերձակա շրջաններում տեղի է ունեցել իր մասշտաբներով վիթխարի ջարդ, որը սուլթանի, նրա կառավարության հրամաններով կատարում էին թուրքական զորքերն ու քրդական բեկերը: Թուրքական 4-րդ բանակի հրամանատար Զեքի փաշան, որը գլխավորում էր ջարդը, Սասունի վրա հարձակում կատարելուց և կոտորածներ կազմակերպելուց հետո անձամբ ընդունվում է սուլթանի կողմից և նրանից ստանում «նիշանի իմտիազ» շքանշան<sup>1</sup>: Սուլթանը մետաքսյա դրոշներ է պարգևում նաև

<sup>1</sup> Հայկ. ՍՍԹ կուլտուրայի միսիստրոլիայան գրակ. և արվ. թանգ., ֆ. 29, մ. ք. 891, ք. 1, գ. 13, թ. 1—2; Տե՛ս նաև Սուլթ. Յ. Դ. Լազարև, Причини бедствий армян в Турции..., стр. 34.

Սասունի ջարդերին ակտիվ կերպով մասնակցած համիդիե հեծյալ զնդերի 4 գլխավոր պետերին: Գրինը բերում է մի շարք օրինակներ, որով ցույց է տալիս այդ կոտորածի սարսափները<sup>1</sup>:

Սասունցիների և ընդհանրապես արևմտահայության նկատմամբ սուլթանական կառավարության կիրառած դաժանությունների դեմ իր ձայնը բարձրացրեց առաջադեմ մարդկությունը և ամբողջ հայ ժողովուրդը: Երկրագնդի բոլոր հայաբնակ վայրերից այդ օրերին հայոց կաթողիկոսի անունով հարյուրավոր նամակներ ու դիմումներ էին ստացվում, որոնց մեջ անարգանքի սյունին էին գամվում սուլթանական Թուրքիայի դաժան կարգերը, մերկացվում էին թուրքական ոճրագործ կառավարության, նրա բանակի, թուրք աղաների ու բուրդ բեգերի զազանությունները: Այդ օրերին էր, որ Թիֆլիսից մի խումբ հայեր (1894 թվականի նոյեմբերի 17-ին) հայոց կաթողիկոսին գրում էին. «Ահա մի ամբողջ տարի է, ինչ Տաճկահայաստանի բոլոր անկյուններում կատարվում է մի սարսափելի երևույթ: Այն ժողովուրդը, որ հազարավոր տարիների ընթացքում ծնել, դարգացել, աճել և ապրել է իր մայրենի հողի վրա, ողողել է այդ հողը իր ճակատի քրտինքով և ներկել իր կարմիր արյունով, որ ամփոփել է իր նախնիների

<sup>1</sup> Տե՛ս Эм. Диллон и Фр. Грин, Положение дел в Турецкой Армении и Турецкой зверства в Сасуне, М., 1896, стр. 49—64.

նշխարները այդ հողի վրա... ահա այդ ժողովուրդըն այսօր... գլուխն առած փախչում, դադթում է... տաճիկ փաշաների և ուրիշ պաշտոնյաների անտանելի կամայականություններից բռնադատված: Այդ հարստահարություններն այնպիսի ծայրահեղ աստիճանի հասան, որ հայ ազգի մի մասը, մի բուռ աղքատ լեռնականներ ստիպված եղան զենքով դիմադրել վարչության կամայականություններին և պաշտպանել իրենց մարդկային իրավունքներն ու ընտանիքի պատիվը... Այսօրվա հալածանքների բուն նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բնաջինջ անել հայ ժողովուրդն իր մայրենի երկրից...»<sup>1</sup>:

Նույն բովանդակությամբ նամակներ ու դիմումներ էին ուղարկվում նաև հայաբնակ այլ վայրերից: 1894 թվականի դեկտեմբերի 30-ին Քելդիայում բնակվող մի խումբ հայեր գրում են. «Հայաստանի Տարոնո գավառին մեջ... կանոնավոր զորաց ձեռք եղած կոտորածներեն հետզհետե եկած սոսկալի լուրերը՝ ինչպես ի սփյուռս աշխարհին եղած հայերը, նույնպես և մեզ պելջաբնակ հայերիս խոր սգո և թախծության մեջ ձրգեց»<sup>2</sup>:

Այնուհետև այդ թղթում խոսվում է այն մասին, որ իրենք անտարբեր չեն դրա նկատմամբ, և խնդրում են դիմել Ռուսաստանին՝ զինված ուժով

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 82, թ. 4, 31:

<sup>2</sup> Նույն տեղը, գ. 46, թ. 14:

միջամտելու, հայերին փրկելու թուրք գազաններից:

Այս և բազմաթիվ այլ օրինակներ միաժամանակ ցույց են տալիս, որ արևմտահայությունը ինչպես միշտ, այնպես էլ այդ ժամանակ, իր հաջգըը հառել էր դեպի Ռուսաստան և գիտակցում էր, որ սուլթանական ժանր լծից կարող էր ազատվել միայն Ռուսաստանի օգնությամբ:

Սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության դեմ ցասումնալից բողոք էր նաև Բաթումի հայ բնակչության 1894 թվականի նոյեմբերի 17-ի նամակը, որի մեջ ասվում էր. «Մեր հայն արդյոք կկարողանա անվրդով տանել այն անլուր շարագործությունները, որ կատարվեցան վերջերս Սասունի մեջ և Մուշի շրջակայքում... Մեր արյունակից եղբայրները սրի են մատնված, կանայք նողկալի բռնադատությունների ենթարկված, հրեխայքը անգթորեն ոտնակոխ եղած և նրանց բնակության վայրերը, տասնյակ գյուղեր կրակի ճարակ դարձած...»<sup>1</sup>:

Այնուհետև նշվում է, որ այդ ծանր վիճակին վերջ տալու համար անհրաժեշտ է դիմել Ռուսաստանի օգնությանը, մանավանդ որ, վերջինս «ի վաղուց անտի երջանկահիշատակ Պետրոս I-ից և Յկատիրինա II-ից սկսած, անընդհատ հոգ և խրեամբ է տածած հայ բազմաշարշար ժողովրդի նը-

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 55, թ. 8:

կախու աղատ, բայց միշտ աշխատելու քրտինք  
թափել,

Որ մացառը արոտ շինե,  
Եվ կածանը՝ արահետ,  
Որ սկար հողն հերկե, ուժե,  
Դարձնե հուրի, պողպատ:

Խաղաղ աշխատանքով ապրող այդ շինականը,  
«ակաջն», անողորմ ու անվիջում է հայրենիքի թըշ-  
եամու նկատմամբ: Եվ ահա, արտը վարելիս նա  
լուր է ստանում, որ քուրդ ու թուրք հրոսակները  
գաղտնի ճամփով ներս են խուժել իրենց երկիրը,  
իսկ հայ կարիճները դուրս գալով զավթիչների  
գեմ՝ արդեն անցել են «ձորն ու հովիտը»: Սա-  
սունցի հերոսը մեն-մենակ նետվում է թվով գե-  
րազանց թշնամու դեմ: Ամենածանր բուսեին նրան  
օգնության է հասնում և գնդակներ բերում իր սի-  
րասուն կինը՝ Ալմոն: Նրանք միասին կռվում են  
մինչև վերջին գնդակը և ընկնում հերոսաբար:

Կատարված դեպքերի մասին հայերի գիմում-  
ներն ու բողոքները եվրոպացի թղթակիցներն ու  
ճանապարհորդները հասցնում են ամբողջ աշ-  
խարհին:

1894 թվականի ամռանը Սասունում տեղի ու-  
նեցած անցքերի մասին իրենց կառավարություն-  
ներին անմիջապես հաղորդումներ են անում թուր-  
քիայում եվրոպական պետությունների դեսպան-  
ներն ու հյուպատոսները: Ֆրանսիական «Դեղին  
գրքի» փաստաթղթերի համաձայն, 1894 թվականի

կատմամբ<sup>1</sup>: Նամակի տակ դրված է ավելի քան  
900 ստորագրություն:

Արևմտահայերի ապրած այդ ծանր ողբերգու-  
թյունը խոցել էր առանձնապես հայնշանավոր գը-  
րողներ Ն. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Հ.  
Հովհաննիսյանի, Մուրացյանի, Ա. Մատուրյանի,  
Վ. Փափազյանի և մյուսների սրտերը: Նրանք  
1895—1897 թվականների իրենց ստեղծագործու-  
թյունների մեջ անարգանքի սյունին էին գամում  
թուրքական մարդասպաններին և գովերգում հայ  
ժողովրդի հերոսամարտերը, սուլթանական բռու-  
նակալության դեմ: Նրանք արևմտահայության  
փրկության միակ ելքը տեսնում էին նրա պայքարի  
մեջ: Հենց 1895 թվականի հայկական կոտորածների  
մղձավանջային օրերին վիպասան Մուրացյանը  
գրել է Սասունի ազատասեր ժողովրդի հերոսա-  
կան ապստամբությանը նվիրված «Ինչպես էին  
մեռնում» պոեմը<sup>2</sup>: Պոեմի հերոսը՝ քաջ սասունցի  
Ավոն, արդար վաստակով ապրող ու բռնությանն  
ընդդիմացող հայ աշխատավոր ու խաղաղասեր ժո-  
ղովրդի ներկայացուցիչն է: Ինչպես հեղինակն է  
գրում, նրա «հայացքն ահեղ» է, «հասակը՝ հսկա»,  
«բազուկն առյուծ կը վանե», «բայց այդ բազկով»  
նա երբեք անարդար գործ չէր արել, ապրել էր ան-

<sup>1</sup> Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 55, թ. 8:

<sup>2</sup> Տե՛ս «Լուսա» № 3—4, 1907:



»գոստոսի վերջերին Կարինի ֆրանսիական փոխ-  
հյուպատոսը արտաքին գործերի մինիստրին հա-  
ղորդում է, որ թուրքական կանոնավոր բանակի  
մի մեծ ջոկատ հրաման էր ստացել ուղևորվելու  
Սասունի շրջանը, որպեսզի ճնշի ժողովրդական  
շարժումը<sup>1</sup>: Ճիշտ հաղորդումներ այն մասին, թե  
ինչ էր տեղի ունեցել Սասունում, այն ժա-  
մանակ դեռևս չկային, որովհետև թուրքական իշ-  
խանությունը ծածկում էր այդ դեպքերը: Հետա-  
գայում Սասունում սուլթանական կառավարու-  
թյան արյունալի գործողութայունները կոնկրետ  
փաստերով հաստատվում են Դիարբեքի ֆրան-  
սիական փոխ-հյուպատոսի 1894 թվականի հոկ-  
տեմբերի 5-ի հաղորդագրության մեջ, ուր նա  
նշում էր, որ Կոստանդնուպոլսից ստացված հրա-  
մանով Բիթլիսից Սասուն է ուղևորվել 4-րդ բանա-  
կային կորպուսի հրամանատարը, որը գլխավո-  
րում է մեծ քանակությամբ զինվորական ուժ,  
15.000 մարդ՝ կանոնավոր բանակի կազմով, դը-  
րան ավելացրած խաբված քրդերը, համիդիե զո-  
րախմբերը: Տեղի են ունենում ահավոր մարտեր,  
«հայերը կոչվում են հերոսաբար»: Այնուհետև հա-  
ղորդվում էր այն սոսկալի ողբերգութայան մասին,  
որը տեղի էր ունենում Սասունում: Այդ նույն բա-  
նը հաստատվում է նաև Կոստանդնուպոլսի ուս-  
սական դեսպանի 1894 թվականի հոկտեմբերի

<sup>1</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 25, т. II,  
лл. 498—500.

25-ի ղեկուցագրով, որի մեջ նա գրում է. «Այս-  
տեղ... լուրեր են շրջում... Սասունի կազմում  
հայերի կոտորածի մասին, ըստ որի կանոնավոր  
զորքերի և բրդական հեծյալ գնդերի կողմից հըր-  
կիղվել են շատ գյուղեր և սպանվել մի քանի հա-  
շար տղամարդ, կին և երեխա»<sup>1</sup>:

Չնայած այդ բոլորին, այնուամենայնիվ, Բիթ-  
լիսի վիլայեթում տեղի ունեցած այդ արյունալի  
դեպքերը թուրքական պետութայան ջանքերով որոշ  
ժամանակ գաղտնի էին պահվում: Բարձրագույն  
գուռը ամեն կերպ ճգնում էր ծածկել գործի իսկու-  
թյունը, հնարավորութայուն չէր տալիս պարզելու  
ճշմարտութայունը, բոլոր միջոցները գործի էր դը-  
նում, որպեսզի անգամ եվրոպական թերթերի  
թղթակիցները չանցնեն Սասունը: Այդ բանի հա-  
մար նա ոչ միայն վարչական միջոցների էր դի-  
մում, այլև լուրեր էր տարածում, թե իբր Սասու-  
նում մոլեգնում է խոլերա հիվանդութայունը: Բարձ-  
րագույն գուռը արգելք էր դրել Սասունի դեպքե-  
րով հետաքրքրվող անգամ այնպիսի շափավոր  
թերթի առաջ, ինչպիսին էր անգլիական «Թայմս»  
թերթը: Այդ մասին «Թայմս»-ը նշում էր. «Ցա-  
վով հայտնում ենք, որ մեր ջերմ ու տևական ջան-

<sup>1</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 25, т. II,  
лл. 500—501.

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, д. 26, т. I, лл. 56—57.  
Տե՛ս նաև «Մուրճ» № 3—4, 1895, էջ 534:

րերը՝ Սասունի ղեպքերն անաչառ բննելու նպատակով մեր հատուկ թղթակցի համար Հայաստան մտնելու իրավունք ստանալու մասին, ապարդյուն անցանք<sup>1</sup>։

Չնայած թուրքական կառավարության ու նրա տեղական իշխանությունների այդ արգելքներին, այնուամենայնիվ Սասունի անցքերի վերաբերյալ բազմաթիվ հողվածներ են լույս տեսնում անգլիական, ֆրանսիական, ռուսական, գերմանական, շվեյցարական, ամերիկյան և անգամ մեքսիկական թերթերում ու ամսագրերում։ Երբ եվրոպական մամուլն սկսում է առաջին լուրերը տպագրել Սասունի ղեպքերի մասին, սուլթանական կառավարությունը շարժման մեջ է դնում իր բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին՝ դեսպաններին ու հյուպատոսներին, և «հերքման» թղթեր գրում լրագրերում՝ տպագրելու համար։

Բարձրագույն դուռը, նրա դեսպանություններն ու դիվանագետները անամոթաբար ստահող հայտարարություններ ու հակահայկական բնույթ կրող հողվածներ են տպագրում ռեակցիոն «Նովոյե վրեմյա», «Կավկազ» և ռուսական ու արևմտաեվրոպական մի շարք այլ հետադիմական թերթերում ու ամսագրերում և առանձնապես թուրքական մամուլում<sup>2</sup>։

<sup>1</sup> «Մուրճ» № 1, 1895, էջ 141։

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 1894, նոյեմբերի 29։

Թուրքական ջարդարար կառավարության պաշտպանության դերում հանդես են գալիս մի քանի եվրոպական ռեակցիոն թերթեր։ 1895 թվականի հունվարի սկզբից Փարիզում լույս տեսնող «Թուրքիա» շաբաթաթերթը, որի խմբագիրն ու հրատարակիչն էր ոմն Նիկոլա Նիկոլայիդիս, մի թղթակցության մեջ Սասունում թուրքական բանակի զինվորների բարբարոսությունները համարում է «շառլատանների հնարած սուտ» և իրողությունը ներկայացնում է ամբողջովին խեղաթյուրված ձևով<sup>1</sup>։

Նույն ոգով էր հանդես գալիս նաև Վատիկանի կիսապաշտոնական «Օբսերվատորե Ռոմանո» թերթը։ Արևմտյան Հայաստանում կատարվող արյունալի անցքերի վերաբերյալ՝ քրիստոնեական եկեղեցու կենտրոնի այդ թերթը 1895 թվականի վերջերին տպագրում է մի հողված, որի մեջ ոտնահարելով ամեն մի ճշմարտություն, քրիստոնեական անմեղության տեսք ընդունած, ձգտում էր հերքել այդ ղեպքերի հայկական ու եվրոպական առաջադեմ թերթերի բացատրությունները։

Սակայն, հակառակ սուլթանական կառավարության համառ փորձերին՝ կեղծելու պատմական իրողությունը, հակառակ նրան ձայնակից մի քանի ռեակցիոն թերթուկների ու անհատ անձնավորությունների ջանքերին, համաշխարհային հասարա-

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1895, փետրվարի 25։

կայնութիւնը, ամբողջ առաջադեմ մարդկութիւնն ու մամուլը անարգանքի սյունին էին գամում սուլթանական արյունոտ կառավարութեան հայաջինջ քաղաքականութիւնը, ցույց տալիս այն բոլոր արհաւիրքներն ու բռնութիւնները, որ թուրքական զորքն ու քրդական համիդիները կատարում էին Սասունի նկատմամբ:

Թուրքական կառավարութեան վարքագծի նրկատմամբ նույն կարծիքն էր արտահայտում նաև «Ս. Պետերբուրգսկայա վեդոմոստ»-ը: Նկարագրելով սուլթանական իշխանութիւնների կատարած բռնութիւններն ու գաղանութիւնները Արևմտյան Հայաստանում և առանձնապէս Սասունում, թերթը նշում էր, որ թուրքական կառավարութեան բոլոր հավաստիացումները ոչ մի ուշադրութեան արժանի չեն, և եվրոպական դիվանագիտութիւնը պետք է միջամտե՛լ ի պաշտպանութիւն խաղաղ բնակիչների, որոնք զոհ են դարձած թուրքական բաշիրոզութիւնների գաղանութիւններին ու բարբարոսութիւններին<sup>1</sup>:

Եվրոպական շատ թերթեր, հավաստի աղբյուրների հիման վրա, տալիս էին Թուրքիայում կատարված սոսկալի կոտորածների ողջ պատկերը և հաստատում այն եղեռնական գործերը, որ կատարել էին թուրքական զորքերը: Անգլիական «Սպիկեր» թերթի Կ. Պոլսի թղթակիցը հայտնում էր, թե այլևս ոչ մի կասկած չկա, որ

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ» № 11—12, 1894, էջ 1695—1697:

այդ կոտորածները տեղի են ունեցել: Մենք արդեն ունենք, գրում էր նա, Վանի, Էրզրումի, Սվազի և Դիարբեքիի հյուպատոսների պաշտոնական զեկուցումները, որոնք հաստատում են թերթերում տպագրված վկայութիւնները: Մենք ունենք հայ փախստականների տված ցուցումները, մարդիկ, որոնք ականատես են եղել դրանց: Մենք ունենք թուրք զինվորների վկայութիւնները, որոնք մասնակցել են կոտորածներին: Այդ զինվորները պատկանում են կանոնավոր զորքին և կանչված են եղել Էրզրումից, Երզնկայից, Վանից, Բիթլիսից, Խարբերդից և Սվազից: Նրանք արդեն վերադարձել են իրենց տեղերը և սուլթանի կողմից պաշտոնապէս շնորհակալութիւն են ստացել իրենց կատարած գործերի համար... Սասունի սարսափները իսկապէս տեղի են ունեցել և կատարվել են կանոնավոր զորքերի ձեռքով՝ այն մարդկանց հրամաններով, որոնք հետո շքանշաններ են ստացել սուլթանից<sup>1</sup>:

Անգլիայի արտաքին գործերի մինիստրի անունով ստացված զեկուցագրերի հիման վրա «Թայմը» թերթը գրում է Բիթլիսում կատարված բարբարոսութիւնների մասին, նշելով, որ փաշայի կարգադրութեամբ Սասունում ոչնչացվել է 10.000 հայ<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 11, 1895, հունվարի 28: Տե՛ս նաև «Մուրճ» № 1, 1895, էջ 153:

<sup>2</sup> Տե՛ս «Նոր դար» № 197, 1894, նոյեմբերի 19:

Սասունի ղեպքերին է անդրադառնում նաև շքվեցարական մամուլը: Ժնևի հայտնի «Լա ժնեվուազ» թերթի 1895 թվականի հունվարի 16-ի համարում ասվում էր, որ Սասունում «Եղեռնագործությունները սկսված են ոչ թե 1894 թվականին, այլ մի քանի տասնյակ տարիներ առաջ, իսկ 1878 թվականից, այսինքն՝ հանրածանոթ 61-րդ հոդվածի գրվելուց հետո, այդ հարստահարություններն ավելի անզույժ կերպարանք են ստացել և ավելի հաճախ կրկնվելով՝ մի հետաքրքրական երևույթ են ներկայացնում»<sup>1</sup>: Թուրք աղաները և պաշտոնյաները, քուրդ ու չերքեզ բեկերը, նշված է այնտեղ, ահա այն բոլոր ոճիրների, ավարառությունների, ամեն տեսակ սրբապղծությունների, բռնաբարությունների, սպանությունների, հրդեհների իսկական հեղինակները: Ամփոփելով իր միտքը, թերթը նշում է, որ թուրքական կառավարությունը «ուզում է բնաջինջ անել հայ տարրը Փոքր Ասիայում», որպեսզի Բեռլինի պայմանագիրը ստորագրողներին ասի. «Հայաստանում այլևս հայ չկա, հետևապես, այլևս գոյություն չունի հայկական հարց»:

Հայկական հարցով հետաքրքրվում էին նաև ամերիկյան երկրներն ու նրանց մամուլը: Մեքսիկայում հրատարակվող «Եխո դու Մեքսիկա» թերթը մի հոդված է նվիրում այդ հարցին, որը և թարգմանաբար տպագրել է «Մշակ»-ը: Այդ հոդվածում

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1895, հունվարի 24:

թերթը հարցնում է, թե ո՞րն է հայոց հարցի լուծման ամենագործնական միջոցը, և նշում, որ շատերը գիտեն այն ղեպքերը, որոնք կատարվեցին Հայաստանում և որոնց ընթացքում զոհերի թիվը հասավ 10.000 մարդու: Անգլիան այդ գործում մի շատ ձախողակ վարմունք ունեցավ: Հայտնի է, որ եթե նա ինքն ուղղակի չի գրգռել այդ արյունահեղ ղեպքերը, գոնե աշխատել է դրանք իր սեփական օգտին ծառայեցնել: Այնուհետև թերթն ավելացնում էր, որ Թուրքիան անընդունակ է պաշտպանել կարգ ու խաղաղություն իր սեփական նահանգներում, որի համար անգլիական բաղձաթիվ լրագրեր պահանջում են, որ Եվրոպան միջամտի այդ գործում: Սակայն հայոց հարցի ամենալավ, միակ հնարավոր լուծումը, վերջում ավելացնում էր թերթը, կլինի՝ զիջել Ռուսաստանին օսմանյան դրոշակի տակ մնացած Հայաստանի մասը<sup>1</sup>:

Անգլիական «Նյուկաստել դեյլի շոռնել» թերթի թղթակիցը, Բիթլիլիսի գավառի Խնձորոկ գյուղից մանրամասնորեն հաղորդելով Սասունում կատարված ղեպքերը, հանգում էր հետևյալ եզրակացության. «Անկարելի է հերքել, որ այստեղ եղել է մի մտածված ծրագիր, երկար ժամանակ նախապատրաստված և, վերջապես, գործադրված այն դիտավորություններ, որ բոլորովին ոչնչացնեն

<sup>1</sup> Մեջբերումը կատարված է «Մշակ»-ի 1895 թվականի փետրվարի 25-ի համարից:

այդ երկրի 30-ից 40 հազար բնակիչներին: Դա կանխորոշված մի փորձ էր իսպառ ջնջելու աշխարհի երեսից Սասունի բնակիչներին, և մի բուսակ անգամ չպետք է մոռանալ, որ այդ ծրագիրը հղացվել է Կ. Պոլսի բարձրագույն կառավարութան գիտությունը և նրա կատարյալ համաձայնությունը<sup>1</sup>:

Յրանսիական «Ֆիգարո» օրաթերթը 1895 թվականի հունվարի 2-ի համարում ղետեղելով Լուի Լամբերի «Հայկական հարցը և Սասունի կոտորածները» հոդվածը, նշում է, որ պ. Լամբերը Կ. Պոլսից վերջերս է վերադարձել Փարիզ և հիմնավորապես ծանոթ է Փոքր Ասիայի թուրքական գավառների դրությունը: Այդ հոդվածում, փաստերի հիման վրա, մի անգամ ևս հաստատվում էին Բիթլիսի նահանգապետ Հասան Թահսին փաշայի և 4-րդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշայի կատարած գազանություններն ու Սասունի կոտորածները<sup>2</sup>:

Սասունի անցքերի վերաբերյալ հաղորդումների մեջ օբյեկտիվորեն էին խոսում նաև ֆրանսիական այլ թերթեր ու ամսագրեր:

Այլ դիրք բռնեց գերմանական մամուլը, որը երկար ժամանակ կամ կատարյալ անտարբերություն էր ցուցաբերում դեպի այդ հարցը, կամ

ուղղակի պաշտպանում էր սուլթանական կառավարությունը:

Միայն հետագայում, երբ այլևս անկարելի էր ծածկել սասունցիների նկատմամբ կիրառված գազանությունների հետքերը, գերմանական «Յոսիշե ցայտունգ» թերթը ցավելով գրում էր. «Հայկական եղեռնագործությունները, որոնք այլևս անկարելի է ուրանալ, մեծ դժվարություններ պետք է պատճառեն թուրքիային»:

Մամուլի արձագանքների ու ահազանգումների հետ միասին, Սասունի կոտորածների առթիվ երկրագնդի բոլոր մասերում տեղի էին ունենում բողոքի ցույցեր, միտինգներ ու ժողովներ: Դրանցում մերկացվում էին սուլթանական կառավարության, թուրքական փաշաների ու քրդական բեգերի ոճրագործությունները:

Թուրքական բանակի կողմից Սասունում կատարված արյունալի ջարդերը հուզումներ են առաջացնում նաև ԱՄՆ-ի հասարակական առաջդեմ շրջաններում, առանձնապես ամերիկահայերի շրջանում: 1894 թվականի նոյեմբերի 26-ին, ինչպես նշում են ժամանակի հայ և օտարերկրյա թերթերը, Բոստոնի նշանավոր «Ֆենուիլ-հոլլ» կոչված շենքում տեղի է ունենում 1893 թվականին Բոստոն քաղաքում կազմակերպված «Հայոց միացյալ բարեկամների» ժողովը<sup>1</sup>: Այդ ժողովը հակիրճ ճանոթվ բացում է «Քրիսչն օնճիստը» թեր-

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1895, մայիսի 4:

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 1895, հունվարի 14:

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ», № 11—12, 1894, էջ 1700:

թի խմբագիր Պարուզը, ապա խոսք է վերցնում Արաբյալ նահանգների հայտնի կին գրականագետ Զուլիա Հաունը, որը դառնությամբ է խոսում սուլթանական արշունոտ լծի տակ գտնվող արևմտահայերի ծանր վիճակի ու Սասունի կոտորածների մասին<sup>1</sup>: Նա իր ճառի վերջում քաղաքակիրթ մարդկությանը կոչ է անում՝ սանձահարել սուլթանական պետության բռնություններն ու զաղանությունները<sup>2</sup>:

Նույն կարգի ժողովներ ու միտինգներ են գումարվում նաև ուրիշ երկրներում: 1894 թվականի նոյեմբերի 5(17)-ին Լոնդոնում տեղի է ունենում Անգլո-հայկական ընկերության մի բազմամարդ միտինգ՝ անգլիական պառլամենտի անդամ Ստիվենսոնի նախագահությամբ: Այդ միտինգը խիստ բողոք է հայտնում սուլթանական կառավարության դեմ և Սասունի կոտորածների առթիվ ընդունում հետևյալ որոշումը.

1) Պահանջել հրապարակել հյուպատոսական հաղորդագրությունները, 2) Սասունի կոտորածների առթիվ նշանակել հյուպատոսական քննություններ, 3) պահանջել իրագործել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը<sup>3</sup>:

Սուլթանական կառավարության դեմ ուղղված

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ» № 11—12, 1894, էջ 1700:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս «Մշակ» № 140, 1894, դեկտ. 3: Նույն հարցի մասին տե՛ս նաև «Մուրճ» № 3—4, 1894, էջ 545:

բողոքի միտինգներում ու ժողովներում հաճախ զեկուցումներ էին կարդացվում նաև հայ ժողովրդի պատմական անցյալի, կուլտուրայի, տրնեսսական ու քաղաքական վիճակի և այլ հարցերի մասին: Այսպես, օրինակ, 1895 թվականի ապրիլի 9-ին Բիրմինգհամում (Անգլիա), Զրեբրման Ռայտի նախագահությամբ տեղի ունեցած ժողովում պրոֆ. Կ. Թումայանը, որը լավ ծանոթ էր Թուրքիայում տիրող կարգերին, մի զեկուցում է կարդում հայերի դրության վերաբերյալ և նկարագրում այն սարսափներն ու ոճրագործությունները, որ տեղի էին ունենում Արևմտյան Հայաստանում<sup>1</sup>: Նման ժողովներ են գումարվում նաև Ռուսաստանի Մոսկվա, Պետերբուրգ, Քիֆլիս, Հնդկաստանի Կալկաթա և այլ քաղաքներում<sup>2</sup>:

Սասունի հերոսական ժողովրդի դեմ սուլթանական կառավարության գաղանթությունները մեծ զայրույթ են առաջացնում առանձնապես Ռուսաստանի և արտասահմանյան երկրների առաջադեմ երիտասարդության, մասնավորապես ռուսնող երիտասարդության, կուլտուրայի ու գիտության պրոգրեսիվ գործիչների շրջանում:

Այդ տեսակետից խիստ ուշագրավ է Մոսկվայի մի խումբ ռուսնողների՝ հայերին ուղղած նամակը, որի մեջ նրանք մերկայացնում էին Թուրքիայի և մեծ պետությունների ստոր քաղաքականու-

<sup>1</sup> Տե՛ս «Մուրճ» № 11—12, 1894, էջ 1718—1719:

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ» № 17, 1895:

թյունը, ջերմորեն ողջունում արևմտահայերի հե-  
րոսական պայքարը սուլթանական բռնակալության  
դեմ: «Մեր բոլոր համակրանքը,— ասված է այն-  
տեղ,— ձեր կողմն է՝ հանուն ազատության կրո-  
վողների կողմը: Մեր զգացմունքներն այլ կերպ էլ  
չէին կարող լինել, քանի որ մենք ևս կրում ենք  
բռնակալության ճնշումը, թեև ոչ այնպիսի սար-  
սափելի ձևով, ինչպես վերջին ժամանակները գործ  
դրվեց ձեր եղբայրների գլխին... Մեր խոսքերի  
տակ կստորագրեն բոլոր այն երիտասարդները,  
որոնք դուրս են եկել բանվորական դասակարգից,  
ինչպես և կմիանան մեզ հետ մնացյալ մասի  
առաջադիմական տարրերը:

Ընկերնե՛ր, մենք անկեղծ սրտով հաջողու-  
թյուն ենք ցանկանում ձեր ազգային գործերին,  
որը միայն սկիզբն է և առհավատչյա ապագա ժո-  
ղովրդական գործունեության: Ներկա թույլին,  
զժբախտաբար, մենք մեր համակրանքը միայն  
սրանով կարող ենք արտահայտել. ձեզ հայտնի է,  
որ մեր հայրենիքում ևս եռ է գալիս խուլ կուլվ, որը  
նորանոր զոհեր է պահանջում... Մենք այժմ իսկ  
պատրաստ ենք սիրով ողջունել այն թույլին, երբ  
ձեռք-ձեռքի կտան ուսանող երիտասարդությունը  
ազատ Հայաստանի և ազատ Ռուսաստանի»<sup>1</sup>:

Նույն ոգով է գրված նաև Մոսկվայի լեհ երի-  
տասարդների ընկերության նամակը, որտեղ աս-

<sup>1</sup> ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինս-  
տիտուտի հայկական ֆիլիալի պարտաբխիվ, ֆ. 4033, ց. 1,  
գ. 1247, թ. 1—2:

ված է. «Տաճկահայերի կրած տառապանքները  
վաղուց ի վեր արձագանք էին գտնում մեր սրտե-  
քում: Տաճիկ կառավարության ձեռք առած բար-  
բարոսական միջոցները, դժբախտ ժողովրդի հու-  
սահատական ճիչերը, այս բոլորը չափից դուրս  
զարդ և ակնհայտ կերպով նկարագրում են մեզ  
ձեր սեփական դրության պատկերը և մեր անկա-  
խության համար վարած կովի պատմությունը...  
Ձեր հաղորդածը, որ մեծ պետությունների միջո-  
ցառումը ոչ մի ազգեցություն չունեցավ տաճիկ  
թիրապետության լծի տակ հեծող ձեր հայրենա-  
կիցների դրության բարելավման վրա, մեզ շատ  
վշտացրեց, բայց չզարմացրեց: Ավելորդ է որևէ  
բան սպասել պետություններից... որ մեծ պետու-  
թյունները գործ ունեն միայն ուժեղների հետ, իսկ  
եթե թույլերին նրանք պաշտպանում են, այդ ա-  
նում են այն ժամանակ, երբ հարկավոր է լինում  
իրենց վտանգավոր մրցակցին տապալել... Մենք  
ի բոլոր սրտե ցանկանում ենք հայերին զորանալ,  
ամրանալ ներկա դժբախտությանց մեջ, նորից  
հավաքել իրենց ուժերը, որպեսզի ապագայում  
հաջողությամբ կովեն իրենց մարդկային և ժո-  
ղովրդական իրավունքների համար...»

Թող ձեր ժողովրդի ներկա տառապանքները  
գառնան նրա ապագա ուժի աղբյուրը»<sup>1</sup>:

<sup>1</sup> ՍՄԿՊ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինս-  
տիտուտի հայկական ֆիլիալի պարտաբխիվ, ֆ. 4033, ց. 1,  
գ. 1247, թ. 4:

Նույնպիսի ջերմությամբ էր գրված մի խումբ լեհոհինների նամակը, որում ասված էր. «Որպես կանայք, համակրում ենք բոլոր հայ կանանց և աղջկերանց, որոնք բոլորովին անպաշտպան զբանըվում են մի երկրում, ուր թագավորում է լիակատար կամայականությունը...

Թող կորչեն բոլոր բռնավորները, կեցցե՛ ազատությունը: Կեցցե՛ բոլոր ազատասեր ժողովուրդների միությունը՝ ընդհանուր ուժերով բռնակալություն դեմ»<sup>1</sup>:

Սասունի ապստամբության և նրան հաջորդած իրադարձությունների անշոթյամբ երկրագնդի տարբեր վայրերում ընդհանուր հետաքրքրություն է առաջանում հայ ժողովրդի պատմության, կուլտուրայի, սոցիալ-քաղաքական կյանքի նկատմամբ: Այդ տարիներին էր, որ գիտության, կուլտուրայի և գրականության բազմաթիվ գործիչներ Հայաստանին նվիրված հրապարակային դասախոսությունների, հոդվածների, առանձին ուսումնասիրությունների միջոցով իրենց ժողովուրդներին ծանոթացնում էին հայ ժողովրդի անցյալ պատմությանը, պարզաբանում էին նրա կատարած դերը մարդկության կուլտուրայի զարգացման գործում, նշում օսմանյան լծի տակ կեղեքվող ժողո-

<sup>1</sup> ՍՄԿՊ Կենտկոմին աղբյուրներ մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի պարտաբախիվ, ֆ. 4033, ց. 1, գ. 1247, թ. 4:

վրդի ծանր վիճակը և թուրք աղաների ու քուրդ բեգերի դաժանությունները, թուրքական կանոնադր բանակի կողմից արյունալի ջարդերի ամբողջ պատկերը: Այդ գործիչներից էին գերմանացի Զեոբոգ Բրանդեսը, Անատոլ Ֆրանսը, Մաքսիմ Գորկին և շատ ուրիշներ: Սուլթանական արյունարբու կառավարության դեմ բողոքի ձայն է բարձրացնում Ֆրանսիացի հայտնի կին գրող Սեվերինը: Դատապարտելով արևմտահայերի դեմ կիրառվող դաժանությունների նկատմամբ արևմտյան տերությունների սառն անտարբերությունը, նա իր հոդվածներից մեկում գրում է. «Բայց ես զարմացած եմ լռության դեմ. եսասիրությունից բխած այն եղեռնագործ պապտիայի դեմ, որ զարձնում է աչքերը, փակում ականջները, օ՛ն, ստի ել. դու որ չես ուզում նայել, կնայես, երբ ես ստիպված կլինեմ բռնել քո ականջներից, որ զարձնեմ քո անտարբեր դեմքը, որ ստիպեմ քեզ նայել սոսկումի՞ն դեմառդեմ, ողջ սոսկումը կոտորածի. դու, որ չես ուզում լսել, դու կլսես աղմուկները, աղաղակը, մահու հնչյունները և խռպոտ աղոթքները օրհասականների»:

Մեր բերած օրինակների բնավ էլ ոչ լրիվ ցանկը որոշակի ցույց է տալիս, որ համաշխարհային հասարակայնության համակրանքը արևմտահայության, Սասունի հերոս լեռնականների կողմն էր, որ աշխարհի հասարակական կարծիքը անողորմաբար դատապարտում էր Թուրքիայի բռնակալական



կարգերը և սուլթան Աբդուլ Համիդին հռչակում  
մեծ ոճրագործ:

Բացահայտելով սուլթանական կառավարու-  
թյան ամեն տեսակի դաժանություններն ու նրա  
ոճրագործ քաղաքականությունը արևմտահայերի  
նկատմամբ, հարկ ենք համարում նշել, որ Սասունի  
դեպքերի ժամանակ թուրքական կառավարու-  
թյան մեջ առաջանում է մի թույլ հոսանք Սուրբյա  
և Օսման փաշաների գլխավորությունամբ, որը դեմ  
էր Սասունում գործադրվող դաժանություններին:  
Սակայն, այդ հոսանքը անուժ էր, կառավարական  
շրջաններում նրա հետևից համարյա ոչ ոք չէր գը-  
նում, դեռ ավելին, սուլթանի և Բարձրագույն դռան  
կողմից ենթարկվում էր խիստ հալածանքների:  
ուստի և ոչինչ անել չկարողանալով նա ևս միա-  
շավ ընդհանուր հոսանքին:

Արևմտյան Հայաստանում, մասնավորապես  
Սասունում կատարվող դեպքերին ուշի-ուշով հե-  
տևում էին արևմտյան տերությունները, որոնցից  
յուրաքանչյուրն աշխատում էր օգտագործել հար-  
մար առիթը, ձևանալ հայերի բարեկամ, միջամտել  
Թուրքիայի գործերին և դրանով զիջումներ կորզել  
նրանից, նորանոր դիրքեր նվաճել Առաջավոր  
Ասիայում՝ Մերձավոր ու Միջին արևելքի վրա իր հե-  
գեմոնիան տարածելու կամ ամրապնդելու համար:

Այդ գործում առանձնապես մեծ ակտիվություն  
էր հանդես բերում Անգլիան: Անգլիան ձգտում  
էր ստիպել Թուրքիային՝ իր ցանկացած ձևով լու-

ծելու մի շարք կարևոր հարցեր և դրանով իսկ նո-  
բանոր տնտեսական դիրքեր նվաճել Թուրքիայում,  
ամրանալ Արևմտյան Հայաստանում, ամբողջովին  
իրեն ենթարկել Մերձավոր ու Միջին արևելքի եր-  
կըրները, կանխել ցարական Ռուսաստանի տարա-  
ծումն այդ շրջաններում:

Անգլիայի այդ ձգտումներին դեմ էր կանգնում  
ցարական Ռուսաստանը, որն աշխատում էր խան-  
գարել Անգլիային և նրան դուրս մղել Մերձավոր  
ու Միջին արևելքի երկրներից: Ռուս-թուրքական  
պատերազմից հետո ցարական կառավարությունը  
մի որոշ ժամանակ դադարեց կոստանդնուպոլսի և  
նեղոցների գրավման մասին մտածելուց. այժմ  
նրան հարկավոր էր օգնել սուլթանին՝ պահելու  
Միջերկրական ծովից Սև ծով տանող դարպասը:<sup>1</sup>  
Այդ առումով էլ 1890-ական թվականներին նա  
հաճախ հանդես էր գալիս Թուրքիայի շահերի  
պաշտպանի դերում՝ ընդդեմ Անգլիայի:

Ավելի ակտիվ էր գործում Գերմանիան, որն  
իրեն ներկայացնելով մուսուլմանների հավատա-  
րիմ բարեկամ, աշխատում էր Թուրքիան իր  
ազդեցությանը ենթարկել: Եվ իրոք, մի շարք հան-  
դիպումների ու բանակցությունների միջոցով  
Գերմանիան Թուրքիայում ձեռք է բերում որոշ  
արտոնություններ, իսկ 90-ական թվականների ըս-  
կըզբններին՝ արդեն Թուրքիայում երկաթգիծ կա-

<sup>1</sup> Տե՛ս «История дипломатии», т. II, Москва, 1963,  
стр. 334.

նուցնելու մենաշնորհ: Թուրքիան այդ շրջանից սկը-  
սած մեծ շարժումը թեքվում է Գերմանիայի կողմը:  
Կարելի է ասել, որ արդեն 90-ական թվականնե-  
րին ապագա համաշխարհային պատերազմի հա-  
մար ձևավորվող երկու հակամարտ խմբավորում-  
ների միջև պայքար էր գնում Թուրքիայի համար:  
Ինչպես նշում է պրոֆ. Ե. Սարգսյանը, «Եվրոպա-  
կան պետությունները Թուրքիայի համար մղած  
պայքարում նպատակ ունեին ուժեղացնել իրենց  
քաղաքական դիրքերը և ձևոք բերել նոր հնարա-  
վորություններ օսմանյան պետության ներքին  
քաղաքական կյանքի վրա ազդելու համար»: Այդ  
պայքարում նրանք օգտագործում էին Թուրքիա-  
յում բնակվող ազգային փոքրամասնությունների  
ազատագրական շարժումները, հանդես գալով նը-  
րանց «պաշտպանի» դերում:

Հենց այդ պայմաններում եվրոպական պետու-  
թյունները Սասունի անցքերի առիթով առաջ են  
քաշում Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և ըս-  
կսում մշակել հայկական վիլայեթների բարենոր-  
ոգումների ծրագիրը, իչպես նաև պահանջում  
են քննիչ հանձնաժողով ուղարկել Սասուն:

Սուլթանական կառավարությունը շատ լավ  
հասկանալով եվրոպական պետությունների այդ  
խաղը, զիմում է խորամանկ միջոցների: Այդ պե-

<sup>1</sup> Ե. Սարգսյան, Օսմանյան կառավարության ազգային  
քաղաքականությունը 19-րդ դարի երկրորդ կեսին (տե՛ս Հայկ.  
ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» № 7, 1948, էջ 40—41):

տությունների աչքին թող փչելու համար Բարձրա-  
գույն դուռը հայտարարում է, որ 1894 թվականի  
նոյեմբերի 20-ին կազմել է մի քննիչ հանձնաժո-  
ղով, որի մեջ, նրա հայտարարության համաձայն,  
մտնում էին սուլթանի թիկնապահ՝ Ֆերիկ Աբդու-  
լահ՝ փաշան, Կ. Պոլսի էննքեա սանտղի տնօրեն  
էումեր բեյը, ներքին գործերի մինիստրության մա-  
մուլի ղիվանի առաջին քարտուղար Մեչիդ էֆեն-  
դին և միրլիվա նաֆիդ Թեֆիդ փաշան<sup>1</sup>: Թուրքա-  
կան կառավարության այս հայտարարությունը  
կեղծ էր ու խարուսիկ: Դա ոչ ոքի էլ կարող հա-  
վատացնել, թե Թուրքիան կարող է լինել անա-  
շառ քննություն կատարող, ուստի պահանջվեց, որ  
այդ հանձնաժողովի մեջ մտցվեն եվրոպական  
մեծ պետությունների ներկայացուցիչները, որը,  
սակայն, կատեգորիկ կերպով մերժվեց Թուրքա-  
կան կառավարության կողմից:

Ինչպես վերևում նշեցինք, եվրոպական մեծ  
պետությունները Սասունի անցքերի ժամանակ  
հանդես եկան կեղծ քաղաքականությամբ, նրանք  
անհրաժեշտ վճռականություն ու շահագրգռվածու-  
թյուն հանդես չբերեցին Սասունի և ընդհանրապես  
արևմտահայերի վիճակը բարելավելու ուղղու-  
թյամբ: Սասունի շարժումից մի շաբաթ անց Կ.  
Պոլսի ֆրանսիական դեսպանն իր կառավարու-  
թյանը հաղորդում է. «Սուլթանը հարցում արեց  
իմ կարծիքի մասին: Ես պատասխանեցի, որ

<sup>2</sup> Տե՛ս «Մուրահ» № 11—12, 1894:

անհրաժեշտ է բարենորոգումներ մտցնել Հայաստանի կառավարման մեջ, վերջ տալ համիդեական գնդերի կողմից կատարվող ոճրագործություններին, վերականգնել սուլթանի բարձր հեղինակությունը, զգացնել տալ նրա բարձր իշխանությունը: Այնուհետև դեսպանը նշում է, որ «պ. Նելիգովը (ռուս. դեսպան— Կ. թ.) պատասխանեց նույն արտահայտություններով, ինչպես որ ես: Ավստրիական դեսպանը ասաց ինձ՝ «Մենք ամբողջապես կողմնակից ենք Ձեր կարծիքին»<sup>1</sup>:

Հարկավոր է, սակայն, նշել, որ ֆրանսիական դեսպանի՝ սուլթանի բարձր իշխանությունը զգացնել տալու պահանջը, այնուամենայնիվ, տարօրինակ էր, որովհետև բոլորին, այդ թվում և ֆրանսիական դեսպանին, շատ լավ հայտնի էր, որ Սասունում և Արևմտյան Հայաստանի այլ վայրերում տեղի ունեցող կոտորածները կազմակերպելու ոգեշնչել էին սուլթանական կառավարությունն ու ինքը՝ Արդուլ Համիդը, որոնք և իրոք զգացնել էին տվել «սուլթանի բարձր իշխանությունը», բայց ոչ թե համիդիներին, այլ բազմաշարձար հայ լեռնականներին:

Եվրոպական դեսպանները մտահոգված էին թուրքական սուլթանի «բարձր իշխանության պահպանման» հարցով, իսկ հայ գյուղացիների ծանր կյանքը և նրանց նկատմամբ կիրառվող

<sup>1</sup> «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1898, отдел II, стр. 98.

բռնություններն ու ջարդերը երբեք էլ նրանց չէին հետաքրքրում: Դրա մասին պատկերավոր է խոսել էմիր Դիլունը: Նա գրել է. «Մարդիկ բանտ էին դրվում անգլիական, ավստրիական ու եվրոպական այլ պատվիրակների աջքի առջև: Մուշում այն վկաները, որոնք քաջություն ունեին ճշմարտությունն ասելու պետությունների ներկայացուցիչներին, ոչ մեկի ձեռքը չէր բարձրանում նրանց պաշտպանելու համար. այստեղ էլ օտարերկրյա հյուպատոսների, միսիոներների քթի տակ «հավատարիմ հպատակ» հայերը կախվում են...»<sup>1</sup>:

Սասունի դեպքերը հանգամանորեն ու ճշմարտացիորեն քննելու և զրանց իսկությունը պարզելու գործում խոչընդոտներ էին հարուցում ոչ միայն սուլթանն ու նրա կառավարությունը, այլև Գերմանիան և Ավստրո-Հունգարիան: Սրանք ամեն կերպ աշխատում էին արդարացնել սուլթանական կառավարության դաժանությունները արևմտահայերի, առանձնապես սասունցիների նկատմամբ: Դրա հետևանքով բավական երկար ժամանակ ձգձգվում էր Սասունի դեպքերը քննող հանձնաժողովի ստեղծման հարցը: Այդ հարցի համաեվրոպական քննության առաջարկը շի ընդունվում ոչ միայն թուրքիայի, այլ նաև եռյակ միության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա) դիմադրության պատճառով:

<sup>1</sup> «Положение армян в Турции...», Москва, 1896, стр. 329.

Միայն վերջում Բարձրագույն զուր ստիպված է լինում համաձայնել, որ իր կազմած հանձնաժողովում մասնակցեն նաև երեք պետութայիններ՝ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Այդ հանձնաժողովում Անգլիայի ներկայացուցիչ է նշանակվում Եվրոպական Թուրքիայի Մոնաստիր քաղաքի փոխ-հյուպատոս Շիպլերը, Ռուսաստանի ներկայացուցիչ՝ Կարինի փոխ-հյուպատոս Պրեմալսկին, իսկ Ֆրանսիայինը՝ Կ. Պոլսի ֆրանսիական հյուպատոսաբանի թարգման Վիլբերտը: Հանձնաժողովի գործունեությունը, ինչպես այդ ցույց էր տրվում սուլթանի իրադեում (հրովարտակ), պետք է սահմանափակվեր Սասունի շրջանով:

Երեք պետությունների այդ ներկայացուցիչները պետք է սահմանափակվեին վկաներին հարցաքննելով և իրենց կարծիքը թուրքական իշխանություններին ու երեք մեծ տերություններին հաղորդելով:

Չնայած բազմաթիվ ու բազմատեսակ խոչընդոտներին, կաշառքին, բռնություններին ու ահաբեկումներին, այնուամենայնիվ, քննիչ հանձնաժողովին մասնակցող մեծ տերությունների ներկայացուցիչները հաստատում են, որ հայկական

չարդերը կատարվել են սուլթանական Թուրքիայի կանոնավոր զորքի կողմից և նրա պետերի հրամանով: Այդ բոլորը հաստատվում է ականատեսների պատմածներով, փաստացի նյութերով և անգամ իրենց՝ թուրք զինվորների վկայությամբ: Դրանք շարադրված են քննիչ հանձնաժողովին մասնակցող երեք մեծ տերությունների ներկայացուցիչների զեկուցագրում: Սասունի կոտորածներից ազատված շատ հայեր, ինչպես գրում էին ժամանակի Եվրոպական և հայկական թերթերը, ներկայանում են մեծ պետությունների ներկայացուցիչներին և ամբողջ կոտորածի պատմությունը հանձնում նրանց:

Սասունի անցքերի մասին առանձին նկարագրություններ ու այդ անցքերին ականատես մարդկանց վկայությունները տպագրվում էին ինչպես հայ, այնպես էլ արտասահմանյան մամուլում:

Անգլիացի Մ. Շիպլերը (քննիչ հանձնաժողովի անդամ) վկայում էր, որ «հայերը չարդվեցան առանց հասակի ու սեռի խտրության: Երեք շաբաթի շափ ժամանակամիջոցին մեջ, օգոստոսի 12— սեպտեմբերի 4, նրանք վայրի անասուններու պես հալածվելով սպանվեցան... Ծս ստիպված հմ ըսել, որ սա համոզումը իմ մեջս գոյացավ, թե թուրք կոռավարության փափագածը ոչ թե այնչափ խառնակիչ Մուրատ մը գտնել էր, որ-

<sup>1</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. 1, лл. 89—91; Տե՛ս նաև «Նոր դար» № 219, 1894, զեկտեմբեր 22; «Մուրճ» № 1, 1895, էջ 146; «Մշակ», 1895, զեկտ. 20:

<sup>1</sup> Տե՛ս АВПР, ф. Политархив, д. 3448, лл. 199—205.

չափ Գեղիեզուզան և Տալվորիկ գավառաց հիմնովին ջնջումը»<sup>1</sup>:

Նույն բանը 1895 թվականի մարտի 20-ին իր ղեկուցագրերից մեկում նշում է նաև քննիչ հանձնաժողովի մասնակից Պրժևալսկին<sup>2</sup>:

Սասունի ղեպքերի ավելի հուզիչ ու մանրամասն նկարագրությունը տալիս է էմիլ Դիլլոնը՝ կարինում եղած ժամանակ հավաքած նյութերի հիման վրա նա հանգում է այն միանգամայն ճիշդ կարծիքին, թե Սասունի կոտորածը կատարվել է թուրքական կանոնավոր բանակի զինվորների ձեռքով՝ Զեքի փաշայի հրամանով: Դիլլոնը նշում է, որ թուրքական իշխանությունները բոլոր միջոցներով ձգտում էին ազդել վկաների վրա, որպեսզի նրանք ճշմարտությունը շասեն մեծ տերությունների, ներկայացուցիչներին:

Իր ուսումնասիրությունների հիման վրա Դիլլոնը եզրակացնում է, որ Փոքր Ասիայի և հատկապես Արևմտյան Հայաստանի հասարակական, բաղադրական և տնտեսական ամբողջ կազմակերպությունն անտանելի վիճակի մեջ է, որ Սասունի կոտորածը միայն մի խիստ լուսաբանություն է թուրքիայում տիրող կարգերի, և թե ամբողջ երկ-

<sup>1</sup> Մեջբերումը կատարված է պրոֆ. Կ. Թումայանի «Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի գրքից (հատ. Ա, էջ 555):

<sup>2</sup> Տե՛ս АВІР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. I, лл. 176—182.

բում մշտապես կրկնվում են անթիվ «Սասունի կոտորածներ»: Արևմտյան Հայաստանում քայքայվել էր տնտեսական կյանքը, դադարել էր առևտուրը: 1895 թվականի հունվարի 18-ին անգլիական «Դեյլի նյուս» թերթի Կ. Պոլսի թղթակցը հայտնում էր, որ «... այնտեղ (Արևմտյան Հայաստանում— Կ. թ.) բոլոր գործերը կատարելապես կանգ են առել՝ հայերի հալածված լինելու պատճառով: Սվազում բոլոր գլխավոր առևտրականները կամ բանտերում են հեծում, կամ շին համարձակվում որևէ գործ ձեռնարկել»:

1895 թվականի հունվարի 24-ին<sup>1</sup> քննիչ հանձնաժողովին մասնակցող մեծ տերությունների ներկայացուցիչները Մուշում իրենց առաջին նիստն են ունենում: Այդ նիստից հետո, փետրվարի 6-ին, մեծ տերությունների ներկայացուցիչները հաղորդում են, որ «օսմանյան իշխանությունները բոլոր հնարավոր միջոցներով ձգտում են խանգարել վկաներին խոսելու»: Այնուհետև այդ գանգատը սխստեմատիկ կերպով կրկնվում է նրանց և եվրոպական պետությունների կոստանդնուպոլի գեսպանությունների հաղորդագրությունների մեջ:

1895 թվականի հուլիսի 16-ին մեծ տերությունների ներկայացուցիչները, որոնք ունեցել

<sup>1</sup> Տե՛ս АВІР, ф. Политархив, д. 3448, л. 205. Տե՛ս նաև պրոֆ. Կ. Թումայան, Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, հատ. Ա, Լոնդոն, 1905, էջ 55 է:

էին 108 նիստ և լսել 190 վկայի<sup>1</sup>, ավարտում են իրենց աշխատանքը և հուլիսի 28-ին մի ամփոփ զեկուցագիր ներկայացնում եվրոպական մեծ տե-  
րություններին ու Բարձրագույն դռանը, որի մեջ հանրագումարի էր բերվել այն բոլորը, ինչ նրանց հաջողվել էր իմանալ:

Սասունի կոտորածների մասին համաշխարհային մամուլի, կուլտուրայի, դիտության պրոգրեսիվ գործիչների բողոքների և այլ հանգամանքների ազդեցության տակ սուլթանական կառավարությունն արտաքուստ փոփոխում է իր վերաբերմունքն արևմտահայության նկատմամբ՝ առերես «բարյացակամ» է դառնում: Որպես դրա ապացույց, սուլթանական կառավարությունը Զեքի փաշային հեռացնում է Բիթլիսի վիլայեթից, անհամեմատ մեղմ վճիռ է կայացնում Մուրադի և մյուս բանտարկյալների նկատմամբ, հայերին «ներում» է շնորհում և թույլատրում վերադառնալ իրենց բնակավայրերը: Այդ ամենով հանդերձ, նա ամեն կերպ ջանում էր ցույց տալ, թե իբր այդ բոլորը թյուրիմացության արդյունք էր, բրդերի «անիրավության» հետևանք: Բացի այդ, նա խոստանում է նյութական օժանդակություն ցույց տալ՝ Սասունը վերականգնելու համար<sup>2</sup>:

Կառավարության նպատակը պարզ էր. դրա-

նով նա ձգտում էր սիրաշահել ու ապա սաստել հայերին: Իսկ երբ այդ հարցի շուրջն սկսեց աղմուկ բարձրանալ և գործը միջազգային բնույթ ստանալ, առանց հապաղելու Բարձրագույն դուռը կոտորածի մեղքը բարդեց բրդերի վրա, առիթն օգտագործելով, սկսեց հալածել նրանց՝ շատերին ոչնչացնելով ու բանտարկելով, իսկ մյուսներին բռնելով Սիրիայի ու Իրաքի անապատները:

Իր հայաջինջ քաղաքականությունն առաջ մղելու նպատակով սուլթանական կառավարությունը որոշ զիջումներ արեց եվրոպական մեծ պետություններին, բավարարեց նրանց պահանջները և, իրեն ավելի ազատ զգալով արևմտահայերի նրկատմամբ, անցավ մասսայական կոտորածների, որոնք մեծ չափերի հասան 1895—1896 թվականներին:

<sup>1</sup> Տե՛ս АВГР, ф. Политархив, д. 3448, л. 205.

<sup>2</sup> Տե՛ս АВГР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. 1, л. 175.

էին 108 նիստ և լսել 190 վկայի<sup>1</sup>, ավարտում են իրենց աշխատանքը և հուլիսի 28-ին մի ամփոփ գեկուցագիր ներկայացնում եվրոպական մեծ տեղություններին ու Բարձրագույն դռանը, որի մեջ հանրագումարի էր բերվել այն բոլորը, ինչ նրանց հաջողվել էր իմանալ:

Սասունի կոտորածների մասին համաշխարհային մամուլի, կուլտուրայի, դիտության պրոգրեսիվ գործիչների բողոքների և այլ հանդամանքների ազդեցութեան տակ սուլթանական կառավարութեան արտաքուստ փոփոխում է իր վերաբերմունքն արևմտահայութեան նկատմամբ՝ առերես «բարյացակամ» է դառնում: Որպես դրա ապացույց, սուլթանական կառավարութեանը Չեքի փաշային հեռացնում է Բիթլիսի վիլայեթից, անհամեմատ մեղմ վճիռ է կայացնում Մուրադի և մյուս բանտարկյալների նկատմամբ, հայերին «ներում» է շնորհում և թույլատրում վերադառնալ իրենց բնակավայրերը: Այդ ամենով հանդերձ, նա ամեն կերպ ջանում էր ցույց տալ, թե իբր այդ բոլորը թյուրիմացութեան արդյունք էր, բրդերի «անիրավութեան» հետևանք: Բացի այդ, նա խոստանում է նյութական օժանդակութուն ցույց տալ՝ Սասունը վերականգնելու համար:

Կառավարութեան նպատակը պարզ էր. դրա-

նով նա ձգտում էր սիրաշահել ու ապա սաստել հայերին: Իսկ երբ այդ հարցի շուրջն սկսեց աղմուկ բարձրանալ և գործը միջազգային բնույթ ստանալ, առանց հապաղելու Բարձրագույն դուռը կոտորածի մեղքը բարդեց քրդերի վրա, առիթն օգտագործելով, սկսեց հալածել նրանց՝ շատերին ոչնչացնելով ու բանտարկելով, իսկ մյուսներին բռնելով Սիրիայի ու Իրաքի անապատները:

Իր հայաջինջ քաղաքականութեանն առաջ մղելու նպատակով սուլթանական կառավարութեանը որոշ զիջումներ արեց եվրոպական մեծ պետութեաններին, բավարարեց նրանց պահանջները և, իրեն ավելի ազատ զգալով արևմտահայերի նրկատմամբ, անցավ մասսայական կոտորածների, որոնք մեծ չափերի հասան 1895—1896 թվականներին:

<sup>1</sup> Տե՛ս АВПР, ф. Политархив, д. 3448, л. 205.

<sup>2</sup> Տե՛ս АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. 1, л. 175.

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՂԱՅԵԹՆԵՐԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ  
ԽՆԴԻՐԸ ԵՎ ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԻՐՏ  
ՈՒԺԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

Սասունի կոտորածների շուրջը բարձրացած միջազգային աղմուկն օգտագործելով, եվրոպական մեծ պետությունները կրկին հրապարակ են հանում հայկական վիլայեթների բարենորոգումների հարցը, նպատակ ունենալով նոր ճնշում գործադրել թուրքիայի վրա՝ նրանից նորանոր զիջումներ կորզելու համար: Եվ ահա, Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի դեսպանները 1895 թվականի մարտ-ապրիլ ամիսներին մշակում են Արևմտյան Հայաստանին վերաբերող ռեֆորմների նախագիծ և 1895 թվականի մայիսի 11-ին ներկայացնում Բարձրագույն դռան:

Ռեֆորմների այդ նախագիծը, որի ֆրանսերեն տեքստի պատճենը պահվում է Հայկ. ՄՍՌ պետական կենտրոնական պատմական արխիվում<sup>1</sup>, իսկ անգլերեն տեքստից կատարված թարգմանու-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՄՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, դ. 55, թ. 85—96  
(„Memorandum ei projet des réformes“),

թյունը տպագրվել է ռուսական «НОВОСТИ», հայկական՝ «Մշակ», «Արձագանք» թերթերում, «Մուրճ» ամսագրում և հրատարակվել մի շարք այլ զրբերում ու մամուլի օրգաններում, բաժանվում էր երկու մասի: Առաջին մասում կամ մեմորանդումում խոսվում էր այն մասին, թե ինչպիսի քայլեր պետք է անի թուրքական կառավարությունը՝ նախքան կսկսի ռեֆորմների իրագործումը, իսկ երկրորդ մասում կամ ռեֆորմների բուն նախագիծում տրվում էին հայկական վեց վիլայեթներում մտցվելիք վարչական, դատաստանական և ֆինանսական բարեփոխումները:

13 պլսից և 40 հոդվածից բաղկացած ռեֆորմների այդ նախագիծը մի խղճուկ ծրագիր էր: Այն արևմտահայությունը, իբրև քաղաքական համայնքի, ոչ մի իրավունք չէր տալիս, չէր սահմանափակում սուլթանական կառավարության պաշտոնյաների կամայականություններն ու բռնությունները արևմտահայերի նկատմամբ, չէր ապահովում հայերի անձի ու զույգի անձեռնմխելիությունը, նրանց չէր պաշտպանում հարստահարիչների բռնություններից ու խժոժություններից, այլ ամենաշատը՝ վարչական մասում նախատեսում էր մի քանի մանր, շնչին, ոչ մի արժեք չներկայացնող «բարեփոխություններ»: Ռեֆորմների նախագիծում միայն մի երաշխավորություն էր թողնված հայ ժողովրդի համար: Դա նրա մասնակցություն «իրավունքն» էր նահիենների



խորհուրդներում, իսկ նահիենները կազմում էին վարչական ամենաստորին միավորները: Մրազքի նախագծի մեջ սուլթանական կառավարության միջամտություններին այնքան տեղ էր տրված, որ կենտրոնի ճնշում գործադրելու հետևանքով բացարձակ կասկածի տակ էր դրվում նահիեններում օրինական կարգի հաստատումը:

Մեմորանդումում եղած մի քանի կետեր, օրինակ՝ կոտորածի ժամանակ տուժած հայերին նյութական օգնություն տալը, քաղաքական հողի վրա դատապարտվածներին ներում շնորհելը, արտասահման փախած հայերի ազատ վերադարձը, բանտարկյալների վիճակի բարելավումը, դատաստանական գործերի ազատ լուծումը և այլն, որոնք առաջին հայացքից դրավիչ տպավորություն էին թողնում, ժամանակավոր միջոցառումներ էին, ուրեմն և բուն ռեֆորմներին չէին վերաբերում:

Ռեֆորմների նախագիծը սուլթանին ներկայացվելուց հետո, նրա կառավարությունը, որն արդեն լավ էր հասկացել եվրոպական մեծ տերությունների իսկական, շահամուլ նպատակները, հրապարակ է հանում իր առարկությունները դրա դեմ: Սուլթան Աբդուլ Համիդի անունից առաջին պատասխանը մեծ տերությունների դեպպաններին հաղորդվում է 1895 թվականի հունիսի 3-ին<sup>1</sup>: Այդ

<sup>1</sup> Տե՛ս Առ, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 235:

պատասխանում դեմագոգիկ կերպով նշվում էր, որ Բարձրագույն դուռը պատրաստ է ռեֆորմներ մտցնել, բայց այդ ռեֆորմները չպետք է վերաբերեն միայն այն վիլայեթներին, ուր ապրում են հայերը, այլ պետք է տարածվեն պետության բոլոր վիլայեթների վրա<sup>1</sup>: Դրանով սուլթանական կառավարությունը փաստորեն մերժում էր այդ՝ այսպես կոչված «մայիսյան ռեֆորմների նախագիծը» և շարունակում իր հայաջինջ քաղաքականությունը:

Այս հարցում սուլթանական կառավարությանը պաշտպանում էր կայզերական Գերմանիան, որը նպատակ ուներ տիրապետող դիրք գրավել Մերձավոր արևելքում, իր ազդեցությանը ենթարկել թուրքիան: Գերմանական մամուլը և պաշտոնական շրջանները սկսում են ակտիվ կերպով պաշտպանել սուլթանական կառավարությանը, նրանք տարածում էին իրականության հետ ոչ մի կապ չունեցող այն վերսիան, թե իբր թուրքիայի այժմյան սուլթան Աբդուլ Համիդը առանձնապես ջերմ փափագ ունի բարվոքել իր երկրի և նրանում բնակվող ազգերի, հատկապես հայերի, դրությունը: Բայց եթե նրա փափագը մնում է անկատար, եթե նրա կազմած ծրագիրը և կարգադրությունները չեն իրականացվում, այդ բանի

<sup>1</sup> Տե՛ս Առ, Հայոց հարցի վավերագրերը, էջ 235: Տե՛ս նաև «Մշակ» № 64, 1895, հունիսի 6:

մեջ հանցավոր են նրա պետութեան գալառային օրգանները, որոնք այդ ծրագիրը չեն իրագործում: Սա պատմական փաստերի ահաւոր կեղծում էր և նպատակ ունեւ արյունարբու սուլթանին ներկայացնելու մարդասեր ու բարի: Գերմանական մամուլը և կառավարական շրջանները, առաջնորդվելով Բիսմարկի այն հայատնաց ասուլթով, թե «Ամբողջ հայկական հարցը Գերմանիայի համար պոմերանացի մի զառամյալ և անպետք զինվորի ոսկորների արժեքն անգամ չունի», դիտմամբ աղավաղում էին փաստերը, կեղծում ու փոխում իրողութիւնը:

Օգտվելով եվրոպական պետութիւնների այդպիսի քաղաքականութիւնից, սուլթանական կառավարութիւնը ռեֆորմի նախագծի քննարկումը նախ ձգձգեց հինգ ամիս և ապա այն խեղելով՝ դարձրեց ավելի ճապաղ և ոչ մի արժեք չներկայացնող դատարկ թղթի կտոր:

Հաշվի չառնելով ժամանակի իրապայմանները, չկարողանալով ճիշտ գնահատել եվրոպական պետութիւնների միջև եղած խոր հակասութիւններն ու նրանց քաղաքականութեան իսկական իմաստը՝ հայկական հարցում, հնչակյանները՝ եվրոպական պետութիւնների ուշադրութիւնը գրավելու և նրանց օգնութեամբ հայկական վիլայեթներին վերաբերող բարեփոխումների ծրագիրը գործողութեան մեջ դնելու հույսով, 1895 թվականի սեպտեմբերի 18 (30)-ին Կոստանդնուպոլսում

ցույց են կազմակերպում<sup>1</sup>: Դա նոր կոտորածների առիթ է դառնում: Բարձրագույն դուռը հայերի դեմ զինված ուժ է հանում և սկսում կոտորել նրանց: Կառավարութեան հրամանով ոստիկաններն ու զինվորները հարձակվում են Կ. Պոլսի հայկական թաղերի վրա և մինչև սեպտեմբերի 20-ը (հոկտեմբերի 2), այնուհետև՝ սեպտեմբերի 26-ին և 27-ին (հոկտեմբերի 8—9) մեծ կոտորած են սարքում ու թալանում հայերի ունեցվածքը: Նույնպիսի արյունահեղութիւններ են տեղի ունենում նաև հայաբնակ այլ վայրերում:

Հասարակական ուշադրութիւնն այդ դեպքերից հեռացնելու և եվրոպական պետութիւններին զբաղեցնելու նպատակով սուլթանական կառավարութիւնը հայտարարում է, թե ընդունում է հայկական վիլայեթների համար մշակված բարենորոգումների ծրագիրը, և հոկտեմբերի 8 (20)-ին սուլթանը ստորագրում է 16 գլխից ու 32 հոգվածից բաղկացած և ամբողջովին սուլթանիզմի շահերին հարմարեցված այդ նախագիծը: Ռեֆորմները թուրքական կառավարութեան համար նպատակ չէին, այլ միջոց եվրոպական պետութիւններին խաբելու: Սուլթանական կառավարութիւնը՝ տեսնելով եվրոպական մեծ տերութիւնների անտարբեր վերաբերմունքը արևմտահայերի նըկատմամբ, բավարարելով նրանց պահանջը, դի-

<sup>1</sup> ՏՆՊ АВПР, ф. Канцелярия, оп. 470, д. 26, т. 11, л.л. 579—581.

մում է ոճրագործությունների: Օսմանյան տերության տարբեր մասերում, Տրապիզոնում, Գյումուշխանայում, Բաբերդում, Դերջանում, Կարինում, Բասենում, Քղիում, Կամախում, Երզնկայում, Արճեշում, Ալճավազում, Վանում, Շատախում, Կարճկանում, Սղերդում, Բաղեշում, Խիանքում, Մուշում, Սասունում, Ամասիայում, Մարզուանում, Եվդոնիայում, Սերաստիայում, Նիկոպոլսում, Զիլեում, Կեսարիայում, Խարբերդում, Ակնում, Արաբկիրում, Եղեսիայում, Սևերիկում, Բալուում, Գիարբեխիրում, Գերմանիկում, Մեղիրեում, Ադանայում, Տարսոնում, Մերսինում, Անտիոքում և այլուր<sup>1</sup> կազմակերպվում են հայկական նոր ջարդեր: Բոլորի ուշադրությունը բևեռվում է կոտորածների վրա, և ռեֆորմների ծրագիրը, իբրև մեռյալ տառ, թաղվում է ու մեջտեղից վերանում:

Սուլթանական կառավարությունը ջարդեր էր նախատեսում նաև Կիլիկիայում, մասնավորապես Զեյթունում: Այդ նպատակով սուլթան Աբդուլ Համիդը այնտեղ է մտցնում մի մեծ բանակ Մուստաֆա Ռեմզի փաշայի հրամանատարությամբ:

Թուրքական բանակի առաջին հարձակումը կատարվում է Մարաշ քաղաքի հայկական թաղերի, Յոռնոզ, Հաջըն, Ալբիստան, իսկ այնուհետև

<sup>1</sup> Տե՛ս Մ. Օրմանյան, Աղգապատում, երրորդ մաս, Երուսաղեմ, 1927, էջ 5020—5031: Տե՛ս նաև АВПР, ф. Канцелярия, д. 28, л. 33.

Անդրոնի գավառի հայաբնակ գյուղերի վրա: Այդ հարձակումների ժամանակ թուրք ջարդարաները անխնա կոտորում են հայ բնակչությանը, թալանում բնակավայրերը: Կիլիկիայի հողը կրկին ներկվում է անմեղ ու անպաշտպան հայերի արյունով:

Մինչ Զեյթունի վրա արշավանք սկսելը թուրքական կանոնավոր բանակը և անկազմակերպ հրոսակների զինված ջոկատները ջարդեր ու ավերածություններ էին կատարել քաղաքի մերձակա հայաբնակ գյուղերում ու ավաններում<sup>1</sup>: Սակայն սուլթանական կառավարության հիմնական նպատակը ապստամբության դրոշ պարզած զեյթունցիների բնաջնջումն էր: Մուստաֆա Ռեմզի փաշան իր բանակը բաժանում է երկու մասի: Մի մասը վերցնում է իր հրամանատարության տակ, իսկ մյուսը՝ հանձնում է ադանացի գեդապետ Ալի բեյին և դրանք նետում Զեյթունի վրա: Թուրքական բանակին էին միացել մեծ բանակությամբ ավազակային խմբեր:

1895 թվականի սեպտեմբերի 26 (հոկտեմբերի 8)-ին Մուստաֆա Ռեմզի փաշայի ղեկավարած թուրքական բանակի զլխավոր ուժերը հասնում են Զահան գետի ձախ ափը: Այդ բանակի առաջխաղացումը կասեցնելու նպատակով 150 զեյթունցիներ հասնում են Բերդիզ-չայ կոչ-

<sup>1</sup> Տե՛ս Վ. Մելիքսեբյան, Զեյթունի հրոսամարտերը, Երևան, 1960, էջ 93:

ված դաշտը և կռվի բռնվում թշնամու հետ: Սակայն շղիմանալով նրա գերազանց ուժի ճնշմանը նահանջում են գեպի Զեյթուն:

Այդ պահին քաղաքի ավագների խորհուրդը որոշում է հարձակվել ու գրավել գայմազամի պալատը և քաղաքի արևմտյան մասի բարձունքներից մեկի վրա գտնվող թուրքական զորանոցը: Հոկտեմբերի վերջերին հայերը գրոհով գրավում են գայմազամի պալատը, գերի են վերցնում 60 զինվոր և փոխ-կառավարիչ Ավնի բեյին<sup>1</sup>: Նույն ամսի 29-ին հայ լեռնականները գրավում են նաև զորանոցը, ուր կային 600 զինվոր և 50 սպա<sup>2</sup>:

Հայերի այս հաղթանակը կատաղեցնում է թշնամուն: Նա իր ամբողջ ուժերը նետում է Զեյթունի վրա: Նոյեմբերի 19 (դեկտեմբերի 1)-ին Ալի բեյի 30 հազարանոց զորքը շարժվում է Զեյթուն տանող ճանապարհին գտնվող Ֆոնուզ գյուղի վրա<sup>3</sup>, ուր կուտակվել էին շրջակա գյուղերի հայ բնակիչները, որոնց մեծ մասը ծերեր ու մանուկներ էին: Ֆոնուզյիները համառ կերպով դիմադրում են թշնամուն: Կատաղի մարտերից հետո

<sup>1</sup> Տե՛ս Զեյթունցի, Զեյթունի անցյալին և ներկային, Բ մաս, Փարիզ, 1903, էջ 35, 43: Տե՛ս նաև Գր. Հ. Գալուստյան, Մարաշ, 1934, էջ 159:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>3</sup> Տե՛ս Զեյթունցի, էջ 51: Տե՛ս նաև Գր. Հ. Գալուստյան, էջ 161:

թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ նրանք ստիպված են լինում տեղիք տալ և քաշվել նոր բնագծեր: Թշնամին հրդեհում է գյուղը: Կոտորածից ազատվածները ապաստանում են Զեյթունում: Այնտեղ էր կուտակվել թուրքական ջարդարանների սրից, ազատված այլ վայրերի հայ բնակչությունը:

Իրենց պատվի ու ազատության համար պայքարող զեյթունցիները համակված էին ազատության վեհ՝ զգացումով: Հերոս լեռնականները ապաստամբության դրոշ էին բարձրացրել հանուն իրենց հայրենիքի, ընտանիքի ու պատվի: Դա է պատճառը, որ Զեյթունը դառնում է անառիկ ամբողջ. թշնամու ուժերը դիպչելով նրա ժայռերին, ջախջախվում ու հտ էին շարտվում: Համառ կռիվներ են տեղի ունենում Ս. Փրկիչ վանքի բարձունքներում: Այստեղ հայերի համար շրջապատման վտանգ էր ստեղծվել: Ուստի նրանք դիմում են վճռական գրոհի. ձեղքում են թշնամու զորքերի շարքը և դուրս գալիս Մորթատլար գյուղի տակ ու նոր դիրքեր գրավում այնտեղ: Դեկտեմբերի 13 (25)-ին լուրջ մարտեր են տեղի ունենում Սանդուխի կիրճում<sup>1</sup>: 1500 զինված լեռնականներ բազմիցս հտ են մղում թուրքական կանոնավոր բանակի հարձակումները:

Հաշվի առնելով Սանդուխի կիրճի ստրատեգիական նշանակությունը, թուրքական բանակի

<sup>1</sup> Տե՛ս Զեյթունցի, էջ 52:

հրամանատարութիւնը նորանոր ջոկատներ է ուղարկում այնտեղ, աշխատելով ինչ գնով էլ լինի գրավել այն: Թուրքական վիթխարի զորքի ճնշման տակ հայերը թողնում են կիրճը և նահանջում դեպի Ադդադի բարձուքները: Նրանք, թվով 400 մարդ, կենտրոնանում են էշաք-մեյդանում<sup>1</sup>: Մուստաֆայ փաշան խնդիր էր դրել, ինչ գնով էլ լինի գրավել այդ վայրը և ներխուժել Զեյթուն: Նա այստեղ էր կենտրոնացրել 20 հազարանոց զորաբանակ, որը սակայն հանդիպելով զեյթունցիների դիմադրութեանը, ջախջախւում ու ետ է շարժւում: Հայ լեռնականները դիրքեր էին գրավել նաև զորանոցի ամրոցում և ճապաղ-շայի մոտերքում: Թուրքական բանակը շարունակելով հարձակումը, հրետանային կրակի տակ է վերցնում զորանոցը, բայց այն գրավել չի կարողանում: Կանգնեցնելով թուրքական զորքի առաջխաղացումը, հայերն անցնում են հարձակման և շեշտակի գրոհով նրան դուրս շարտում Զեյթունի արվարձաններից: Հայ լեռնականները փակում են քաղաք տանող բոլոր ճանապարհները և ընդհանուր պատենջ ստեղծում թշնամու դեմ:

1895 թվականի դեկտեմբերի 16-ին Մուստաֆա Ռեմզի փաշան նոր հարձակման հրաման է տալիս: Այդ հարձակումով թշնամին կարողանում է հարմար դիրքեր գրավել, ուր և տեղավորում է

իր հրետանին ու նրանով սկսում ուժեղանալ քաղաքը: Հրետանու օգնութեամբ թուրքական զորքը փորձում է առաջ շարժվել, բայց իզուր: Հայերն իրենց գրաված թնդանոթներով կասեցնում են թշնամու առաջխաղացումը, մեծ կորուստներ պատճառելով նրան:

Նույն կատաղութեամբ մարտերը շարունակվում են դեկտեմբերի 17-ին, 18-ին և 19-ին: Թշնամին ճգնում էր շրջանցել զեյթունցիների դիրքերը և քաղաքի հարավ-արևելյան կողմից գրոհել Սոլաղ-դերեի բնագծի վրա, գրավել այն և միանալ Ալի բեյի զորաբանակին ու միասին ներխուժել Զեյթուն:

Զեյթունցիներն անմիջապես կռահում են թշնամու այդ դիտավորութիւնը և իրենց համարձակ զորաշարժերով վիժեցնում թուրքական երկու զորաբանակների միացման պլանը: Ալի բեյը մեծ զոհեր տալով ետ է նահանջում իր նախկին դիրքերը:

Ալի բեյի զորաբանակի հարձակման վտանգը վերացնելու նպատակով զեյթունցիների մի ջուկատ հաջող մասեր կատարելով, անցնում է նրա թիկունքը, իսկ մի այլ ջուկատ տակտիկական նկատառումներով ետ է նահանջում և թույլ է տալիս, որ Ալի բեյի առաջապահ զորագունդը մոտենա քաղաքի այգիներին, ուր խրամատավորվել էին Զեյթունի պահեստի զորագնդի զինվորները: Այստեղ ամեն կողմից անվեհեր լեռնականները

<sup>1</sup> Տե՛ս Զեյթունցի, էջ 56:

հարձակվում են թշնամու զորաջոկատների վրա<sup>1</sup>: Ալի բեյի զորաբանակում սկսվում է խուճապ և անկազմակերպ փախուստ: Դա հնարավորութուն է տալիս հայերին կործանիչ հակահարված տալ նրան ու ետ շարտել քաղաքի սահմաններից հեռու Փաստորեն դեկտեմբերի 16-ից մինչև 20-ը ընկած ժամանակամիջոցում թուրքական զորքերը լուրջ պարտություն են կրում, նրանց զոհերի թիվը հասնում է 7000 մարդու: Իրականում թուրքական բանակը սկսում է կազմալուծվել և այլևս չի կարողանում կազմակերպված հարձակում ձեռնարկել:

Այս անհաջողությունները խիստ կերպով անհանգստացնում են սուլթանական պետությունից դեկավար շրջաններին: 1896 թվականի հունվարի 3-ին սուլթան Աբդուլ Համիդը Ջեյթունում գործող բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնից հեռացնում է Մուստաֆա Ռեմզի փաշային, փոխարենը նշանակում Ֆերիկ էտհեմ փաշային<sup>2</sup>, որը, սակայն, աչքի ընկնող հաջողությունների չի կարողանում հասնել:

Ջեյթունի ինքնապաշտպանական մարտերը շարունակվում են մինչև 1896 թվականի հունվարի վերջերը: 45 օր շարունակ Ջեյթունի հայ բնակ-

չությունը մահու և կենաց կռիվ էր մղում թուրք ջարդարարների դեմ: Կատաղի մարտերում նա արյունաքամ էր արել սուլթանական հարձակվող բանակին, ձախողել Ջեյթուն թափանցելու նրա բոլոր փորձերը: Ծանր էր նաև հայերի վիճակը: Ջեյթունի վրա թուրքական բանակի հարձակումից ի վեր անվեհեր լեռնականները մեկուսացել էին արտաքին աշխարհից, դրսից չէին կարող օգնություն ստանալ, նրանք շափազանց նեղվում էին սննդամթերքի պակասությունից, ինչպես նաև վարակիչ հիվանդություններից: Կռիվների ընթացքում ավերվել էին Ֆոնուզ, Քեպան, Զաքար-հիսար, Շիվելք, Պանտուկ, Ետնիճեգալի, Մուճակ-դրեսի, Ծամուռ-օյուք, Տեյերմեն-դերեսի, Տանկելի և որիշ շատ հայաբնակ գյուղեր, սուվից և համաճարակ հիվանդություններից մեռել և կռիվներում զոհվել էր ավելի քան 6000 մարդ<sup>1</sup>: Բայց, աչքի առաջ ունենալով Սասունի 1894 թվականի ամառվա կոտորածները, հայ լեռնականները հաստատվճոականությամբ որոշել էին օգտագործել վերջին հնարավորությունները՝ թշնամու հորդանքերը ջախջախելու համար:

1895 թվականի վերջերին թուրքիացում նոր թափ են ստանում նաև մյուս ճնշված ժողովուրդներին ազատագրական շարժումները: Այդ շար-

<sup>1</sup> Տե՛ս Ջեյթունցի, էջ 56—60:

<sup>2</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի ֆոնդ, գ. 307, էջ 139:

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի ֆոնդ, գ. 307, էջ 139:

ժումները ձնշելու համար պետք էին ուղղակիան մեծ ուժեր: Ուստի սուլթան Աբդուլ Համիդը և նրա կառավարությունը, հնարավորություն չունենալով ուղղակիան նոր ուժեր դուրս բերել զեյթունցիների դեմ, աշխատում են հաշտություն կնքել նրանց հետ: Դրան միջամտում են եվրոպական մեծ տերությունները: 1896 թվականի հունվարի սկզբին Անգլիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի հյուպատոսները իրենց միջնորդությունն են առաջարկում հաշտություն կնքելու համար: Զեյթունի ավազների խորհուրդը ընդունում է այդ առաջարկությունը: Վեց տերությունների հյուպատոսների ներկայությամբ 1896 թվականի հունվարի 27-ին Զեյթունում սկսվում են հաշտության բանակցությունները: Բանակցությունների ժամանակ զեյթունցիների ներկայացուցիչները առաջարկում են հաշտության հետևյալ պայմանները՝ 1) ներում շնորհել ապստամբներին ու նրանց առաջնորդներին, 2) իրենք հրաժարվում են թուրքական զորանոցը վերակառուցելուց, 3) իրենց մուսուլման դրացիների զինաթափում և մեծ տերությունների կողմից իրենց կյանքի երաշխավորում, 4) մեծ տերությունների համաձայնությամբ սուլթանի կողմից Զեյթունում բրիտանյա գալմազամի նշանակում, 5) առաջիկա մի քանի տարիներին իրենց ազատել հարկերից ու տուրքերից, 6) թուր-

քական պահակ զորախումբը դուրս բերել Զեյթունից՝ և այլն:

1896 թվականի փետրվարի 9-ին ստացվում է Բարձրագույն դռան համաձայնությունը զեյթունցիների ներկայացրած պայմանների շուրջը բանակցությունները շարունակելու և հաշտություն կնքելու համար<sup>2</sup>:

Փետրվարի 9-ին ավարտվում են բանակցությունները և կնքվում հաշտության պայմանագիր հետևյալ բովանդակությամբ. 1) ներում շնորհել Զեյթունի և նրա գավառի ապստամբներին, 2) Զեյթունում նշանակել բրիտանյա կառավարիչ եվրոպական վեց տերությունների համաձայնությամբ, 3) տեղի հայ բնակչությունից կազմակերպել ոստիկանական ջոկատ, 4) զիջել նախկին տարիներից մնացած հարկերը և տուրքերը, 5) հաշվի առնելով Զեյթունի և նրա գավառի բնակչության ծայրահեղ աղքատ վիճակը, նրանց հինգ տարի ժամանակով ազատել հարկերից ու տուրքերից, 6) երաշխավորել տեղի բնակչության կյանքի ու գույքի անձեռնմխելիությունը, 7) թուրքական բանակը անհապաղ դուրս բերել Զեյթունի

<sup>1</sup> Տե՛ս Հայկ ՍՍԻ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 59, թ. 16: Տե՛ս նաև Հայկ. ՍՍԻ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի ֆոնդ, գ. 307, թ. 135—140: Պրոֆ. Կ. Թումայան, Պատմություն արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի, հատ. Ա, էջ 583:

<sup>2</sup> Նույն տեղում:

սահմաններից, 8) բանակցութիւններին մասնակցած մեծ տերութիւնների հյուպատոսները պետք է մնան Զեյթունում մինչև թուրքական բանակի հետացումը այնտեղից, 9) եվրոպական տերութիւններին թուլլատրել Մարաշ քաղաքում հիմնելու հյուպատոսութիւններ՝ այդ պայմանագրի իրականացման վրա հսկելու համար և այլն: Պայմանագրով զեյթունցիները պարտավոր էին վերադարձնել գրաված զինքերը և ռազմաթիւքը, բայց այն պայմանով, որ զինաթափ արվեն թուրք, բուրդ ու շերքեզ հրոսակները<sup>1</sup>:

Այս պայմանագիրը, որը տարածվում է Զեյթուն քաղաքի և նրա շրջապատի գյուղերի վրա, հետագայում հաստատվում է եվրոպական վեց տերութիւնների Կոստանդնուպոլսի դեսպանների և թուրքական կառավարութեան միջև կնքված հատուկ համաձայնագրով:

Հարկ է նշել, որ հետագայում սուլթանական կառավարութիւնը ոչ միայն չկատարեց այդ պայմանագրով ստանձնած պարտավորութիւնները, այլև, օգտվելով եվրոպական մեծ տերութիւնների անտարբեր վերաբերմունքից, դիմեց նոր բռնութիւնների ու ջարդերի: Թուրքական զորքը ավելի մեծ սպառնալիք դարձավ ինչպես զեյթունցի-

<sup>1</sup> Տե՛ս Հայկ. ՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 56, ց. 5, գ. 59, թ. 16: Տե՛ս նաև Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմութեան ինստիտուտի արխիվ, Կոնյի ֆոնդ, գ. 307, թ. 125—140. պրոֆ. Կ. Թումայան, էջ 583:

ների, այնպես էլ ամբողջ արևմտահայութեան համար: Սուլթանական կառավարութիւնը նոր թափով ծավալեց գենոցիտի իր քաղաքականութիւնը Կոստանդնուպոլսում և Թուրքիայի հայաբնակ այլ վայրերում:

1895—1896 թվականների կոտորածների ժամանակ, ինչպես հաղորդում են եվրոպական պետութիւնների դեսպանների ու հյուպատոսների պահպանված տեղեկագրերը, հայ և օտարերկրյա ժամանակակից մամուլը, զոհվում են ավելի քան 300.000 հայեր, ամբողջութեամբ կամ կիսով չափ կողոպտվում, այրվում ու ամայանում են 3000-ից ավելի հայաբնակ գյուղեր, առևանգվում հազարավոր աղջիկներ ու կանայք, 100.000 մանուկներ մնում են որք, կրոնափոխ են արվում շատերը, Կովկաս, Ռուսաստան, Պարսկաստան, Բալկանյան երկրներ, Ֆրանսիա, Անգլիա, ԱՄՆ են գաղթում մոտ 290.000 հայեր<sup>1</sup>:

\*\*\*

Սասունի 1894 թվականի ապստամբութիւնը ճնշելուց հետո ձեռնամուխ լինելով հայկական ջարդերի կազմակերպման, սուլթանական կառավարութիւնը ձգտում էր ամբողջովին ամայացնել

<sup>1</sup> Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հրրորդ մաս, էջ 5031: Տե՛ս նաև «Новая история зарубежной Азии и Африки», Ленинград, 1959, стр. 517; А. А. Губер, А. Н. Хейфец, Новая история зарубежного востока, Москва 1961, стр. 332.



Արևմտյան Հայաստանը և հայերի ֆիզիկական ոչնչացմամբ «լուծել» «հայկական հարցը»:

Մանթանալով արևմտահայերի եղբրական վիճակին, անգլիացի Մակքոլը միանգամայն ճիշտ կերպով նկատել է, որ 1894—1896 թվականներին հայերի ջարդը Թուրքիայում տեղի էր ունենում ոչ թե մահամեղական ամբոխի ֆանատիզմի տարերային բռնկման հետևանքով, այլ որպես սուլթանական պետության կողմից իրականացվող քաղաքական ակտ, կապված սուլթանի և նրա խորհրդատուների ստեղծած սխտեմի հետ<sup>1</sup>: Իսկ իուլանդացի էմիլ Դիլլոնը ընդգծում էր. «Այժմ արդեն ապացուցված է, որ Մասունի կոտորածը Բ. դուան գիտակցութեն կազմակերպած գործն է, մի գործ, որ խնամքով նախապատրաստվել է և անողոք կերպով իրագործվել, շնայած այն բանին, որ այդ սարսափները... կարեկցական զգացմունք առաջ բերին նույնիսկ թուրքական զինվորների արտերում»<sup>2</sup>:

Այն ժամանակ, երբ օսմանյան կառավարությունը արևմտահայերին բնաջնջում էր իր հայրենիքում և նրա բեկորները դուրս շարտում իր պատմական օջախից, արևմտյան տերությունները հանդես էին գալիս միայն հանդիսատու անտարբեր

<sup>1</sup> Տե՛ս М. Макколы, Ответственность Англии... «Положение армян в Турции...» ժողովածուն, էջ 196—197):

<sup>2</sup> Նույն ժողովածուում, էջ 333:

գետոզի դերում: Ընդհատ է, նրանցից մի քանիսը Մասունի դեպքերի ընթացքում հանդես եկան «ամարդասիրական» կեղծ լոզունգներով և անգամ «սպառնացին» Թուրքիային, բայց դրանք ոչ մի արժեք չունեցան: Հետագայում եվրոպական պետությունները նահանջեցին անգամ այդ թույլ զիրքերից և իրենց քաղաքականությանը սկսեցին նպաստել սուլթանական կառավարությանն ու առգմա-ֆեոդալական վերնախավին՝ իրագործելու իրենց դիվային պլանը:

1890-ական թվականներին «հայկական հարցի» արծարծումը մի առիթ էր եվրոպական մեծ տերությունների համար՝ Թուրքիայից նորանոր զիջումներ կորզելու: Նրանցից յուրաքանչյուրը՝ ելնելով իր երկրի տիրապետող խավերի շահերից, սկսում է միջամտել գործին: Վերջնենք, օրինակ, ԱՄՆ-ը: Այդ տարիներին սուր հակամարտություն կար նրա և Թուրքիայի միջև՝ համաձայնագրերով ամերիկացիներին Թուրքիա մուտք գործելու և առևտրով, արդյունաբերությամբ ու այլ գործերով զբաղվելու, Թուրքիա ներմուծվող ամերիկյան ապրանքների մաքսի չափի և այլ հարցերի շուրջը<sup>1</sup>: Որպեսզի ահաբեկման միջոցով սուլթանին ու նրա կառավարությանն ստիպի զիջումներ անելու, ԱՄՆ-ը սկսեց խոսել հայկական հարցի մասին,

<sup>1</sup> Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850—1870 թթ., էջ 329:

բողոքել Սասունում և Թուրքիայի հայարնակ այլ վայրերում տեղի ունեցող կոտորածների դեմ: Այն ժամանակ ամերիկյան պետական բարձրաստիճան պաշտոնյաները և այլ անձինք մամուլում ու բանավոր ելույթներում սկսեցին խոսել հայերին օգնություն ցույց տալու մասին: Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Կլիվլենդը, ինչպես նշվում է «Մշակ» թերթի 1894 թվականի դեկտեմբերի 8-ի համարում, կոնգրեսի բացման ժամանակ արտասանած իր ճառում միջազգային հարցերի թվում հիշատակում է հայոց հարցը՝ իրեն ընթացիկ քաղաքական մեծ հարց և նշում, որ ամերիկյան կառավարությունը թույլ չի տա, որ «բանտարկվեն կամ հալածվեն հայերը»: Սակայն զրանից՝ որոշ ժամանակ անց նույն այդ Կլիվլենդը հրաժարվում է պաշտպանել անգամ ամերիկահպատակ այն հայերի կյանքը, որոնք այն ժամանակ գտնվում էին Թուրքիայում<sup>1</sup>: Դրա պատճառն այն էր, որ Աբդուլ Համիդը, հասկանալով ԱՄՆ-ի իսկական նպատակը, շուտով զիջումներ կատարեց վեճի առարկա դարձած հարցերում:

Ավելի երկդիմի էր Անգլիայի դիրքը: Նա, որ Ռուսաստանի ռիսերիմ թշնամին էր Մերձավոր և Միջին արևելքի շրջանում, սահմանափակվելով սուլթանին ուղղված միայն մի քանի աննշան վերջադրերով, հայերի համար պատմական այդահավոր տազնապի մեջ ըստ էության պաշտպանում

<sup>1</sup> Տե՛ս «Նոր դար» № 213, 1894, դեկտեմբերի 14:

էր սուլթանական Թուրքիայի ոճրագործ կառավարութանը ընդդեմ Ռուսաստանի և բոլոր հնարավորությունները օգտագործում էր՝ Մերձավոր և Միջին արևելքի երկրներում դառնալու բացարձակ իշխողն ու թեկադրողը: Անգլիական կառավարությունը և նրա ղեկավար լորդ դի՞զրանլին (Ռիկոնսֆիլդ) իրենց քաղաքականությունը նպատակ ունեին հայերին տրամադրելու ընդդեմ Ռուսաստանի՝ ի նպաստ Թուրքիայի, սնուցանելու հայերի մեջ սին պատրանքներ, օրորելով նրանց բրիտանական հովանավորության մեծամեծ խոստումներով:

1890-ական թվականներին Թուրքիայի արտաքին հարաբերությունների բնագավառում տեղի էին ունեցել որոշ փոփոխություններ: Թուրքիայում և Մերձավոր արևելքում սկսել էր լուրջ ազդեցություն ձեռք բերել Գերմանիան: Նա դաշինքի մեջ էր մտնում սուլթանական Թուրքիայի հետ: Այդ դաշինքը վտանգ էր սպառնում Անգլիայի շահերին: Բացի այդ, հենց նույն ժամանակ խիստ կերպով սրվեց էին Անգլիայի և Թուրքիայի հարաբերությունները Եգիպտոսի հարցում: Իզուր չէ, որ ժամանակի թերթերից շատերը գրում էին, թե Անգլիան հրապարակ է հանել հայոց հարցը միայն նրա համար, որ զրանով իր ուզած ընթացքը տա եգիպտական հարցին<sup>1</sup>: Անգլիական կառավարությունը հայերի օգտին իր միջամտությունը ուզում էր վախեցնել սուլթանին, ստիպելով նրան

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 31, 1895, մարտի 16:

հաշտվել Եգիպտոսի օկուպացման հետ և վերադառնալ անգլիական օրինատացիային<sup>1</sup>։ Եվ իրոք, Թուրքիայից ստանալով զիջումներ, Անգլիան նահանջեց և ի վերջո անցավ նրա կողմը։ Անգամ ունակցիոն «Նովոյի վրեժյա» օրաթերթը, որ թշնամական տոնով և միանգամայն սխալ կերպով պընդում էր, թե հայկական խնդիրը արհեստական միջոցներով մեծացվել է, իր № 6738-ի մի հոդվածում գրում էր, որ՝ առհասարակ քրիստոնյաներին ձնշող մահմեդականների հետ մեր ունեցած մըրցակցության ընթացքում Անգլիան գրեթե միշտ կիսալուսնի կողմն է եղել։ Իսկ այժմ ինչո՞ւ է նա այդպես փրփրել։ Այդ վարմունքը արդյո՞ք նրա համար չէ, որ ինքն ազատվի դժվար դրությունից և Հեռավոր արևելքում ազատ գործելու իրավունք ձեռք բերի։

Անգլիայի այդ քաղաքականությունը նշավակում էին անգամ իրենք՝ անգլիացիները։ Լորդ Շերրբուրկը իր մի ճառում ասում է՝ Անգլիայի քաղաքականությունը Թուրքիայի քրիստոնյաների առաջ փակեց դժողբից դուրս գալու բոլոր ճանապարհները<sup>2</sup>։ Անգլիայի հայակործան այդ քաղաքականությունը ժամանակին քննադատել են շատերը։ Նրանցից մեկը՝ Օլգա Նովիկովան, «Վեստմինստեր գազետ» թերթում տպագրում է մի հոդ-

<sup>1</sup> Տե՛ս «История дипломатии», т. II, Москва, 1963, стр. 334.

<sup>2</sup> Տե՛ս Ան, «Գլադստոն», Թիֆլիս, 1899, էջ 201։

ված, որի մեջ այդ արյունահեղ անցքերի պատասխանատվությունը (որոնց զոհ դարձան Թուրքիայի հայերը) դնում է բացառապես Անգլիայի վրա։ Ո՞վ էր, գրում է նա, եթե ոչ Անգլիան, որը բանդեց Սան-Ստեֆանոյի դաշնագրով ստեղծվող իրական ապահովությունները և փոխարինեց դրանք Բեռլինի դաշնագրի և Կիպրոսի պայմանագրի երազական որոշումներով<sup>1</sup>։ Իսկ Մ. Մակբուլը Անգլո-հայկական ընկերությունը կոնդոնում կայացած միտինգում նշում էր. «Անգլիան զրկեց թուրքահայտակ քրիստոնյաներին Ռուսաստանի հովանավորությունից, իսկ ինքը նրանց համար ոչինչ չարեց»<sup>2</sup>։ Հայերի նկատմամբ Անգլիայի այդ քաղաքականությունը լավ են բնորոշում Պրեմիեր-մինիստր Սոլսբերիի այն խոսքերը, թե Անգլիան երբեք պարտավորություններ հանձն չի առել միայնակ գործելու հայերի օգտին, որ անգլիական նավերը չեն կարող բարձրանալ Փոքր Ասիայի լեռների վրա<sup>3</sup>։

Նույնպիսի գիծ էր տանում նաև Ֆրանսիան։ Հայերի նկատմամբ Ֆրանսիական կառավարության վարած քաղաքականության մասին Ֆրանսիա Պրեսանսեն ասում էր. «Ֆրանսիական հանրապետության դեսպանը իր ոստայնի մեջտեղը կծկված սարդի մը պես խալիֆային գործիք մը

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 143, 1894, դեկտեմբերի 10։

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 1895, հունվարի 19։

<sup>3</sup> Տե՛ս Ան, Գլադստոն, Թիֆլիս, 1899, էջ 243։

դարձած է: Դեպքանը անկե արտոնություններ, հանրային աշխատություններու ֆերմաններ, երկաթուղի, իրազեներ կիանդրե, և փոխարենը անոր պաշտպանը, անոր մեղսակիցը կդառնա:

Ահա թե ուր է հասել Ֆրանսան, ֆրանսական հանրապետությունը սուլթանի նկատմամբ: Ահավասիկ պտուղը այն քաղաքականության, որ հայկական սարսափներու դեմ պաշտոնական հանդիմանութեններն տարբեր բանով մը պատասխանեչ չուզեց»: Եվ այնուհետև ավելացնում էր. «Լավ գիտեմ, որ այս ստորացուցիչ դրության մեջ Ֆրանսիան մինակ չէ և ինքը միայնակ պատասխանատու չէ: Լավ գիտեմ, որ ամբողջ Եվրոպան... այս ժամուն Կ. Պոլսում ստորության մեջ կմրցի սուլթանից արտոնություններու ավարից իրեն համար ալ մի մաս ձեռք բերելու համար»<sup>1</sup>:

Թուրքիայում իր ուրույն շահերն ունեւր նաև ռուսական ցարիզմը, որի համար ձեռնտու չէր, որ Արևմտյան Հայաստանն անկախություն նվաճեր, որովհետև այն կարող էր ապագայում վտանգավոր լինել ցարիզմի համար, կարող էր անկախության ձգտումներ առաջացնել ռուսական տիրապետության տակ գտնվող Հայաստանի հայերի մեջ: Այդ մասին ռուսական գլխավոր շտաբի ռազմա-նստումնական կոմիտեի գրասենյակի ավագ գործավար, զնդապետ Ժիլինսկին որոշակիորեն

<sup>1</sup> «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին», Կ. Պոլիս, 1908, էջ 42—43:

գրում էր. «Հայաստանի ավտոնոմիայի ստեղծումը վտանգավոր է նաև Ռուսաստանի համար: Թուրքիային է պատկանում Հայաստանի միայն մի մասը, նրա մյուս մասը գտնվում է մեր սահմաններում... Եթե Հայաստանի մի մասը դառնա կիսանկախ, ապա մյուս, ռուսական մասը ևս կձգտի դեպի նա»<sup>1</sup>: Այդ միտքն ավելի որոշակիորեն է արտահայտել Ռուսաստանի այն ժամանակվա արտաքին գործերի մինիստր կոբանով-Ռոստովսկին, հայտարարելով, որ «Ես չեմ ուզում, որ թուրքական Հայաստանը դառնա երկրորդ Բուլղարիա, որպեսզի ռուսական հայերը շտրամադրվեն մեր հիմնարկությունների դեմ, որը կստեղծի հայկական ավտոնոմիան թուրքական պրոտեկտորատի տակ»: Ահա այս և մի քանի այլ հանգամանքներ նկատի ունենալով, ռուսական ցարիզմը, որի լծի տակ տնքում էին բազմաթիվ փոքր ազգեր ու ժողովուրդներ, ինչպես նաև ռուս աշխատավոր ժողովուրդը, ոչ միայն գործնական աջակցություն ցույց չէր տալիս՝ կանխելու արևմտահայերի նկատմամբ կիրառվող վայրագություններն ու եղեռնագործությունները, այլև պաշտպանում էր թուրքական կառավարությանը, հայտարարելով, որ ռեֆորմների կենսագործումը և արևմտահայերի նկատմամբ նրա ռեպրեսիաները միայն ու միայն Թուրքիայի ներքին իրավունքն է, և տերու-

<sup>1</sup> ЦГВИА, ф. 401, оп. 5/929, д. 3, л. 2.

Յյունները իրավունք չունեն որևէ, թեկուզ աննը-  
շան, ճնշում գործադրելու թուրքիայի վրա:

Այստեղ պետք է հիշել, որ ցարիզմի վարած  
այդ քաղաքականությանը թշնամարար էին տրա-  
մադրված ուս առաջավոր մարդիկ և ամբողջ աշ-  
խատավոր ժողովուրդը: Նրանք ողջունում էին  
արևմտահայերի արդարացի պայքարը և ուրախա-  
նում նրա հաջողություններով: Ուստի, անկախ  
ցարիզմի վարած ռեակցիոն այդ քաղաքականու-  
թյունից, ինչպես միշտ, այնպես էլ առանձնապես  
այս շրջանում հայ ժողովուրդը փրկության հույսը  
կապում էր Ռուսաստանի և ուս ժողովրդի հետ,  
նա գտնում էր, որ օսմանյան ջարդարարների  
ահավոր նրից ինքը կարող է փրկվել միայն ռու-  
սաստանի օգնությամբ: Եվ պատահական չէր, որ  
այդ շրջանում ինչպես արևմտահայերը, այնպես էլ  
արևելահայերը բազմաթիվ խնդրագրերով դիմում  
էին ամենայն հայոց կաթողիկոսին, որպեսզի նա  
հարց բարձրացնի ռուսական պետության առջև և  
խնդրի նրա օգնությունն ու պաշտպանությունը:

Արևմտահայերի աղատագրական շարժումների  
նկատմամբ միանգամայն թշնամական դիրք բռն-  
եց Գերմանիան: Նա, համառ պայքար տանելով  
Թուրքիայում իր ազդեցության ընդլայնման հա-  
մար, իրեն հայտարարեց Թուրքիայի և բոլոր  
մուսուլմանների բարեկամը: Դեռևս 1878 թվակա-  
նի Բեռլինի կոնգրեսի ժամանակ բացահայտ երե-  
վաց, որ իր նպատակներն իրագործելու համար

Գերմանիան անհրաժեշտության դեպքում կարող  
է ակտիվ կերպով աջակցել Թուրքիային: Այդ  
բանն ավելի որոշակիորեն դրսևորվեց 1894 թվա-  
կանի Սասունի ապստամբության և 1895—1896  
թվականների հայկական ջարդերի ժամանակ, երբ  
Գերմանիան հանդես եկավ ի պաշտպանությու-  
ն արյունարբու սուլթան Աբդուլ Համիդի ու նրա կա-  
ռավարության: Այդ մասին Ց. Նանսենը պատկե-  
րավոր կերպով գրում է. «... Կայսր Վիլհելմ II-ը  
1898 թվականին Կոստանդնուպոլսում բարեկամա-  
կան այց տվեց» Աբդուլ Համիդին, «... սեղմեց նրա  
արյունոտ ձեռքը, համբուրեց այտերը և իրեն հայ-  
տարարեց որպես իսլամի իսկական բարեկամ»<sup>1</sup>:

1890-ական թվականներին հայկական ջարդե-  
րի նկատմամբ եվրոպական պետությունների  
վարքագիծը ֆրանսիացի Ամիլյար Չիբրարին բը-  
նութագրում է այսպես. «Հայկական հարցը եթե  
մեզի և բոլոր սրտի տեր մարդկանց համար վերին  
աստիճանի մարդասիրական հարց մը է... ար-  
ժանի ոչ միայն շահեկանության, այլև սիրո ու  
խորին զթության, այդպես չէր պաղ ու վայրագ  
քաղաքագետներուն համար, որոնք կկառավարեն  
այսօր եվրոպան: (18)94—(18)96 (թվականներ)-ի  
զարհուրելի, անլուր, խուժ, տմարդի և եղեռնային  
կոտորածները, որոնք հուլեցին արար աշխարհը,  
սառն ու անտարբեր ձգեցին զանոնք»:

Չեր տագնապալից հիշերուն, խողխողվածներու

1 F. Nansen, Armenia and The Near, East, էջ 293:

հռնդյուններուն, հալածանքներուն ու բանտարկ-  
վածներուն լաց ու կոծանքին վրա, դահիճները  
նշանակութենէն զուրկ ծանուցագրեր զրկեցին, նա-  
խապես գիտնաչով, որ մարդասպան Արդու Հա-  
միդը կարևորութիւն անգամ պիտի չտա:

Ձեր արյունը անոնց երեսը ցայտեց, ձեր քա-  
ղաքները, տուները կրակի տրվեցան, անոնք տե-  
ղերնուն շերերացին, ձգեցին ձեզ, աշքերնուն առջև,  
որ փողոտեն, որովհետև ամենքն ալ Թուրքիան  
բաժանելու շար ցանկութիւն ունեին, բայց ամեն  
մեկը կ'ատածեր առյուծի բաժին ստանալ: Կարելի  
չէր աս, ու ժողովուրդի մը նահատակութիւնը  
կանհետանա հուսավրեպ, աշքածակութեան մը  
առջև...

Այո՛, Եվրոպան ձեր սպանիչին մեղսակիցը  
և... համերաշխ եղավ: Ան (Եվրոպան) նախադա-  
սեց ձեր արյունին մեջ թաթալ ձեռքեր ունենալ,  
բան ձեռք դպցնել գահու մը, նույնիսկ երբ այդ  
գահուն վրա կրազմեր գոհհիլ շարագործ մը,  
ավազակ մը, եղեռնագործ մը:

... Ողբերգական ըսպեի մը մեջ ան երեսի վրա  
ձգեց ձեզ, երբ թրքական յաթաղանը ձեզմեն հա-  
զարավորներ կ'մանգաղեր, թեև Եվրոպայի ժողո-  
վուրդները ձեզի հետ էին:

Եվրոպական կառավարութիւնները եթե երբեք  
ձեր պաշտպանութիւնը ձեռք առնեին, անպատ-

ճառ ազատութեան միջոցով ստրկութիւն պիտի  
բերեին ձեզ»<sup>1</sup>:

Խոսելով հայկական ջարդերի մասին, նշանա-  
վոր սոցիալիստ Ժան Ժորեսը 1897 թվականին  
մարգարեաբար գրում էր. «Մտատանջող ու ար-  
դեն շարագուշակ համբաւները կարծեք նոր ջար-  
դեր կ'գուժեն Հայաստանին մեջ: Կարմիր խենթու-  
թիւնը կարծեք նորեն կ'մտտենա: Եվրոպան այս  
անգամ ալ արդյոք պիտի թույլ տա ջարդ: Ան  
արդեն մեծ ոճիր գործեց, զոհելով ամբողջ ազգա-  
բնակչութիւն մը սուլթանին մոլեգին սարսափնե-  
րուն և դիվանագիտութեան դավերուն: Բայց ոճիրը  
այս անգամ ավելի մեծ պիտի ըլլա, քանի որ Եվ-  
րոպան ահռելի փորձառութեամբ ազդարարված է  
այն հետեանքներու մասին, որոնց կհանգին անոր  
երկպառակութիւնները, մրցումներն ու հաշիվ-  
ները»<sup>2</sup>:

Եվրոպական պետութիւնների, առանձնապես  
Անգլիայի, այդ քաղաքականութեան մասին է խո-  
սում նաև Սվազի վալիի 1895 թվականի հունիսի  
սկզբներին արած այն հայտարարութիւնը, ուր  
ասվում էր.

«Դուք, հայերդ, հանդիստ կացեք, իզուր տեղը

<sup>1</sup> «Եվրոպացիների կարծիքը հայկական դատի մասին»,  
էջ 6—7:  
<sup>2</sup> նույն տեղը, էջ 14:

մեծ-մեծ հույսեր մի դրեք Անգլիայի կամ ուրիշ-  
 ների վրա: Մենք արդեն գիտենք Եվրոպայի հետ  
 վարվելու եղանակը: Եթե հարկավոր լինի Անգլիա-  
 յին էլի մի բան կտանք, ինչպես 1878 թվականին  
 տվեցինք Կլարոսը, և այն ժամանակ ձեր բոլորիդ  
 հոգին կհանենք»<sup>1</sup>:

Այսպիսին էր եվրոպական պետությունների  
 դիրքն ու վարած քաղաքականությունն արևմտա-  
 հայերի նկատմամբ XIX դարի 90-ական թվական-  
 ներին, որոնք շատ վարպետորեն օգտագործեցին  
 սուլթան Աբդուլ Համիդն ու թուրքական կառավա-  
 րությունը և արյան մեջ խեղդեցին Սասունի ու  
 Արևմտյան Հայաստանի այլ շրջաններում ծագած  
 ազատագրական ելույթները:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը XIX դարի վերջին քառորդում	
Սուլթանական կառավարության տնտեսական և ազգային դատան քաղաքականությունը . . .	3
1890—1894 թվականներին Սասունում ծավալված շար- ժումները	29
1. Սասունի վարչա-տերիտորիալ բաժանումը . . .	
2. Երկու խոսք Սասունի բնակչության ու պատ- մական անցյալի մասին . . . . .	34
3. 1890—1893 թվականներին Սասունում և նրա մերձակա շրջաններում տեղի ունեցած շար- ժումները . . . . .	44
4. 1894 թվականի Սասունի ապստամբությունը . Հայկական վիլայերների բաբեճորգումների խեղիքը և սուլթանական պետության բիրտ ուժի ցուցադր- ումը . . . . .	77 138

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ» № 67, 1895, հուլիս 13:

Թառոյան Կնյազ Ջահրաբի

Փողովրդական շարժումները Սասունում

Խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան  
Գեղ. Խմբագիր՝ Գ. Ա. Խուրիկյան  
Տեխ. Խմբագիր՝ Վ. Մ. Եզանյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Բ. Հ. Քաջախյան



ՎՖ 07290

Պատվեր 447

Տիրաժ 10 000

---

Հանձնված է արտադրության 10/III 1966 թ.:

Ստորագրված է տպագրության 9/VI 1966 թ.:

Թուղթ՝ տպագրական № 1, տեսակ 1,  $70 \times 90^{1/32}$  հրատ. 5,1  
մամ., տպ. 5,37 մամ. = 9,43 պայմ. մամ.:

Գինը՝ 11 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

---

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի  
պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության  
№ 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. 65: